

ՎՎ ՊԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԶՎԱՅԻՆ ԱԿՎԻԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՆԱՍՈ ՍՈՒԲԻԱՍՅԱՆ,  
ԳԵՂԱՄ ԲԱՂԱՅԱՆ

ՆԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՈՆԱԿՑՈՒՄԸ  
ԹՈՒՐԹԻԱՅԻՆ ԵՎ ԽՈՐհՐհԱՅԻՆ ԱՂԲԵԶԱՆԻՆ  
1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԵՐԵՎԱՆ 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐԵՆ ԽԱԶՍՏՐՅԱՆ, ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ,  
ԳԵՂԱՄ ԲԱԿԱՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՈՆԱԿՑՈՒՄԸ  
ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԱԴԻԲԵԶԱՆԻՆ  
1920-1930-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

6265

ՄԵՍՐՈՊ ԱՐՁ. ԱՇՁԵԱՆ  
ՄԱՏԵՆԱՇԱՐ  
206



*Arch. Mesrob Asimian*

ARCH. MESROB ASIMIAN  
BOOK SERIES  
206

ԵՐԵՎԱՆ - 2020

**Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի  
գիտական խորհրդի որոշմամբ:**

**Խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Կ.Հ. Խաչատրյան**

Խաչատրյան Կ.Հ., Սուքիասյան Հ.Կ., Բաղդասյան Գ.Մ.

**N 282 Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին / Կ.Հ. Խաչատրյան, Հ.Կ. Սուքիասյան, Գ.Մ. Բաղդասյան. - Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020. - 187 էջ - 1 ներդիր և 2 քարտեզ:**

*Ուսումնասիրության մեջ հարուստ փաստական հիմքի վրա լուսաբանվում է 1920-1930-ական թվականներին քննադական Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին բռնակցված հայկական տարածքների հիմնախնդիրը:*

*Աշխատանքը պարկերացում է գաղիս Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության սահմանների ձևավորման ընթացքի վերաբերյալ: Այն հավասարապես կարևոր և արդիական նշանակություն ունի ինչպես պարմագիտական, այնպես էլ քաղաքագիտական տեսանկյունից:*

*Գիրքը հասցեագրված է պարմագիտական, դիվանագետներին, քաղաքագետներին, ընթերցող լայն հասարակագրությանը:*

ՀՏԴ 93/94  
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860 96-1

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020  
© Հեղինակներ, 2020

**ԱՌԱՋԱԲԱՆ**

1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության Խորհրդայնացման արդյունքում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը (ՀՍԽՀ) ժառանգեց անորոշ պետական սահմաններ և տարածքային-սահմանային չլուծված խնդիրներ հարևան չորս պետություններից երեքի՝ քեմալական Թուրքիայի, Խորհրդային Ադրբեջանի և Վրացական Հանրապետության հետ: Բացառություն էր Իրանը, որի հետ սահմանային վեճեր չկային, հայ-իրանական պետական սահմանն էր Ռուսական նախկին կայսրության և Իրանի միջև 1914 թ. դրությամբ գոյություն ունեցող սահմանը:

Հայաստանի Հանրապետության (ՀՀ) կողմից 1918-1920 թթ. ստորագրված և ոչ մի միջազգային պայմանագրով (յինի դա՛ Բաթումի, Սևրի, կամ կնքման իսկ պահից իրավական ուժ չունեցող Ալեքսանդրապոլի պայմանագրերը) չեն որոշվել ՀՀ ամբողջական տարածքներն ու սահմանները. դրանցում նշվում էր միան հայ-թուրքական սահմանագիծը: Ինչ վերաբերում է Ադրբեջանի և Վրաստանի հետ հայկական պետության սահմանագատմանը, ապա թեև այդ ուղղությամբ 1918-1920 թթ. տարբեր ձևաչափերով քննարկումներ են ընթացել, սակայն կողմերի անզիջում դիրքորոշումների պատճառով վերջնական որոշումներ չեն կայացվել:

Քեմալական Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ հայկական պետականության տարածքների ու սահմանների

հստակեցման վերաբերյալ պայմանագրեր և համաձայնագրեր են ստորագրվել, որոշումներ կայացվել խորհրդային տարիներին: Դրանց արդյունքում հայկական երկու պետականությունները՝ Հայաստանի խորհրդային Հանրապետությունը (1920-1990) և Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը (ԼՂԻՄ, 1923-1991) էական տարածքային կորուստներ ունեցան: Ուստի՝ չափազանց կարևոր է 1920-1930-ական թվականներին քեմալական Թուրքիայի և խորհրդային Ադրբեջանի կողմից հայկական տարածքների յուրացման գործընթացի համակողմանի ուսումնասիրությունը:

Աշխատության մեջ ներկայացված է Հայաստանի և հայության նկատմամբ Թուրքիայի և Ադրբեջանի ռազմատենչ և թշնամական քաղաքականությունը, Հայաստանի Հանրապետության անկման և խորհրդայնացման գործընթացը, վերջինում խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան իշխանությունների քաղաքականությունը, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Թուրքիային ու խորհրդային Ադրբեջանին անցած հայկական տարածքների և խորհրդաթուրքական սահմանագատման, խորհրդային Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի ոչ օրինական բռնակցման խնդիրը, Անդրկովկասյան Դաշնության կենտրոնական գործադիր կոմիտեի և նրա տարբեր հանձնաժողովների կողմից հայկական սահմանային բնակավայրերին պատկանող տարածքներն ադրբեջանական սահմանակից շրջաններին կցելու գործընթացը և այլն:

Աշխատանքում առանձին գլխով ներկայացվում է ԼՂԻՄ-ի ձևավորման և խորհրդային Ադրբեջանի կողմից նրա սահման-

ներն ու վնաս հայկական կողմի «ճշգրտելու» և տարածքային զավթումների գործընթացը:

Շարադրանքի աղբյուրագիտական հիմքը կազմում են հիմնականում հեղինակների կողմից առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող արխիվային վավերագրերը: Ուսումնասիրության առաջնային նյութը Հայաստանի և Վրաստանի ազգային արխիվներում պահվող փաստաթղթերն են: Հայաստանի ազգային արխիվի ուսումնասիրված ֆոնդերից հատկապես արժեքավոր փաստաթղթեր են հայտնաբերվել ՀԱԱ թիվ 1 (ՀԿԿ Կենտկոմ), 112 (ՀԽՍՀ Կենտրոնական գործադիր կոմիտե), 113 (ՀՀ Կառավարություն), 114 (ՀՍԽՀ արտաքին գործերի կոմիսարիատ), 132 (ՀՍԽՀ բանվորագյուղացիական և կարմիր-բանակայինների պատգամավորների Զանգեզուրի գավառի գործադիր կոմիտե) ֆոնդերից: Դրանք Անդրկովկասյան Դաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահության, վերջինի ստեղծած Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գավառների ու շրջանների սահմանները որոշող հանձնաժողովների նիստերի արձանագրությունների ու որոշումների քաղվածքներ են, կուսակցական ու պաշտոնական գրություններ, գավառներից ուղարկված նամակ-դիմումներ, նաև քարտեզներ: Արխիվում հայտնաբերվել են նաև շուրջ երկու տասնյակ ուշագրավ, չափազանց արժեքավոր քարտեզներ, որոնք հնարավորություն են ընձեռում պարզորոշ տեսնել խորհրդային Հայաստանի սահմանների փոփոխությունները:

Թեմայի կատարման համար արժեքավոր արխիվային փաստաթղթեր են հայտնաբերվել Վրաստանի ազգային արխիվում (Թբիլիսի): Հիշատակության արժանի են թիվ 607 (Անդրկով-

պայան Դաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեի, ՍԷՀ (Անդրկովկասյան Դաշնության Միությանական խորհուրդ), Պ-617 (Անդրկովկասյան Դաշնության Ժողկոմխորհ) ֆոնդերից ունում-նասիրված վավերագրերը: Դրանք Անդրդաշնության Կենտգործ-կոմի նախագահության նիստերի արձանագրություններ ու որոշումներ են, դրանց կից մանրամասն զեկրացագրեր, Կենտգործ-կոմի հողային հանձնաժողովների նիստերի արձանագրություն-ներ, որոշումներ, պաշտոնական գրագրություններ, հանրապե-տություններից ուղարկված նամակ-դիմումներ, հաշվետվություն-ներ, քարտեզների հավաքածուներ և այլն:

Թեմայի ուսումնասիրման համար կարևոր են նաև Արցախի Հանրապետության (ԱՀ) պետական արխիվում (Ստեփանա-կերտ) պահվող վավերագրերը: Հատկապես կարևոր տեղեկու-թյուններ են պարունակում ֆոնդ 1 (ԼՂԻՄ մարզային գործադիր կոմիտեի) և ֆոնդ 250-ում (Ադրբեջանի կոմկուսի մարզային կոմի-տեի) առկա նյութերն ու քարտեզները:

Հետաքրքրական փաստեր և վկայություններ են առկա նաև հրատարակված փաստաթղթերի ժողովածուներում<sup>1</sup>, խորհրդա-յին տարիներին կազմված և հրատարակված քարտեզներում<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (բաղաձայն պատ-մություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությանը՝ Գ.Ա. Գալստյ-անի և Վ.Ն. Ղազարյանի, Երևան, 2000. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, составитель Ю. Барсегов, т. 1, Москва, 2002; т. 2, ч. 1, Москва, 2003; т. 2, ч. 2, Москва, 2005, Нагор-ный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В.А. Мяс-иселян, Ереван, 1992, Нагорный Карабах в международном праве и мировой полити-ке. документы и комментарий, составитель Ю. Барсегов, т. 1, Москва, 2008; т. 2, Москва, 2009, Հայաստանի պայքարը ԼՂԻՄ-ի խորհրդային Հայաստանի հետ միավոր-րելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ և խմբագիրներ՝ Վ. Խաչատրյան, Վ. Աբրահամյան, Երևան, 2011, К истории образования Нагорно-Карабахской Автономной области Азербайджанской ССР: 1918–1925: Документы и материалы, Баку, 1989 և այլն:

Հասկանալի է, խորհրդային տարիներին չէր խրախուսվում «եղբայրական ժողովուրդների բարեկամությունը խաթարող» թեմաների, այդ թվում՝ տարածքային վեճերի հիմնահանդրի ուսումնասիրումը: Հայաստանի անկախությունից ի վեր հայ պատմաբանները համակողմանի ուսումնասիրել են և արժեքա-վոր աշխատանքներ հրատարակել 1920–1921 թթ. հայկական տարածքների կորուստների վերաբերյալ (Մոսկվայի, Կարսի կոնֆերանսներ, ՌԿ(Զ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի որոշումներ և այլն)<sup>3</sup>, սակայն դեռևս հնարավորություն չեն ունեցել ուսումնասիրել մասնավորապես Անդրկովկասյան դաշնության օրոք (1922–1936 թթ.) խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստների հիմնահարցը: Ուսումնասիրողները միայն հարևանցի կերպով են անդրադարձել նշյալ խնդրին<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Большая Советская Энциклопедия (БСЭ), т. 1, 3, Москва, 1926, БСЭ, 2-ое изд., т. 1, Москва, 1949 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть I–II, Москва-Ленинград, 1928–1929, Хармавдариан С.В., Ленин и становление Закавказ-ской федерации 1921–1923 гг., Ереван, 1969, Չոքրայան Է.Ա., Սովետական Ռու-սաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920–1922 թթ.), Երևան, 1979, Խոսիմի Նախիբի անդան հիմնահարցը. 1920 թ. մայիս – 1921 թ. հոկտեմբեր, Երևան, 2010, Հայրությունյան Վ.Մ., Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, 1996, Փարսյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, Միմոնյան Ա.Ն., Չանգեզուրի գոյամարտը (1920–1921 թթ.), Երևան, 2000, Казан-ская Р.В., К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г., «Страны и народы Ближнего и Среднего Востока», том XX, Ереван, 2001, Խուր-ջախյան Լ.Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, Ղազարյան Վ.Ն., Հայաստանը 1920–1940 թվականներին, Երևան, 2006, Խաչատրյան Կ.Ն., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Երևան, 2007, Հակոբյան Ա.Մ., խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010, Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Սորազույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), Երևան, 2010 և այլն:

<sup>3</sup> Մասնավորապես տե՛ս Ղազարյան Վ.Ն., Սովետական Հայաստանի գյու-ղացիության պատմությունը 1920–1929 թթ., Երևան, 1975, Մկրտչյան Ե.Մ., Առնա-յին Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անստոմիան (1920–1988 թթ.), Ստեփանակերտ, 2003, Մահաբեյան Ա.Լ., Հայաստանը Անդրկովկասյան Դաշնության կազմում, Վանանթր, 2013, և: Գեմայի վերաբերյալ 1990-ական թվա-

Նշենք նաև, որ մեր կողմից ուսումնասիրվող թեմային միանգամայն այլ «դիտանկյունից» անդրադարձել են նաև արդրեջանցի պատմաբանները: Սակայն այդ աշխատանքներն առավելապես քարոզչական, հայտնի փաստերը գլխիվայր ներկայացնելու միտում ունեն: Նրանցից, թերևս, հիշատակության արժանի է Ի. Նիֆթալիևի մենագրությունը<sup>1</sup>: Չնայած այս աշխատանքը ևս զերծ չէ նշված միտումներից, այդուհանդերձ առանձնանում է այն իմաստով, որ շարադրված է արքայազատական լայն հենքի վրա: Հեղինակը շրջանառության մեջ է դրել 1920-ական թվականներին ՀՍԽՀ-ԱՍԽՀ սահմանային խնդիրների վերաբերյալ արդրեջանական արխիվներում պահվող մի շարք կարևոր փաստաթղթեր:

Հեղինակներն իրենց առջև խնդիր են դրել առանց քարոզչությանը տուրք տալու, պատմական փաստերին հավատարիմ շարադրել 1920-1930-ական թվականներին քեմալական Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին հայկական տարածքների բռնակցման խնդիրը:

կաններին լրագրային հոդվածներ են հրատարակվել «Հայաստանի Հանրապետություն», «Երկիր», «Ազատամարտ», «Աներևույթ», «Եզերը» և այլ պարբերականներում:

<sup>1</sup> Յե՛ս Ուֆտալև Ի., Азербайджанская ССР в экзистенциальных условиях (20-е годы XX века), Баку, 2010.

## ԳԼՈՒԽ ԱՌԱԶԻՆ

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐԾԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (1920–1922 ԹԹ.)

#### 1.1. Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը

Ռուսաստանում 1917 թվականին միապետության անկումից հետո կայսրության փլուզման գործընթացը տարածվեց դեպի ծայրամասային շրջանները, այդ թվում՝ Անդրկովկաս (ԽՍՀՄ փլուզումից հետո տարածաշրջանը նշվում է նաև որպես «Հարավային Կովկաս»): 1918 թ. ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան սեյմը երկրամասը հայտարարեց Ռուսաստանից անկախ դաշնային հանրապետություն, իսկ արդեն մայիսի վերջին այստեղ հոչակվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ պետությունները՝ անորոշ տարածքներով ու սահմաններով:

Ռուսաստանը, սակայն, ցարական թե խորհրդային, չէր կարող հաշտվել ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող անդրկովկասյան տարածաշրջանի կորստի հետ, մի տարածաշրջանի, որին տիրապետելու համար դեռևս XVIII դարից սկսած վճռական քայլեր էր գործադրել:

...հաստատանի վնասորդական մասերում խորհրդային իշխանությունն ամրապնդելուց հետո բոլշևիկյան վարչակարգը ձեռնամուխ եղավ նախկին կայսրության տարածքները, այդ թվում Անդրկովկասը, սեփական ազդեցության ոլորտը վերադարձնելու գործին: Հյուսիսային Կովկասը հակախորհրդային զորքերից մաքրելուց հետո խորհրդային 11-րդ կարմիր բանակը 1920 թ. գարնանն ընդհուպ մոտեցավ Անդրկովկասի սահմաններին: Այստեղ առաջինը 1920 թ. ապրիլի 28-ին խորհրդայնացվեց մուսավաթական Ադրբեջանը՝ խորհրդային Ռուսաստանի կողմից հայտարարվելով Արևելքում «հեղափոխության առաջամարտիկ», որտեղից բոլշևիկները «գրոհելու էին» վրաց մենշևիկների և հայ դաշնակցականների «ազգային բուրժուական հակահեղափոխական կառավարությունների վրա»: Եվ իրոք, դժվար չէր կրահել, որ «Ադրբեջանում հաստատվելուց հետո, - նշում է Ժամանակի հայ ազգային և պետական գործիչ Հովհաննես Բաջազյանին,- բոլշևիկների հետևյալ քայլը պիտի լիներ՝ մտնել նաև Վրաստան ու Հայաստան: Ժամանակի խնդիր էր սա»<sup>1</sup>:

Հայաստանը խորհրդայնացնելու հրատապ խնդիրը Մոսկվան առաջին հերթին կարևորում էր քեմալական Թուրքիայի հետ անմիջական հաղորդակցության ցամաքային կապ հաստատելու անհրաժեշտությամբ: Աստ բոլշևիկների՝ իմպերիալիստական Արևմուտքի դեմ պայքարում մեծ էր լինելու մուսուլմանական Արևելքի դերը, իսկ այստեղ արդեն՝ «առաջամարտիկ» պետք է հանդիսանար տարածաշրջանի «ամենազարգացած պետակա-

նությունը կրող» քեմալական Թուրքիան: Ուստի վերջինիս հարկավոր էր գեներ, զինամթերք, այլ օգնություն հասցնել:

1920 թ. ամռանը Մոսկվայում ընթացան հայ-ռուսական բանակցություններ, որոնք, սակայն, որևէ արդյունք չտալով ընդհատվեցին: Նման պայմաններում Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումն է փոխում Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային խորհրդային Հանրապետության (ՌՍԴԽՀ) կառավարության արտգործող կոմ Գեորգի Չիչերինը՝ խորհրդային ղեկավար գործիչներից թերևս միակը, որ փորձում էր զսպել Հայաստանի նկատմամբ Թուրքիայի, Ադրբեջանի և խորհրդային ազդեցիկ մի շարք գործիչների «հարձակողական քաղաքականությունը»: 1920 թ. հուլիսի 30-ին ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղաքական խորհուրդում «հատկապես գաղտնի» զեկուցագրում Գ. Չիչերինը նշում է. «Անհրաժեշտ է օգտվել ընկ. Սերգոյի (Գրիգորի Օրջոնիկիձե - *հեղ.*) ներկայությունից, որպեսզի լուծում ստանա Հայաստանի հարցը՝ կապված քեմալականների դրության հետ: Վերջիններս սպառազինության պակասի պատճառով մոտ են վախճանի: ...Նրանց սպառազինություն ուղարկել հնարավոր է միայն տարանցիկ ճանապարհով Հայաստանի վրայով: ...Ընկ. Սերգոյի խոսքերով՝ փորձել դաշնակներից Հայաստանի վրայով տարանցիկ ճանապարհի իրավունք ստանալ առանց որևէ վերահսկողության, ներկայումս անհնար է: Ընկ. Սերգոն պնդում է, որ Հայաստանի խորհրդայնացման համար պահանջվում են ոչ այնքան շատ զորամիավորումներ: ...Այդ դեպքում՝ Հայաստանի խորհրդայնացումը հույժ անհրաժեշտ է: Առանց դրա մենք չունենք իրական շփում Թուրքիայի հետ: Քեմալականների վախճանն ուժգին հարված կհասցնել մեր դիրքերին Արևելքում»:

<sup>1</sup> Орджоникидзе Г.К., Избранные статьи, Москва, 1957, с. 56.  
<sup>2</sup> Բաջազյանի Հ., Հ. Յ. Դաշնակցությունը անկից չափի պիս, Երևան, 1994, էջ 33:

Հաջորդ օրը՝ հուլիսի 31-ին, ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոն քննարկում է Հայաստանի վերաբերյալ Գ. Չիչերինի նշված առաջարկությունը և որոշում ընդունել այն՝:

Սակայն միջազգային իրադրությունը 1920 թ. ամռանն այնքան արագ էր փոփոխվում, որ Հայաստանը խորհրդայնացնելու որոշումը շուտով չեղյալ է համարվում: Օգոստոսի առաջին օրերին պատասխանելով խորհրդային կառավարության ղեկավար Վ. Լենինի՝ իրեն հասցեագրված հետևյալ երկտողին. «Ձեր կարծիքը: Հետաձգել Հայաստանի խորհրդայնացումը», ՌԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար և քաղբյուրոյի անդամ Ն.Կրեստինսկին նշում է, որ «Հայաստանի խորհրդայնացումը մենք արդեն հետաձգել ենք, հարկավոր է հետաձգել նաև Վրաստանի խորհրդայնացումը»<sup>2</sup>:

1920 թ. օգոստոսի սկզբին վերսկսված հայ-ռուսական բանակցությունները ավարտվում են օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված համաձայնագրով: Ռուսաստանը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը և լիակատար ինքնուրույնությունը, իրավական ձևակերպում էր ստանում խորհրդային զորքերի կողմից հայ-ադրբեջանական «վիճելի տարածքներ» համարվող Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի «ժամանակավոր» զինագրավման փաստը<sup>3</sup>: ՀՀ ղեկավարությունը ստիպված էր գնալ այս համաձայնագրի կնքմանը, քանի որ պետությունը կանգնած էր իր համար կործանարար հայ-

ռուսական պատերազմի վտանգի առաջ: Ուշագրավ է, որ հետագայում՝ 1920 թ. նոյեմբերի 1-ին, Հայաստանի պառլամենտի նիստում վարչապետ Հ. Օհանջանյանն այս ակտը անվանեց զինադադար<sup>4</sup>:

Համաձայնագրի ստորագրման կապակցությամբ օգոստոսի 23-ին Գ. Չիչերինը հեռագրում է Գ. Օրջոնիկիձեին. «Հաղորդում եմ Ձեզ ճշտորեն և անվերապահ ղեկավարվելու համար Հայաստանի վերաբերյալ Կենտկոմի հրահանգները. խորհրդայնացման որոշումը (նկատի ունի ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. հուլիսի 31-ի որոշումը – *հեղ.*) չեղյալ է հայտարարվել, անհրաժեշտ է խստորեն խուսափել Հայաստանի հետ ամեն տեսակի ռազմական ընդհարումներից»<sup>2</sup>:

1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը համընկավ նույն օրը Փարիզի արվարձան Սևրում Անտանտի ու նրա դաշնակից երկրների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) և սուլթանական Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագրի հետ:

Սևրի պայմանագրով սուլթանական կառավարությունը ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն: Թուրք-հայկական սահմանն անցնելու էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով: Սահմանի վերջնական որոշումը հանձնարարվում էր ԱՄՆ-ի նախագահին, իսկ կողմերը պարտավորվում էին ոչ միայն անվերապահ ընդունել միջնորդական իրավարար որոշումը, այլև համաձայնել բոլոր այն միջոցա-

<sup>1</sup> Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), միկրոֆիլմների հավաքածու (ՄՖՀ), № 1, գ. 2, ք. 74–75:

<sup>2</sup> Ленин В.И., Неизвестные документы. 1891–1922 гг., Москва, 1999, док. 241, с. 359.

<sup>3</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян. Ереван, 1992, с. 574–575.

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918–1920 թթ., Երևան, 2009, էջ 533:

<sup>2</sup> Казанджан Р., К предыстории самоопределения Нагорного Карабаха (с приложением новых документов), Москва, 1997, էջ 38:

ռումների հետ, որոնք կառաջարկվեն՝ Հայաստանին դեպի Ան-  
ձով ելք տալու և որոշվող սահմանագծին հարող օսմանյան ցան-  
կացած տարածքների ապառազմականացման վերաբերյալ:  
Թուրքական կողմը պարտավորվում էր իրավարար որոշման  
հրապարակման օրից հրաժարվել Հայաստանին հանձնված  
տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից: Աշենք, որ  
ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրա-  
վարար (արքիտորաժային) որոշման համաձայն Միացյալ Հայաս-  
տանը պետք է ստանար Վանի և Բիթլիսի նահանգների երկու  
երրորդը, Էրզրումի գրեթե ամբողջ նահանգը, Տրապիզոնի նա-  
հանգի մեծ մասը՝ ելք ունենալով դեպի Ան ձով: Ընդհանուր առ-  
մամբ այդ տարածքը կազմում էր մոտ 90 հազար քառ. կմ:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաս-  
տանի սահմաններին, ապա դրանք որոշվելու էին այդ պետույթ-  
յունների փոխհամաձայնությամբ, տարածայնությունների դեպ-  
քում սահմանագիծը նշելու էին գլխավոր դաշնակից տերություն-  
ները:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմում Ան-  
տանոյի և Օսմանյան կայսրության միջև պատերազմի արդյունք-  
ներն ամփոփող և միջազգային հարաբերությունների վերսալ-  
յան համակարգի մասը կազմող Ալրի պայմանագրով իր արդա-  
րացի լուծումն էր ստանում Հայկական հարցը՝ Արևմտյան Հա-  
յաստանի զգալի տարածքներ վերադարձվում էր իրական տիրո-  
ջը՝ հայերին: Ստեղծվում էր Միացյալ և անկախ հայկական պե-  
տություն, որի ընդհանուր տարածքը պետք է կազմեր ավելի քան  
160 հազար քառ. կմ (Արևելյան Հայաստանում հռչակված Հան-

րապետության տարածքը 1920 թ. կնքարվելու կազմում էր 20472 /  
հազար քառ. կմ):

Ինչպես Ալրի պայմանագիրը, այնպես էլ նրանից բխող  
ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար որոշումը հայ-թուրքա-  
կան սահմանի վերաբերյալ, թեև չիրագործվեցին, այդուհան-  
դերձ՝ դա Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի  
իրավունքների միջազգային ճանաչումն էր, փաստ, որն անհնար  
է ջնջել պատմության էջերից:

Թիֆլիսի համաձայնագրի և հատկապես Ալրի պայմա-  
նագրի հայանապաստ դրույթներն էլ ավելի բորբոքեցին քեմալա-  
կան թուրքերի և ադրբեջանցի կոմունիստների թշնամական քա-  
ղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Նրանք միասնա-  
կան ջանքերով Ռուսաստանի մայրաքաղաքում խորհրդային  
կառավարությանը դրդում էին համատեղ պայքար մղել Հայաս-  
տանի դեմ: 1920 թ. օգոստոսի 14-ին Բեքիր Սամի բեյի գլխավո-  
րած թուրքական պատվիրակությունը Մոսկվայում հանդիպում է  
Վ. Լենինի հետ, բողոքում Թիֆլիսի ռուս-հայկական համաձայ-  
նագրից, մասնավորապես, Նախիջևան-Շահթախթ երկաթուղու  
շահագործումը Հայաստանին թողնելու դրույթից: Թուրքերը հու-  
շում են, որ դա է «միակ հուսալի ճանապարհը», որով Ռուսաս-  
տանը կարող է գեներ և զինամթերք տեղափոխել քեմալականնե-  
րին, հակառակ դեպքում «իրենք կուլ կգնան Արևմուտքին»:  
Խորհրդային կառավարությունից թուրքերը պահանջում են «գո-  
նե բանավոր» համաձայնություն տալ Շահթախթ-Սարիղամիշ  
գիծն իրենց կողմից գրավելու համար՝ ռուսական և քեմալական  
բանակների միջև անմիջական շփում հաստատելու նպատակով:  
Թուրքական դիվանագիտական ճնշումներն ի վերջո ցանկալի

արդյունքը ԵՍ անպատկերաբար արշարարկներ հասնում են զգալի քանակությամբ խորհրդակցելուց հետո, արտագործող կոմ Գ. Չիչերինը խորհրդային կառավարության անունից դրական է արձագանքում թուրքերի պահանջին՝ պայմանով, որ նրանք նշված գիծը չանցնեն<sup>1</sup>:

Թուրքական կողմի նկրտումներն իրենց ձևակերպումներն են ստանում օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրած ռուս-թուրքական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագծում: Դրա տարբերակներից մեկի համաձայն՝ կողմերը պարտավորվում են «փոխադարձ համաձայնությամբ և կարճ ժամանակում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհները բացելու համար»<sup>2</sup>:

Քեմալաթյուզիկյան մերձեցումը, որ օգոստոսի 24-ի ռուս-թուրքական համաձայնություններից հետո նոր փուլ էր թևակոխել, առավել ամրապնդվեց 1920 թ. սեպտեմբերի 1-8-ը Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Համագումարի կողմից ընտրված Քարոզչության և գործողության խորհրդի նախագահությունը սեպտեմբերի 18-ին հավանություն է տալիս խորհրդի կողմից սեպտեմբերի 17-ին ներկայացված «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» զեկուցագրին, որը մշակվել էր հակահայկական գործունեությամբ հայտնի ՌՄԴԽՀ արտագործող կոմատի պատասխանատու աշխատակից Ա. Ակաչկոյի կողմից: Փաստաթղթում առաջին հերթին խիստ քննադատվում է 1920 թ. օգոստոսի 10-ի

<sup>1</sup> Армянский вопрос. Энциклопедия, под ред. К.С. Худявердяна, Ереван, 1991, с. 231-232.

<sup>2</sup> Նույն տեղում:

հայ-ռուսական համաձայնագիրը, այն դիտվում է որպես Ռուսաստանի «թուլության» նշան, ինչը կարող է ուժգին հարված հասցնել թուրք-ազգայնական (քեմալական) շարժմանը և խափանել Արևելքում համաշխարհային հեղափոխության զարգացումը: Դրանից խուսափելու համար առաջարկվում է գործողությունների հետևյալ ծրագիրը. հնարավոր բոլոր միջոցներով օգնել քեմալականներին, որպեսզի Հայաստանի վրա նրանց ռազմարշավի միջոցով լուծվի Հայաստանի խորհրդայնացման հարցը: Համաձայն ծրագրի՝ հաջորդ փուլում Ռուսաստանը պետք է քարոզչական «ահավոր աղմուկ բարձրացներ Եվրոպայում» և, «թուրք-հայկական նոր կոտորածները» կանխելու անհրաժեշտությունից ելնելով, որպես փրկարար ու հաշտարար մտներ Հայաստան և այնտեղ հաստատեր խորհրդային վարչակարգ՝ դրանով իսկ «փրկեր հայ ժողովուրդին»: Դավադիր այս փաստաթուղթը, որպես Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության «Եզրակացություն», սեպտեմբերի 19-ին ուղարկվում է Կոմինտերնի գործկոմի նախագահություն և ՌԿ(Բ)Կ կենտկոմ, պատճենը՝ խորհրդային Ռուսաստանի արտագործող կոմատի:

Պետք է ենթադրել, որ «Եզրակացություն» արժանացել է խորհրդային ամենաբարձր ղեկավարության հավանությանը, այլապես իհրոհ չափաչափել, որ նրա երևան գալուց ընդամենը մի քանի օր անց քեմալական Թուրքիան դավադրաբար, առանց պատերազմ հայտարարելու, լայնածառու ռուսական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ: Օրինաչափ...

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ Գ.Ա. Գալոյանի և Վ.Ն. Ղազարյանի, Երևան, 2000, վավ. 237, էջ 281-286, ՀԱԱ, ֆ. 133, ց. 3, գ. 7, թ. 1-3:

պությամբ»<sup>1</sup> 1920 թ. սեպտեմբերի 29-ին ՌԿ(Ք)Կ կենտկոմի պետումը որոշում է «Փողով և զենքով փաստացի օգնություն ցույց տալ քեմալականներին»<sup>2</sup>:

Թուրք-հայկական պատերազմի թեժ պահին՝ 1920 թ. հոկտեմբերի սկզբին, Վ. Լենինին ուղղված նամակում ՌՄԴԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը նշում է. «Գտնում են, որ թուրքերի առաջխաղացումը (Հայաստանի տարածքում – *հեղ.*) ջուր է լցնում մեզ ջրաղացին»<sup>3</sup>: Իսկ նույն թվականի նոյեմբերի վերջերին Մոսկվա՝ Գ. Չիչերինին (պատճենը՝ Վ. Լենինին) ուղղված հեռագրում խոսելով Վրաստանի հնարավոր խորհրդայնացման հարցի շուրջ, Ի. Ստալինը միանշանակ է արտահայտվում. «Տարբերակներից լավագույնը՝ Թուրքիայի հաջող պատերազմն է Վրաստանի հետ, ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա միջամտելու միջնորդի և փրկարարի կեցվածքով»<sup>4</sup>:

Այդ «տարբերակի» մասին Ի. Ստալինը հուշում է նաև Գ. Օրջոնիկիձեին: Նոյեմբերի 28-ին վերջինիս ուղղված նամակում նա նշում է. «Պետք է նրանց (քեմալականներին – *հեղ.*) հրահրել Վրաստանի դեմ, և փորձել՝ կգնան նրանք, արդյո՞ք, Վրաստանի դեմ»<sup>5</sup>: Իրադարձությունների հետագա զարգացումը հաստատում է, որ նշված «տարբերակը» խորհրդային ղեկավարության

կողմից լավագույնը մասնաշվեց Հայաստանը խորհրդայնացման քաղաքականության համար:

Այդուհանդերձ, թուրք-հայկական պատերազմում քեմալականների ռազմական շոշափելի հաջողություններն անհանգստացնում էին խորհրդային Ռուսաստանին: 1920 թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ(Ք)Կ կենտկոմի քաղցյուրոն որոշում է հաստատել ՌՄԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի առաջարկությունները Հայաստանի նկատմամբ խորհրդային քաղաքականության վերաբերյալ: Դրանք են. «1. Համաձայնել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի Կոմկոաի Կենտկոմի և ՌԿ(Ք)Կ Կենտկոմի կովկասյան քյուրդի կարծիքի հետ, 2. նրան քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար և 3. պաշտպանել նոր, խորհրդային կառավարությունը»<sup>6</sup>:

Քաղցյուրոյի այս որոշումը Հայաստանի առաջին Հանրապետության դատավճիռն էր, Հայաստանը պետք է խորհրդայնացվեր: Ուստի անիմաստ էին դառնում նրանում ընթացող հայոտական բանակցությունները (Բորիս Լեգրանի ղեկավարած ՌՄԴԽՀ պատվիրակությունը Երևան էր ժամանել հոկտեմբերի 11-ին) և դրանց արդյունքում հոկտեմբերի 28-ին Ռուսաստանի և Հայաստանի պատվիրակությունների կողմից նախատորոգրված «Եզրափակիչ որոշման արձանագրությունը» ու նրան

<sup>1</sup> ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գ. 2, թ. 106:

<sup>2</sup> Տե՛ս Казанджан Р., Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, «Страны и народы Ближнего и Среднего Востока», Ереван, 2002, вып. 21, էջ 105:

<sup>3</sup> ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գ. 2, թ. 142:

<sup>4</sup> Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն) ... վավ. 329, էջ 363:

<sup>5</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), կազմողներ՝ Չ.Ս. Կիրակոսյան, Ռ.Գ. Մախակյան, Երևան, 1972, էջ 456:

կրց «Հաշտության պայմանագրի» նախագիծը: Իրանը դատապարտված էին մնալու թղթի վրա, և մնացին, որովհետև արմատապես հանկուտում էին քաղաքային հոկտեմբերի 14-ի վերջնչված որոշմանը:

Նախաստորագրված հայ-ոռուսական փաստաթղթերը 1920 թ. նոյեմբերի 4-ին քննարկվեցին և մերժվեցին Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղաքային և ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի Բաքվում հրավիրված համատեղ նիստում: Վերջինիս մասնակցում էր նաև Ի. Ստալինը, որը ՌԿ(Բ)Կ կենտկոմի հատուկ հանձնարարականով և մեծ լիազորություններով հոկտեմբերի վերջերին ժամանել էր տարածաշրջան՝ «կովկասյան հարցերին» ծանոթանալու և հրատապ լուծումներ գտնելու համար: Խնդրի կապակցությամբ նոյեմբերի 16-ին Մոսկվա՝ Գ. Չիչերինին (պատճենը՝ Վ. Լենինին) հղած հեռագրում Ի. Ստալինը բացահայտում է իր դիրքորոշումը. հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախագծի մասին «խոսելն ավելորդ է, այն ետ է մնացել իրադարձություններից այնպես, ինչպես ետ է մնացել (Հայաստանի վրայով – **հեղ.**) տարանցման պահանջը»<sup>2</sup>:

Այո՛, Ի. Ստալինը իրավացի էր՝ մինչ Բ. Լեգրանը Բաքվում փորձում էր հավանության արժանացնել Հայաստանի հետ նախաստորագրած պայմանագիրը, թուրքական բանակը հոկտեմբերի 30-ին արդեն գրավել էր Կարսը:

Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի անհուսալի դրությունը Գ. Չիչերինին ստիպում է 1920 թ. նոյեմբերի 6-ին հեթոթական անգամ հեռագրել Ի. Ստալինին. «Անհրաժեշտ է

փրկել Հայաստանը նրա խորհրդայնացման գնով»: Գ. Չիչերինը հույս է հայտնում, որ եթե այնտեղ գոնե մեկ ոտա գինվոր լինի, թուրքերը չեն համարձակվի շարժվել Հայաստանի խորքերը<sup>1</sup>:

Նման վտանգը չէր բացառվում: Նոյեմբերի 8-ին, երբ թուրքական զորքերն արդեն գտնվում էին Ալեքսանդրապոլում (Գյումրի), քեմալական Թուրքիայի արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնյա Ահմեդ Մուխթարը հետևյալ դիմումն է՝ հղում քեմալական բանակի Արևելյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Քյազիմ Կարաբեքիրին. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մոտուլմանական մի հողատարածքի վրա, հետևապես՝ անհրաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստականորեն ոչնչացնել: Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադրությունն իրականացնելու համար»<sup>2</sup>: Ինչպես ասում են՝ բացատրություններն ավելորդ են, և միայն այս փաստը բավարար է արձանագրելու համար, որ միանշանակ չեն այն պնդումները, թե թուրքերը, միևնույնն է՝ լինելով թե չլինելով խորհրդային Ռուսաստանի գործոնը, խնայելու էին Հայաստանը՝ այն սահմաններում, որ գծվել էին Բաթումում, իսկ այնուհետև նաև Ալեքսանդրապոլում:

1920 թ. նոյեմբերի 11-ին խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հանդես էր եկել հայտարարությամբ, ուր պատրաստակամություն էր հայտնել միջնորդի դեր ստանձնել պատերազմող կողմերի միջև և այդ նպատակով «ռազմական գործողութ

<sup>1</sup> Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)... վրա, 273, էջ 316–320:

<sup>2</sup> ՀԱՄԿ, ՄԺՀ, № 1, գ. 2, թ. 139:

<sup>1</sup> Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 346–347:

<sup>2</sup> Մարգարյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան–Ռուսաստան–Թուրքիա, Երևան, 1994, էջ 170–171:

յունների շրջան ուղարկել իր լիազոր ներկայացուցիչ Ադիվանին»<sup>1</sup>: ժամանելով տարածաշրջան՝ Պ. (Բուդո) Ադիվանին նախ այցելում է Կարս և հանդիպումներ ունենում Կարաբեքիրի հետ, իսկ այնուհետև՝ Երևան: Այստեղ, Հայաստանի Հանրապետությունում խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ միասին, նա նոյեմբերի 19-ին հանդիպում է վարչապետ Համո Օհանջանյանի և գլխավորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Բանակցությունների ընթացքում Ռուսաստանի ներկայացուցիչները նշում են, որ խորհրդային ղեկավարության միջնորդությունը կարող է իրական արդյունքներ տալ միայն Հայաստանում ուսական բանակի առկայության պայմաններում, և որ քննալականները «Հայաստանի համար Ռուսաստանի հետ չեն պատերազմի»: Ադիվանին ավելացնում է նաև, որ «Հարկավոր է դա վերջապես գիտակցել և անմիջապես ընդունել խորհրդայնացումը», այդ դեպքում՝ հայ ժողովուրդը կփրկվի «վերջնական ոչնչացումից»<sup>2</sup>:

Քննալական զորքերի հաղթարշավը Հայաստանի տարածքով շարունակում էր անհանգստացնել խորհրդային իշխանություններին: Նրանց մոտ դեռևս մեծ էր այն մտավախությունը, որ «թուրքերը խորամանկում են, հետապնդում սեփական նպատակները», - 1920 թ. նոյեմբերին այդ մասին Մոսկվա՝ Գ. Չիչերինին և Վ. Լենինին, հաղորդում էր Ի. Ստալինը: Վ. Լենինին ուղղված մեկ այլ հեռագրում Ի. Ստալինը հայտնում է, որ թուրքերի «ձգտումն է՝ ընդհանուր սահման ունենալ Ադրբեջանի հետ»<sup>3</sup>:

<sup>1</sup> Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, «Բաներ Հայաստանի արևիվների» (ԲՀԱ), Երևան, 1967, N 3, էջ 85-92:

<sup>2</sup> ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գ. 2, թ. 135, 130:

Բյուրաքանդությունների ևս մեկ գլխավորությունը կատարում էր Ի. Ստալինը: Օրջոնիկիձեն նոյեմբերի երկրորդ կեսին Ի. Ստալինին հայտնում է իր, ՀԿ(բ)Կ կենտկոմի և Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիման Նարիմանովի՝ ընդհանուր կարծիքը. «Այլևս չսպասել և անմիջապես սեպտեմբերի խրվել (թուրքերի և Ադրբեջանի միջև - *հեղ.*)»: Օրջոնիկիձեն նշում է նաև, որ դա «միաժամանակ կարագացնի հաջորդ գործողության (խոսքը հավանաբար Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացման մասին է - *հեղ.*) նախապատրաստումը»: Գ. Օրջոնիկիձեի կողմից առաջ քաշված ծրագրին ծանոթանալուց հետո Ի. Ստալինը խորհուրդ է տալիս նրան «դեռ մի փոքր հետաձգել» և սկսել «այն պահին, երբ մենք հնարավորություն կունենանք իրականացնել առաջին ու նրանից անմիջապես հետո և երկրորդ գործողությունը»: Հրահանգ տալով Օրջոնիկիձեին՝ «Առայժմ պատրաստել հեղկոմը (Հայաստանի - *հեղ.*), որպեսզի այն գտնվի զույգերում», Ի. Ստալինը հուշում է, որ պետք է խորհրդակցի «ձերուկի (Վ. Լենինի - *հեղ.*) հետ»<sup>1</sup>:

Գ. Օրջոնիկիձեի հետ զրույցի բովանդակության մասին անմիջապես հաղորդելով Մոսկվա՝ Վ. Լենինին, Ի. Ստալինը հայտնում է նաև, որ անձամբ շատ հարցերում «միանգամայն համաձայն է Օրջոնիկիձեի հետ»: Վ. Լենինին տեղեկացնելով, որ ներկայումս առավել վտանգավոր է համարում այն փաստը, որ քննալականները «ձգտում են ընդհանուր սահման ունենալ Ադրբեջանի հետ», Ի. Ստալինը դարձյալ առաջարկում է հետաձգել Հայաստանը խորհրդայնացնելու գործողությունը և սկսել այն պահին, երբ հնարավորություն կստեղծվի ռազմական ուժեր կուտա-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում, թ. 144-147:

վել նաև «կրաստանը սահմանակից» Ալբանիայից, Ի. Ստալինը կարծում է նաև, որ «արժե, միգուցե, հանդգնել և գործողությունն իրականացնել անհապաղ»: Խոսափելով որոշում ընդունելու ողջ պատասխանատվությունից՝ Վ. Լենինն առաջարկում է հարցը քննարկել քաղքյուրոյում, միաժամանակ առաջարկում Ի. Ստալինին. կամ գործել իրեն՝ Ստալինին, տրված լիազորությունների հիման վրա, կամ էլ՝ վերադառնալ Մոսկվա՝ «Կովկասյան հարցն ամբողջությամբ լուծելու համար»: Ի. Ստալինը նախընտրում է վերջին տարբերակը. Գ. Օրջոնիկիձեին տալով նախապատրաստական աշխատանք վարելու և Մոսկվայից կարգադրություններ սպասելու հանձնարարական, նա շտապում է Մոսկվա՝ քաղքյուրոյի նիստին մասնակցելու նպատակով<sup>1</sup>:

1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿ(ք)Կ կենտկոմի քաղքյուրոյում Ի. Ստալինը հանդես է գալիս Կովկասի դրության մասին ընդարձակ զեկուցումով: Նույն օրը քաղքյուրոյի կողմից ընդունված որոշման մեջ, որի նախագիծը պատրաստել էր նիստը նախագահող Վ. Լենինը, նշվեց. «Ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ Պարսկաստանի վրա արշավելու խնդիր չընել»<sup>2</sup>:

Պետք է նշել, որ քաղքյուրոյի որոշումն ուներ ավելի շուտ մարտավարական նշանակություն: Իսկ գործնականում, խորհրդային բարձրաստիճան ղեկավարությանը պետք է որ հայտնի լիներ, որ արդեն նոյեմբերի 25-ին խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի և Հայաստանի հեղկոմի միջև ձեռք բերված համաձայնությամբ, կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար

րությանն առաջարկվել էր առանց հապաղելու դիվիզիայի 60-րդ բրիգադան շարժել դեպի Դիլիջան, իսկ այնտեղից՝ Երևան<sup>3</sup>:

Ինչպես նշվեց, խորհրդային իշխանությունները խոսափում էին Կովկասում մեծածավալ ռազմական գործողությունների մեջ ներքաշվելուց, ուստի՝ ձգտելով տնավորություն ստեղծել, թե Հայաստանը խորհրդայնացվում է միմիայն հայ ժողովրդի ցանկությամբ և Հայհեղկոմի ուժերով, վերջինիս տրամադրության տակ դրվեց ռուսական կարմիր բանակի շարքերից առանձնացված «Հատուկ խնդիր հետապնդող գունդ (Հայկական)»... քաղաքական վերջին հրահանգների համաձայն օգտագործելու համար»<sup>4</sup>:

1920 թ. նոյեմբերի 29-ին «Հատուկ գնդի» ուղեկցությամբ ՌԿ(ք)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի կողմից կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, բուլնիկյան հայտնի գործիչ Սարգիս Կասյանի նախագահությամբ, Ադրբեջանից (Ղազախից) մտնում է Իջևան և «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ» երկիրը հռչակում խորհրդային հանրապետություն<sup>5</sup>:

Տարիներ շարունակ այսպես էր փաստագրում Հայաստանի խորհրդայնացումը խորհրդային պատմագրությունը: Իրականում՝ Հայաստանը հռչակվում էր խորհրդային ոչ թե «ժողովրդի կամքով ու ցանկությամբ», և իբր թե նրա կողմից բարձրացված ապստամբության, այլ՝ միայն Հայաստանի կոմունիստական կու-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 148–151:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1445, ց. 1, գ. 6, թ. 1:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 8, գ. 330, թ. 1:

<sup>4</sup> «Նոյեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի ժողովածու), խմբ. Ա. Մնացականյան, Երևան, 1960, էջ 400:

<sup>5</sup> «Նոյեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և կուրթիների ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Երևան, 1974, էջ 27:

«...ստանալու և հայտարարելու մասին»<sup>1</sup>։ Այսպիսով անբացակաս է Հայիեղկոմի անդամ Ավիս Նորիջանյանի նույնքերի 30-ի հեռագիրը Գ. Օրջոնիկիձեին։ «Մեր ժամանելը (հեղկոմի և կարմիր բանակի մուտքը Հայաստան – հեղ.) միշտ ժամանակին էր, որովհետև կազմակերպված գյուղացիները հաջորդ օրը (նույնքերի 30-ին – հեղ.), մի խումբ ընկերների գլխավորությամբ, որոնց մենք նախօրոք ուղարկել էինք այդ շրջանում ծայրայ աշխատանքի, պետք է ապստամբեին»։ Ավիսը նշում է նաև, որ իրենք «Ամեն ինչ վերցնում են հաշվառման։ Ամեն ինչի համար վճարում», խորհուրդ է տալիս՝ «փողը և միջոցները չխնայել»<sup>2</sup>։

Մինչ Մոսկվան երկմտում էր՝ կարմիր բանակի մուտքը Հայաստան արտոնելու հարցում, Գ. Օրջոնիկիձեի կարգադրությամբ նրա զորամասերն արդեն շարժվում էին Հայաստանով։ Նույնքերի 30-ին Օրջոնիկիձեին հրահանգավորում է 13-րդ բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վելիկանովին. «Ձմռանաջ առաջ շարժվել դեպի Ղարաբաղիսա (Վանաձոր) և զբաղվել այն, եթե, իհարկե, քաղաքը չի գրավվում թուրքերի կողմից։ Մեր զորքերի հնարավոր հանդիպումը թուրքերի հետ կազմակերպեք հանդիսավորությամբ»<sup>3</sup>։

Պարզ չէ, թե ինչպիսի ընթացք և հետևանքներ կունենար Հայիեղկոմի և կարմիր բանակի ոչ արտոնյալ մուտքը Հայաստանի հյուսիսային շրջանները, եթե այդ նույն ժամանակ երևանում չլրջանային բանակցություններ հայկական իշխանությունների և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջև։ Դրանք Հայաստանը խորհրդային հռչակելու և իշխանությունն

օրինական ճանապարհով Ռազմիեղկոմին փոխանցելու վերաբերյալ էին։ Ձեռքին ունենալով Հայիեղկոմի և ռուսական զորքերի՝ Հայաստանում գտնվելու խաղաթուղթը՝ Բ. Լեգրանը շտապեց օգտագործել այն՝ հայկական իշխանություններին Հայաստանը խորհրդայնացնելու վերջնագիրն ընդունել տալու համար։

Նույնքերի 30-ին տեղեկանալով Բ. Լեգրանից, որ «Հայաստանի հեղկոմը ոտք է դրել Հայաստան և ձեռնարկել նրա խորհրդայնացումը», իսկ կարմիր բանակն էլ շարժվում է դեպի Երևան, հանրապետության կառավարությունը և Հայ հեղափոխական դաշնակցության քյուրոն դեկտեմբերի 1-ին ընդունում են վերջնագիրը և առաջադրում «որոշ պայմաններ»<sup>4</sup>։ Նախարարներ Դ. Կանայանը (Դրո) և Հ. Տերտերյանը լիազորվում են համապատասխան համաձայնագիր ստորագրել Ռուսաստանի կառավարության ներկայացուցչի հետ։

Ի կատարումն Հայաստանի կառավարության հանձնարարականի՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվում է «Համաձայնագիր ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցչի և Հայաստանի կառավարության միջև»։ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Հայաստանը հայտարարվում է «Սոցիալիստական խորհրդային անկախ Հանրապետություն», նախկին կառավարությունը հեռանում է իշխանությունից, մինչև Ռազմիեղկոմի ժամանումը Երևան այն անցնում է զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի և ՌՍԴԽՀ կոմիսար Օ. Սիլինի համատեղ գլխավորությամբ<sup>5</sup>։ Վերջիններս էլ, հիմք ընդունելով հայ-ռուսա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 367, թ. 1:  
<sup>2</sup> Նույն տեղում, թ. 3-4:

<sup>4</sup> Նույն տեղում, ց. 3, գ. 272, թ. 42, 44:  
<sup>5</sup> Сборник действующих договоров, Москва, 1922, № 79, с. 14-15. См'у նաև՝ Жлючников Ю., Сабинин А., Международная политика новейшего времени в договорах, нотях и декларациях, часть 3, Москва, 1928, с. 75-76.

կան համաձայնագիրը, նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին, ստորագրում են «Հրաման Հայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին» փաստաթուղթը:

Այսպիսով, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով և դրան հետևած «Հրամանով» Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն: Հայոց պետականության պատմության մեջ Հայաստանի առաջին Հանրապետությունն իր տեղը զիջեց Հայաստանի երկրորդ՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը:

Երևանի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումից և Հայաստանի խորհրդայնացումից մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի 3-ի գիշերը, այլևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված հայկական պատվիրակությունը նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ Ալեքսանդրապոլում ստորագրում է հայ-թուրքական հաշտության պայմանագիր: Պայմանագրի համաձայն պետությունների սահմանն անցնելու էր Արփաչայ և Արաքս գետերի հունով, Հայաստանը կորցնում էր շուրջ 21.000 քառ. կմ տարածք. Կարսի մարզը և Սուրմալուի գավառը անցնում էին Թուրքիային, Նախիջևանը, Շարուրը և Շահթախթին հայտարարվում էին Թուրքիայի հովանավորության ներքո գտնվող տարածքներ, որտեղ հանրաքվեի միջոցով պետք է հաստատվեր հատուկ վարչություն: Կնքված պայմանագրով Հայաստանը զրկվում էր ընդհանուր պարտադիր զինվորական ծառայություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից, կրելու էր ներքին ինք-

նագոյությունը: Վերջին պայմանագրի արդյունքում խորհրդային իրավացիորեն նշում է խորհրդային պատմաբան Ն. Ռուբինշտեյնը, Ալեքսանդրապոլի «պայմանագիրն ակնառու կերպով բնութագրում էր Անդրկովկասում քեմալականների թալանչիական, զավթողական նկրտումները»<sup>2</sup>:

Այդուհանդերձ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրման իսկ պահից օրինական չէր և մնաց լույս որպես դիվանագիտական մի փաստաթուղթ՝ պատմաբանների և մասնագետների կողմից տարբեր մեկնաբանությունների և խիստ բացասական որակավորումների արժանանալու համար:

Այսպիսով, քեմալաքոլչեկյան ռազմաքաղաքական ուժգին ճնշումների տակ դադարեց գոյություն ունենալ Հայաստանի առաջին Հանրապետությունը: Ժամանակի միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում, Հայաստանի արևմտյան դաշնակիցների դաուսապարտելի անգործության, Խորհրդային Ռուսաստանի որդեգրում արևելյան քաղաքականության, որը հիմնված էր քեմալական Թուրքիայի հետ սերտ համագործակցության վրա, Խորհրդային Ադրբեջանի՝ թշնամական դիրքորոշման, պայմաններում, Հայաստանի խորհրդայնացումն իրոք որ «ժամանակի խնդիր էր»: Եթե այն իրականություն չդարձավ դեռևս 1920 թ. մայիսին, իրականացվեց նույնների վերջին – դեկտեմբերի սկզբին: Չիրականացվեք այդ ժամանակ՝ անկասկած, հայ ժողովրդի համար ավելի մեծ կորուստներով իրականություն կդառ-

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 683–687:

<sup>2</sup> Рубинштейн Н.Л., Внешняя политика Советского государства в 1921–1925 гг., Москва, 1953, с. 62.

«... որոշ սահմանակ առջ՝ նշվածը հղիոր՝ Ե պահպան անու ինք  
րածաշրջանում ռազմաքաղաքական իրադարձությունների հե-  
տագա ընթացքը՝ 1921 թ. փետրվարի վերջին՝ Վրաստանի Հան-  
րապետության, հուլիսի սկզբին՝ Զանգեզուրի և դրանով իսկ ամ-  
բողջ Անդրկովկասի խորհրդայնացումը:

## 1.2. ՀՍԽՀ տարածքն ըստ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի

Երևանում 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ռուսաստանի Սոցիա-  
լիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության  
(ՌՍԴԽՀ) լիազոր ներկայացուցչության և Հայաստանի Հանրա-  
պետության կառավարության միջև ստորագրված համաձայնա-  
գրով դադարեց գոյություն ունենալ Հայաստանի Առաջին Հան-  
րապետությունը, Հայաստանը հայտարարվեց «անկախ Սո-  
ցիալիստական Խորհրդային Հանրապետություն»<sup>1</sup>: Խորհրդայ-  
նացումից հետո մինչև 1922 թ. Անդրկովկասյան դաշնության և  
Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության  
(ԽՍՀՄ) կազմավորումը Խորհրդային Հայաստանն ուներ  
ինքնիշխան կարգավիճակ, պետականությունն արտահայտող  
խորհրդանիշներ, Սահմանադրություն և այլն: Երևանի համա-  
ձայնագրով «խաղաղ ճանապարհով խորհրդայնացած Հայաս-  
տանը դիտվում էր անկախ պետություն, - նշում է պրոֆեսոր Է.  
Հակոբյանը,- մանավանդ, որ նա հանդիսանում էր միջազգայնո-

րեն (դե ֆակտո և դե յուրե) ճանաչված Հայաստանի Հանրապե-  
տության իրավահաջորդը»<sup>2</sup>:

Դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը հետ-  
խորհրդային հայ պատմագիտության կողմից թեև արժանացել է  
քննախոյզ ուսումնասիրման և պատմաիրավական տարբեր  
գնահատականների<sup>3</sup>, այդուհանդերձ, մեր կարծիքով, հիմնավոր  
ուշադրության չի արժանացել այն փաստը, որ համաձայնագիրը  
հանդիսացավ անդրանիկ միջազգային փաստաթուղթը, որում  
նշված է հայկական մի շարք տարածքների՝ Հայաստանի Սո-  
ցիալիստական Խորհրդային Հանրապետությանն (ՀՍԽՀ)  
«անվիճելի կերպով» պատկանելու մասին:

ՀՍԽՀ կազմում «անվիճելի կերպով» մտնող տարածքները  
նշված են Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագրի 3-րդ հոդ-  
վածում, որով Ռուսաստանի կառավարությունն ընդունում էր, որ  
Խորհրդային Հայաստանին պատկանում են Երևանը նահանգն  
իր բոլոր գավառներով, Կարսի մարզի մի մասը, որը գինվորա-  
կան տեսակետից կապահովի երկաթուղու անվտանգությունը՝  
Զաջուր կայարանից մինչև Արաքս կայարանը, Ելիզավետպոլի  
նահանգի Զանգեզուրի գավառը և Ղազախի գավառի այն մասը,  
որի սահմանները որոշված են Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10-ի  
հայ-ռուսական համաձայնության շրջանակներում և Թիֆլիսի

<sup>1</sup> Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключенных РСФСР с иностранными государствами. Выпуск 3, Москва, 1922, № 79, с. 14-15.

<sup>1</sup> Հակոբյան Ա.Մ., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմա-  
նագրերում, Երևան, 2010, էջ 211:

<sup>2</sup> Տե՛ս Զոհրաբյան Է.Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերու-  
յունները, Երևան, 1997, Գալուսյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-  
1923 թթ., Երևան, 1999, Խուրջուռչյան Լ.Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվակա-  
նին, Երևան, 2002, Խաչատրյան Կ.Վ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-  
1922 թթ., Երևան, 2007, Հակոբյան Ա.Մ., և՛վ. աշխ.: Հմմտ. Հայոց պատմություն, Կ.  
IV, 4րդ ատաքին (Նորագույն մամանակաշրջան. 1918-1945 թթ.), Երևան, 2010, էջ  
283-286:

նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը (մինչև թուրք-հայկական պատերազմի սկիզբը)<sup>1</sup>:

Հայաստանում ՌՄԴԽՀ կառավարության լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեգրանը, ով խորհրդային կառավարության անունից ստորագրել էր դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, վերջինիս բովանդակության մասին նույն օրը Երևանից հեռագրում է ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի անդամ Գ. Օրջոնիկիձեին՝ հատուկ ընդգծելով համաձայնագրի հետք 3-րդ հոդվածը. «Ռուսաստանի խորհրդային կառավարության անունից հայտարարել եմ, որ Ռուսաստանը խորհրդային Հայաստանի կազմում անվերապահ ճանաչում է Երևանի նահանգը, Կարսի մարզի մի մասը..., Զանգեզուրի գավառը, Ղազախի գավառի մի մասը... և Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև թուրքական հարձակումը»<sup>2</sup>:

Երևանի համաձայնագիրը ստորագրվել էր տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական բարդ իրավիճակում, երբ խորհրդային Ռուսաստանն աշխատում էր ամեն գնով արագացնել Հայաստանի խորհրդայնացումը: Ուստի՝ հայկական կողմի հետ բանակցություններում Բ. Լեգրանը երբեմն գործում էր անձնական նախաձեռնությամբ, և, փորձելով անցկացնել «սեփական քաղաքականությունը» Հայաստանի հարցում, դուրս էր գալիս իրեն տրված իրավասությունների շրջանակներից: «Լեգրանի դրությունը հասկանալի է,- հայտնում էր Մոսկվա՝ Գ. Օրջոնի-

կիձնն,- նա չափից ավելին է խոստացել հայկական նախկին կառավարությանը»<sup>3</sup>:

Մյուս կողմից, ինչպես նշում է ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, «նման պայմաններում Հայաստանին արված տարածքային խոստումների մասին Լեգրանի հաղորդումը չհանդիպեց Մոսկվայի դիմադրությանը: Ի վերջո, թե՛ Լեգրանի կնքած համաձայնագիրը, թե՛ Բաքվի հռչակագիրը (նկատի ունի խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նոյեմբերի 30-ի հռչակագիրը, որով Զանգեզուրը և Նախիջևանը հայտարարվում էին Հայաստանի մասեր, իսկ Ղարաբաղի լեռնային մասին տրվում էր ինքնորոշման իրավունք – *հեղ.*) մարտավարական նշանակություն ունեին»<sup>2</sup>: Սա էր պատճառը, որ խորհրդային Ռուսաստանը գործնականում հետամուտ չեղավ դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ստանձնած պարտավորությունների, այդ թվում՝ տարածքային-սահմանային հարցի, կատարմանը: Դրան որոշակի նպաստում էր նաև Հայաստանի հեղկոմի քաղաքականությունը: Մարգիս Կասյանի գլխավորությամբ դեկտեմբերի 4-ին ժամանելով Երևան՝ հեղկոմը, փաստորեն, «անվավեր ճանաչեց» և «առ ոչինչ համարեց դեկտեմբերի 2-ի ակտը», - փաստում է իրադարձությունների ականատես և մասնակից, խորհրդային պետական-կուսակցական գործիչ Աշոտ Հովհաննիսյանը<sup>3</sup>: «Նման դեպքում,- նշում է Լ. Խուրշուդյանը,- Ռուսաստանը մեխանիկորեն իր վրայից օգրում էր Լեգրանի կողմից Հայաստանին տարածքային զիջումներ անելու խոստումների կատարման պար-

<sup>1</sup> Ա. Ա. Միլյոտապովների հավաքածու 1, գ. 2, թ. 183:

<sup>2</sup> Խուրշուդյան Լ. Ա., նշվ. աշխ., էջ 311:

<sup>3</sup> Հովհաննիսյան Ա., Համագային կրիզիսը, Երևան, 1926, էջ 26:

<sup>1</sup> Տե՛ս Сборник действующих договоров..., էջ 14-15:

<sup>2</sup> Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն)... էջ 385-386:

տավորությունը<sup>1</sup>։ Անգայն պատշ է նպատի ունենալ, որ Հայաստանի դիրքորոշումը «ղեկտեմբերի 2-ի ակտի» վերաբերյալ առաջվերապես պայմանավորված էր նրանով, որ հեղկոմը վճռական էր տրամադրված Հայաստանի խորհրդայնացման դափնիներն ամբողջությամբ իրեն վերագրելու հարցում, նաև չէր պատրաստվում իշխանությունը Հայաստանում կիսել որևէ քարաքական ուժի հետ, նամանավանդ՝ ՀՅԴ-ի, ՀՍԽՀ տարածքային-սահմանային խնդրին վերաբերող հայ-սուսական համաձայնագրի հողվածն այնքան էլ չէր հետաքրքրում Հայիեղկոմին։ Դեռևս ղեկտեմբերի 3-ին Բ. Լեզրանի հետ հեռագրազրույցում Ս. Կարյանը նշում էր, որ «ոչ թե Դրոն, այլ Հայաստանի հեղկոմն է Հայաստանը հռչակել անկախ սոցիալիստական խորհրդային հանրապետություն», և դրանից ելնելով՝ պետք է «անվավեր ճանաչվի և Ձեր համաձայնությունը Դրոյի հետ», Լեզրանը նույնպիսի վճռականությամբ Կարյանին հակադարձում էր, որ «դա ամենակին չի փոխում իրամիճակը և ոչ ոք հրավումք չունի չեղյալ դատարարելու իր կողմից ստորագրված համաձայնագիրը»<sup>2</sup>։

Այդուհանդերձ, անդրադառնանք այն խնդրին, թե ղեկտեմբերի 2-ի հայ-սուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով հայկական որ տարածքներն էին ընդգրկվելու նորաստեղծ խորհրդային հանրապետության կազմում և որքան էր կազմելու վերջինի ընդհանուր տարածքը։ Այն է՝ ՀՍԽՀ մաս էին հանդիսանում.

1. «Երևանի նահանգն՝ իր քոլոր գավառներով», այն է՝ շուրջ 26.400 քառ. կմ<sup>2</sup>։ Այս (նաև Զանգեզուրի գավառի) դեպքում կարծես որևէ անորոշություն չկա։

2. «Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառը», որը զբաղեցնում էր շուրջ 7673,4 քառ. կմ տարածք<sup>3</sup>։ Զանգեզուրի գավառը ներառում էր ժամանակակից Հայաստանի Հանրապետության Այոնիքի մարզը և Արցախի Հանրապետության (ԱՀ) Քաշաթաղի շրջանն ամբողջությամբ, Բերդաձորի (1920 թ.՝ Ղարաղշլաղ) ենթաշրջանը (այժմ՝ ԱՀ Շուշիի շրջանում), ինչպես նաև Մեծ Քիրս լեռնագագաթի (2725 մ) հարավ-արևմտյան ստորոտին ընկած «Ղուզնյի գյուղերը» (այժմ՝ ԱՀ Հաղրուզի շրջանում)<sup>4</sup>։

3. Երևանի համաձայնագրի «Կարսի մարզի մի մասը, որը գիևկորական տեսակետից կապահովի երկաթուղու անվտանգությունը՝ Զաջուռ կայարանից մինչև Արաքս կայարանը» սահմանումը բավական անորոշ ձևակերպում է։ Ուստի առկա քարտեզագրական նյութի վերլուծության միջոցով փորձենք պարզել Կարսի մարզի այն տարածքը, որը տեսականորեն կարող էր անցնել խորհրդային Հայաստանին։ Նկատի ունենալով, որ վե-

<sup>1</sup> Նահանգը կազմված էր 7 գավառից՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Նոր-Ջայազետի, Մուրճաբուի, Շարուր-Ղարաբաղապի և Նախիջևանի։

<sup>2</sup> Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», Тифлис, 1914, «Отдел статистический» (այսուհետև՝ ՕՇ) էջ 250, «Кавказский календарь на 1917 г.», Тифлис, 1916, ՕՇ, էջ 218։ Վարչական միավորների տարածքները տրված են հռոմալիան կայսրությունում ընդունված քառակուսի վերստեղծ, որոնք վերածվել ենք քառակուսի կիրմետրերի (1 քառ. վերստ = 1,138 քառ. կմ)։

<sup>3</sup> Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», ՕՇ, էջ 230, «Кавказский календарь на 1917 г.», ՕՇ, էջ 194։

<sup>4</sup> Այդ բնակավայրերը՝ Զարինգ (Արփազաղուկ), Մալիուակաշեն, Պեարուաշեն և Վաղամեր (Թեղխարար), համարվում են նշանավոր Հարար ավանի գյուղակ-գծադիրը։ Հարարը, 1918–1920 թթ. հայաթափվելով, հետագայում մտցվեց Լ.Ն.Մ-ի հարևան Լաչինի շրջանի մեջ (վերանվանվել էր Ներքին Ֆարաջան)։

<sup>1</sup> Խորհրդային Լ.Ա., նշվ. աշխ., էջ 312։

<sup>2</sup> ՀԱՄԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1154, թ. 1։

րոհիչյալ կայարանների միջև ձգվող երկաթգիծը գրեթե ամբողջությամբ անցնում էր Ախուրյան (1920 թ.<sup>1</sup> Արփաշայ) գետի երկայնքով, տրամաբանական է կարծել, որ ՀՄԽՀ համար նախատեսվող շրջանի մեջ պետք է ներառվեին նախկին Կարսի մարզի համանուն շրջանի (օկրուգ) Աղբաբայի, Ջարիշատի և Շորագյալի (Արևմտյան Շիրակ), ինչպես նաև Կաղզվանի շրջանի Նախիջևանի տեղամասերը: Նշված վարչամիավորները, ինչպես նշեցինք, ձգվում էին Ախուրյան գետի երկայնքով և դրանց ընդգրկումը ՀՄԽՀ կազմում կապահովեր այն ռազմավարական «խորությունը», որը հնարավոր կդարձներ Հայաստանի հյուսիսային շրջաններն Արարատյան դաշտի և Երևանի հետ կապող երկաթուղու անխափան և անվտանգ շահագործումը հայկական իշխանությունների կողմից: Աղբաբայի տեղամասը զբաղեցնում էր շուրջ 650 քառ. կմ տարածություն<sup>2</sup> ընդգրկելով Արփի (ճի ավազանն ու Ախուրյանի ակունքների շրջանը: Տեղամասը Կարսի մարզի միակ տարածքն էր, որ գրեթե ամբողջությամբ մնաց խորհրդային հանրապետության կազմում (այժմ՝ ՀՀ Շիրակի մարզի Ամասիայի տարածաշրջան): Ջարիշատի տեղամասը, որն ընկած էր Աղբաբայից հարավ, զբաղեցնում էր շուրջ 1256,5 քառ. կմ տարածություն, իսկ Շորագյալը ներառում էր պատմական Անիի շրջանը՝ մինչև Կարսագետի և Ախուրյանի միախառն-

ման վայրը՝ զբաղեցնելով շուրջ 1151,4 քառ. կմ տարածություն: Ինչ վերաբերում է 4-րդ՝ Կաղզվանի շրջանի Նախիջևանի տեղամասին (պատմական Շիրակի հարավ-արևմտյան հատվածը), ապա այն Անիի հարավային մասույցներից ձգվում էր մինչև Սուրմալուի գավառի վարչական սահմանը՝ զբաղեցնելով շուրջ 1359 քառ. կմ տարածություն<sup>3</sup>: Այսպիսով՝ Կարսի մարզից ՀՄԽՀ-ին անցնող տարածքը կազմելու էր շուրջ 4417 քառ. կմ, ինչը նախկին մարզի (տարածքը՝ 18738,5 քառ. կմ) գրեթե 1/4 մասն էր<sup>4</sup>: Այս կապակցությամբ նշենք նաև, որ վաստակաշատ գիտնական, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Բ. Հարությունյանը խնդրին առնչվող իր բոլոր քարտեզներում ՀՄԽՀ-ին անցնող վերոհիշյալ տեղամասերի հետ միասին ներառել է նաև Կարսի մարզի Արդահանի շրջանի Չլդըրի տեղամասը<sup>5</sup>, որը կազմում էր շուրջ 1095 քառ. կմ<sup>6</sup>: Այս վարչամիավորը, տարածվելով մինչև Թիֆլիսի նահանգի Ախալքալաքի գավառի հարավային սահմանագլուխը, խիստ հեռու էր ընկած, որպեսզի ուղղակի վտանգ ներկայացներ հայկական երկաթուղու համար: Ուստի՝ կարծում ենք, որ Չլդըրի տեղամասի ընդգրկվելը ՀՄԽՀ-ին Կարսի մարզից հատկացվելիք տարածքների մեջ այնքան էլ հիմնավորված չէ:

4. Երևանի համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ «Ղազախի գավառի մի մասը, որի սահմանները որոշված են օգոստոսի 10-ի

<sup>1</sup> Հաշվարկն ըստ՝ «Кавказский календарь на 1909 г.», СО, էջ 444: Ընկ որում, Ամասիայի տարածաշրջանը (նախկինում՝ շրջան) ուներ 608 քառ. կմ տարածք (ըստ՝ «Հայկական ՍՍՀ վարչատարածքային բաժանումը, առ 1 օգոստոսի 1988 թ.», Երևան, 1989, էջ 16): Փաստորեն, Երբեմնի Աղբաբայի տարածքի շուրջ 94 %-ն այժմ գտնվում է ՀՀ-ի կազմում: Ի դեպ, մեր հանրապետության կազմում է գտնվում մի փոքր մաս նաև Շորագյալի տեղամասից՝ սովեյի քան 74 քառ. կմ: Խոսքը Գյումրի քաղաքից արևմուտք ընկած Հայկաբան (նախկինում՝ Բաջողի), Ուկեհասկ (ն.՝ Մոլլա-Մուսա), Առափի (ն.՝ Օբախտայի), Ողջի (ն.՝ Օխչողի), ինչպես նաև մի փոքր հարավ-արևմուտքում գտնվող Ախուրիկի (ն.՝ Ղարսբիլիսա) գյուղերի մասին է:

<sup>1</sup> Հաշվարկն ըստ՝ «Кавказский календарь на 1909 г.», СО, էջ 444:

<sup>2</sup> Տե՛ս «Кавказский календарь на 1917 г.», СО, էջ 198:

<sup>3</sup> Տե՛ս, մասնավորապես, «Հայաստանի ազգային ատլաս», հատոր Բ, Երևան, 2008, էջ 113. «Հայաստանի ՄԽՀ սահմանների խնդիրը (1920–1921 թթ.)» քարտեզը (մ. 1:1700000): Հմմտ.՝ Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս (Գ մաս), Երևան, 2012, էջ 44. «Հայաստանի ՄԽՀ սահմանների խնդիրը (1920–1921 թթ.)» քարտեզը (մ. 1:2000000):

<sup>4</sup> Հաշվարկն ըստ՝ «Кавказский календарь на 1909 г.», СО, էջ 444:

համաձայնության շրջանակներում» ձևակերպումը նույնպես որոշակի լուսաբանման կարիք ունի: Նախ՝ հարկ է նշել, որ Թիֆլիսի 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրով, որը ռուսական կողմից ստորագրել էր Բ. Լեգրանը, իսկ հայկական կողմից՝ Ա. Ջամալյանն ու Ա. Բաբայանը, Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Հայաստանի Հանրապետության անկախությունը: Համաձայնագրով իրավական ձևակերպում էր ստանում ՌՄԴԽՀ զորքերի կողմից Ղարաբաղի, Ջանգեզուրի և Նախիջևանի «ժամանակավոր» զինագրավումը, որով Ռուսաստանը «ստեղծում է բարենպաստ պայմաններ Հայաստանի և Ադրբեջանի միջև տարածքային վեճերը խաղաղ կարգավորելու համար»: Մասնավորապես, ինչ վերաբերում էր Ղազախի գավառին, ապա կողմերը համաձայն էին, որ ՀՀ զորքերը մասն այն գծի վրա, որը նրանք զբաղեցնում էին հուլիսի 30-ի դրությամբ<sup>1</sup>: Փաստորեն, Խորհրդային կառավարությունը ճանաչում էր Ղազախի գավառի տարածքում՝ 1918–1920 թթ. ձևավորված հայադրբեջանական սահմանը:

Ղազախի գավառը (տարածքը՝ շուրջ 5800 քառ. կմ)<sup>2</sup>, որը մինչև 1918 թ. մտնում էր Ելիզավետպոլի նահանգի մեջ, ազգագրական առումով կազմված էր երկու՝ հայկական (արևմուտքն ու հարավը) և մահմեդական (արևելքն ու հյուսիսը) մասերից: Հայկականը, որը կազմում էր գավառի մեծ մասը, հիմնականում ընդգրկում էր ժամանակակից ՀՀ Տավուշի մարզի գրեթե ամ-

բողջ տարածքը (2007 քառ. կմ)<sup>3</sup>: Միաժամանակ ուղեկազմի հատվածի մեջ էին մտնում նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանի (և՛ Կրասնոսելսկի շրջան) Աղստև գետի Գետիկ վտակի հովտում ընկած հյուսիսային բնակավայրերը<sup>4</sup>՝ Ներառյալ շրջկենտրոնը, ինչպես նաև Արծվաշեն (1920 թ.՝ Բաշգյուղ կամ Բաշքենդ) ավանն իր շրջակայքով: Ընդ որում, ինչպես ցույց են տալիս փաստերը, վերջինիս հետ Առաջին Հանրապետության մաս են կազմել նաև Ախնջի գետակի (Տավուշի քաղաքը) ակունքների շրջանը և Կուրի մեջ թափվող Ասրիկաչայից արևմուտք ընկած տարածքը, որը ձգվում էր մինչև Տավուշի մարզի Բերդի տարածաշրջանի (և՛ Շամշադինի կամ Տավուշի շրջան) ձայր արևելյան սահմանագլուխը: Փաստորեն, 1918–1920 թվականներին այս հատվածում պահպանվել էր երբեմնի Ղազախի ու Ելիզավետպոլի գավառների վարչական սահմանագի-

<sup>1</sup> Տավուշի մարզի տարածքից դուրս էր մնում Կողբ գետակի (Կուրի վտակներից) և Աերդի միջև բարձրացող Բուզարաց լեռնաշղթայով ձգվող շրջանից արևմուտք ընկած փոքր հատվածը, որը, լինելով Թիֆլիսի նահանգի Բորչալուի գավառի կազմում, 1919 թ. մտցվել էր Լոռու շեզոք գոտու մեջ: Այս հատվածն ընդգրկում է ժամանակակից ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի տարածաշրջանի (նախկին շրջանը) Այրում քաղաքը և Բազումաշեն (1920 թ.՝ Լամբալու), Չորական (1920 թ.՝ Վերին Զյորիլու կամ Բերփիի), Լեկաձոր (Նջրաձոր), Արնիս, Ղեղձավան, Գեթետավան, Հաղթանակ, Պողոթյան գյուղերը՝ 117,35 քառ. կմ ընդհանուր մակերեսով (նաշվարկն ըստ՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման տեղեկատու», Երևան, 2012, էջ 101 (այսուհետ՝ Տեղեկատու):

<sup>2</sup> Եվզորդ չենք համարում ստորև ներկայացնելու այդ բնակավայրերի անունները (ժամանակակից և նախկին տարբերակներով), Ճամբարակ քաղաքը [(կազմված է երբեմնի Միխայրովկա, իսկ խորհրդային տարիներին՝ Կրասնոսելսկ (հայերի միջավայրում՝ Կարմիր) վերանվանված գյուղից, ինչպես նաև՝ Վերին և Ներքին Ճամբարակներից), Այգուռ (և՛ Գյոթենդ, ներառյալ՝ Ճալկուտ (և՛ Ջլոմիլու գյուղը), Անտառամեջ (և՛ Յանդղիպա, Մեշաքենդ), Յորախնդ (և՛ Ղարաղայա), Կարաբակ (և՛ Չայքենդ), Մարտունի, Գետիկ (և՛ Նոր Բաշգյուղ), Թթաշուր, Վահան (և՛ Ռուբենակերտ) գյուղական համայնքներն ամբողջությամբ, ինչպես նաև՝ Կալավանի (և՛ Ամրիներ) համայնքի հյուսիսային հատվածը, այդ թվում՝ Բարեպատ (և՛ Բարիարազ) գյուղը]:

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 574–575.

<sup>2</sup> «Кавказский календарь на 1915 г.», ОС, с. 230. Հմմտ. «Кавказский календарь на 1917 г.», ОС, էջ 194:

ծը: Մեր հաշվարկներով, վերը նշված սահմաններում, պայմանականորեն Ճամբարակի և Արծվաշենի անվանված ենթաշրջանները գրադեցնում էին ավելի քան 610 քառ. կմ տարածք, որից 356,4 քառ. կմ-ը բաժին էր ընկնում առաջինին<sup>2</sup>, իսկ 254 քառ. կմ-ը՝ երկրորդին<sup>3</sup>:

Վերջապես, Ղազախի գավառի հայկական հատվածի սահմանների ճշտագրումն համար հարկ է քննարկել ևս մի հողատարածքի հարցը, որը մեր հանրապետության համար ուներ (և առ այսօր ունի) ռազմավարական բացառիկ կարևորություն: Խոսքը ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյանի և Իջևանի տարածաշրջանների միջև սեպի նման խրված Ներքին Աքսիփարայի (թրք.՝ *Aşağı Aksipara*, աղավաղված հայկական Ոսկեպարից) ենթաշրջանի մասին է, որը համընկնում է նախկին Ղազախի գավառի երկրորդ ոստիկանական տեղամասի ութ թաթարաբնակ գյուղերից կազմված Աքսիփարայի (Аксипара) գյուղական հասարակությանը<sup>4</sup>: 1918–1920 թվականներին այս տարածքը նույնպես գտնվել է Հայաստանի Հանրապետության կազմում: Սա երևում է ՀՄԽՀ ներքին գործերի ժողկոմատի կողմից 1923 թ. մարտի 21-ին կառավարություն առաքված մի զեկուցագրից, ուր մասնավորապես նշված է. «Փաստացի սահմաններից Ադրբեջանը պահանջում է Իջևանի գավառի Բարանայի (այժմ՝ Նոյեմբերյան) շրջանի Աքսիփարայի անտառային մասը, որը բաժանված է եր-

<sup>1</sup> Տե՛ս օտևական 5-վերստանոց քարտեզի E-8 և Ж-8 պլաներները: Հմմտ.՝ Цыпинев А., Атлас этнополитической истории Кавказа (1774–2004), Москва, 2006, с. 21 – «Советский Кавказ – первый административно-территориальный вариант» քարտեզ:

<sup>2</sup> Հաշվարկն ըստ՝ Տեղեկատու, էջ 39:

<sup>3</sup> Հաշվարկը՝ Գ. Բաղդասյանի:

<sup>4</sup> «Кавказский календарь на 1917 г.», ОС, с. 58.

կու մասի և կազմում է Բարանայի շրջանի ամենամեծ մասը»<sup>1</sup>: Նույն փաստաթղթում հանդիպող լրացուցիչ տվյալներից պարզվում է, որ «երկու մաս» ասելով հասկացվել է ինչպես հայկական Ոսկեպարից արևմուտք գտնվող Վերին, այնպես էլ արևելք ընկած Ներքին Աքսիփարա նույնանուն գյուղերը: Ի դեպ՝ Առաջին Հանրապետության տարածքում են եղել Ն. Աքսիփարայի հարևան մի քանի գյուղեր ևս (Բաղանիս-Հայրում, Ղուշի-Հայրում, Մազամլու, Հայրըմլու): Այդ հողատարածքը կազմում էր շուրջ 60 քառ. կմ: Անշուշտ, հարևան հանրապետության ղեկավարությունը հեռահար նպատակներ էր հետապնդում, երբ պահանջում էր վերոհիշյալ ենթաշրջանը: Ըստ էության, դրա նպատակն էր տարանջատել Հայաստանի հյուսիսարևելյան շրջանները, սեպածն խրվել մեր հանրապետության տարածքում և շարունակել ավանդական դարձած գավթողական քաղաքականությունը:

Ամփոփենք. ըստ էության՝ 1920 թ. կեսերին Հայաստանի իրավասության ներքո գտնվում էր Ղազախի գավառից շուրջ 3.260 քառ. կմ տարածք:

5. Երևանի համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ «Թիֆլիսի նահանգի այն մասերը, որոնք Հայաստանի տիրապետության տակ էին գտնվում մինչև 1920 թ. սեպտեմբերի 28-ը», ձևակերպման մեջ պետք է հասկանալ նախկին Բորջալուի գավառի այն հատվածը, որը տարածվում էր Ձորագետից անմիջապես հարավ՝ մինչև նախկին Երևանի նահանգի հյուսիսային սահմանը և մտնում էր վերոհիշյալ վարչամիավորի Լոռու ոստիկանական տեղամասի մեջ: Այս հատվածում էին գտնվում 11 գյուղական հա-

<sup>1</sup> Տե՛ս ՀԱԱ. ֆ. 112, ց. 2, գ. 3, թ. 43:

տարակույթություններ՝ իրենց 26 բնակավայրերով: Ըստ էության, Խորհրդային Հայաստանի կազմում ընդգրկվելու էին ներկայիս ՀՀ Լոռու մարզի Ալավերդու (ն.՝ Թումանյանի) և Ստեփանավանի տարածաշրջանների հարավային, Վանաձորի տարածաշրջանի (ն.՝ Գուգարքի շրջան) հյուսիսային և Տաշիրի տարածաշրջանի (ն.՝ Կալինինոյի շրջան) հարավ-արևմտյան հատվածները՝ շուրջ 1.060 քառ. կմ տարածությամբ<sup>2</sup>: Նշված տարածքից ամենամեծ մասնաբաժինը հասնում է Ստեփանավանի (407,5 քառ. կմ)<sup>3</sup> և Ալավերդու տարածաշրջաններին (335,5 քառ. կմ)<sup>4</sup>: Վանաձորի և Տաշիրի տարածաշրջաններից Խորհրդային Հայաստանին անցնող մասերը կազմում էին համապատասխանաբար՝ 144,3 և 90 քառ. կմ<sup>5</sup>:

<sup>1</sup> Ըստ «Кавказский календарь на 1917 г.», ОО, էջ 96–97: Իրանից 9-ն ամբողջությամբ էին անցնելու ՀՍԽՀ-ին, իսկ 2-ը՝ ուսական Ջալալ-ոլլու և Ծահնազարի գյուղական հասարակությունները, հատվածաբար [Նովո-Ալեքսանդրովկա (այժմ՝ Բովանոբ, Խորհրդային տարիներին՝ Մաքսիմ Գորկի, Ստեփանավանի տարածաշրջանում) և Ծահնազար (այժմ՝ Մեծավան, Տաշիրի տարածաշրջանում) գյուղերը]:

<sup>2</sup> Հաշվարկն ըստ՝ Տեղեկատու, էջ 49–51, 55–57:

<sup>3</sup> Ներառում էր ներկայիս Ստեփանավան քաղաքը (1920 թ. Ջալալօղլի), ինչպես նաև Ամրակից (ն.՝ Նիկոլանկա, Խորհրդային շրջանում՝ Կիրով), Արմանիս, Գարգառ (ն.՝ Հայ Գյառօղյան), Գյուլագարակ, Կաթնաղբյուր (ն.՝ Դոթոկոբուլաղ), Կուրբան, Հոբարձի, Ռուշիկնո (ն.՝ Ռուս Գյառօղյան), Վարդաբլուր, Ուրասար (1920 թ.՝ Նովո-Ռուկոլովկա, Խորհրդային շրջանում՝ Կուլչիշև) համայնքներն իրենց հողատարածքներով:

<sup>4</sup> Ներառում էր ներկայիս՝ Խանլու, Մարց, Լորուս, Շամուտ, Անիձոր, Աթան, Չկարով (ն.՝ Մաղիբազդի) համայնքներն իրենց հողատարածքներով:

<sup>5</sup> Ներառում էր ներկայիս Վանաձորի տարածաշրջանի հետևյալ համայնքները. Ձորագյուղ, Ձորագետ (ն.՝ Քոլազերան քաղաքատիպ ավան), Անտառամուտ (ն.՝ Քոլազերան), Վահագնի (1920 թ.՝ Ծախի), Եղեգնուտ (1920 թ.՝ Դամշկուտ), Ներես (1920 թ.՝ Խաչիգյուղ), Վահագնաձոր: Տաշիրի տարածաշրջանից մնացն այժմյան Կաթնառատի համայնքի տարածքն էր ամբողջությամբ ընդգրկվելու ՀՍԽՀ կազմում: Բացի այդ, Խորհրդային Հայաստանի մաս էր կազմելու նաև ներկայիս Մեղվահովիտ (ն.՝ Թազաքենդ կամ Ղարախաս) համայնքի մեծագույն մասը՝ Նորամուտ (ն.՝ Ղարաղալա) գյուղով (Մեղվահովիտը մնում էր չեզոք գոտում), ինչպես նաև Բլագոարնոյե համայնքի հողատարածքները՝ առանց գյուղի:

ուրից ընդգրկված տարածքային հանրությունները վերանայելու 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի երրորդ հոդվածով նորահռչակ Խորհրդային Հայաստանի համար նախատեսված տարածքը պետք է կազմեր ավելի քան 43.000 քառ. կմ<sup>6</sup>:

### 1.3. 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով քեմալական Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին անցած հայկական տարածքները

Հայաստանի Խորհրդայնացումով քեմալական Թուրքիայի կողմից բռնազավթված հայկական տարածքների պատկանելության հարցը ստորադասվեց Խորհրդայնության տարածքային սահմանազատմանը, որը որոշվելու էր ապագա բանակցություններում<sup>7</sup>: ՀՍԽՀ նոր իշխանությունները՝ ի դեմս հայ կոմունիստների, թեպետ վճռական էին հայկական տարածքների և սահմանների խնդրի՝ հոգուտ հանրապետության լուծման հար-

<sup>1</sup> Համամատթոյան համար նշենք, որ Մոսկվայում 1921 թ. հրատարակված «Статистический ежегодник 1918–1920» գրքում ՀՍԽՀ տարածքը 1920 թ. դեկտեմբերի դրությամբ ցույց է տրված 34288 քառ. վերստ կամ 39019 քառ. կմ (տե՛ս Մոսյաևս Կ. Ա., Советская страна после окончания гражданской войны: территория и население, Москва, 1986, էջ 68): Իսկ Ա. Հակոբյանը, իր իսկ հարցադրմանը՝ «թե որքան տարածք էր մնում Խորհրդային Հայաստանին 1920 թ. դեկտեմբերի իրավիճակի», նշում է «Ցարածքային սահմանային խնդրի թիչ թե շատ հետևողական ու արդարացի լուծման դեպքում, կարծում ենք, որ ՀՍԽՀ տարածքը կարող էր հասնել անվազն 40000 քառ. կմ-ի» (Հակոբյան Ա.Մ., էջվ. աշխ., էջ 93–94):

<sup>2</sup> Մանրամասն տե՛ս Նաչատուրյան Կ.Հ., ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. Խորհրդայնության հարաբերությունների գյուղատնտ. (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), «Լուսինի հասարակական գիտությունների», Երևան, 2010, N 1–2, էջ 36–38:

յում, սակայն վճարել էր վնասը Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը:

1920 թ. դեկտեմբերի 9-ին քննալական իշխանություններին ուղղված հուշագրում ՌՍԴԽՀ կառավարությունը անհրաժեշտ է համարում նախատեսվող կոնֆերանսին Խորհրդային Հայաստանի (ինչպես նաև՝ Խորհրդային Ադրբեջանի) ներկայացուցիչների մասնակցությունը: Խորհրդաթուրքական կոնֆերանսին նշանակված հայկական պատվիրակությունը ՀՍԽՀ արտգործօղկոմ Ալեքսանդր Բեկզառյանի գլխավորությամբ Մոսկվայում Ռուսաստանի արտգործօղկոմատ է ներկայացնում փաստաթղթերի, քարտեզների, փաստագրական նյութերի մեծ փաթեթ՝ «Հայկական պատվիրակության 1921 թ. փետրվարի 2-ի տեղեկատու-զեկուցումը ռուս-թուրքական կոնֆերանսի համար» վերնագրով: Թղթապանակի «Հայաստանը մինչև վերջին հայ-թուրքական պատերազմի սկիզբը» բաժնում ներկայացվում է հայկական մի շարք տարածքների (Կարս, Արդահան, Բայազետ, Սուրմալու, Նախիջևան, Շարուր-Դարալագյազ և այլն) ինչպես ռազմավարական, այնպես էլ սոցիալ-տնտեսական նշանակությունը ՀՍԽՀ-ի համար, շեշտվում է, որ նշված տարածքները հարկավոր է ընդգրկել Խորհրդային Հայաստանի կազմում: Այստեղ առաջարկվում էր Թուրքիայի հետ սահմանների չորս հնարավոր տարբերակներ: Փաստաթղթերին ուշադրությամբ ծանոթանալուց հետո ակնհայտ է դառնում, որ Խորհրդային Հայաստանի իշխանությունների Երրորդը՝ հանրապետության բնականոն զարգացման համար նրա կազմում անհրաժեշտ էր ընդգրկել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախօրյակի դրությամբ Հայաստանի Հանրապետությանը պատկանող վերը

նշված շրջանները, որոնք կազմում էին շուրջ 60.000 քառ. կմ տարածք: Այսպիսով, Հայաստանի նոր իշխանություններին ակնհայտորեն չէր բավարարում Երևանի դեկտեմբերի 2-ի համաձայնագրով հանրապետությանն անցնող տարածքները, նրանց ակնկալիքներն ավելի էր: Հայ-թուրքական սահմանազատման տարբերակների հիմքում ընդունելով դեկտեմբերի 2-ի համաձայնագրի 3-րդ կետի պայմանները, հայկական կողմը, այսպիսով, հավակնություններ էր ներկայացնում նաև Ախուրյան և Արանք գետերից արևմուտք, մասամբ՝ հարավ ընկած տարածքների, այդ թվում՝ Կարսի մարզի, Արդահանի օկրուգի որոշ հատվածների, Բայազետի նկատմամբ<sup>1</sup>:

Բացի տեղեկատու զեկուցումից, հայկական պատվիրակությունն իր հետ Մոսկվա տարավ նաև ՀՍԽՀ արտաքին գործերի օղկոմատի տեղեկատու բաժնի վարիչ Մովսես Պետրոսյանի հեղինակած «Արտասահմանյան գաղութներ», «Խորհրդային Հայաստանի Արևելքի քաղաքականության մասին», նրա տեղակալ Գեղամ Անտելեայանի «Կոմունիստական հողը Թուրքիայի և թուրքահայերի մեջ» զեկուցագրերը, նաև զանազան փաստաթղթեր քննալական Թուրքիայի ներքին վիճակի, ռազմական տեղումի մասին<sup>2</sup>:

Հայկական կողմի փաստարկները, սակայն, որևէ նշանակություն չունեցան. Մոսկվայի 1921 թ. մարտի 16 (18)-ի «Ռուս-թուրքական բարեկամության և եղբայրության» պայմանագրով<sup>3</sup>

<sup>1</sup> Ցնն ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 1-23:

<sup>2</sup> Մուքիսայան Հ., Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը 1921 թ. Մոսկվայի կոնֆերանսին պատրաստվելու շրջանում, «Էջմիածին», 2011, ապրիլ (1), 94-105:

<sup>3</sup> Ռուս-թուրքական պայմանագիրն իրականում ստորագրվել է 1921 թ. մարտի 16-ին, սակայն քաղաքական նպատակներով թվագրվել է մարտի 16-ով (Казанская

խորհրդաթուրքական սահմանի հայ-թուրքական հասվածն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով՝ թուրքական կողմին թողնելով Կարսի մարզը, Սուլումալուի ողջ գավառը (Մեծ և Փոքր Արարատներով): Նախիջևանի երկրամասը (Ճարոփ-Դարալագ-յազի շրջանի հարթավայրային մասով), իբրև «Նախիջևանի մարզ», ինքնավար տարածքի կարգավիճակով փոխանցվեց Խորհրդային Ադրբեջանի «իննամակալությանը»՝ պայմանով, որ վերջինս այն չի զիջելու մի երրորդ կողմի, այսինքն՝ Հայաստանին: Թուրքիային և Ադրբեջանին անցած հայկական տարածքները կազմում էին ավելի քան 25000 քառ. կմ:

Մոսկվայի կոնֆերանսում հայկական շահերի անստեման կապակցությամբ ՀՄԽՀ պատվիրակությունն ապրիլի 15-ին բողոքի հուշագիր ուղղեց ՌԿ(Բ)Կ կենտկոմին և խորհրդային պետության ղեկավար Վլադիմիր Լենինին: Դրանում մասնավորապես նշվում էր. «Կոնֆերանսի արձանագրություններից չի երևում, թե արվել է գոնե մի չնչին փորձ՝ պահպանելու այն հողերն ու շրջանները, որոնք կենսական նշանակություն ունեն երիտասարդ և փոքր Խորհրդային Հայաստանի համար»<sup>2</sup>:

Այսպիսով, ռուս-թուրքական «դավադիր գործարքով» Հայաստանից խլվեցին և Թուրքիային ու Խորհրդային Ադրբեջանին նվիրաբերվեցին հայկական տարածքների մի զգալի մասը, խախտվեցին և ոտնահարվեցին միջազգային իրավունքի հիմնական սկզբունքները: Ո՛չ Խորհրդային Ռուսաստանը և ո՛չ էլ

Ջեմալաթաթ Թուրքիան առանց Խորհրդային Հայաստանի սահմանացության որևէ իրավասություն չունեին տեղիներու հայկական տարածքների և հայության ճակատագրերը: Ուստի միանգամայն իրավացի է սխյուրքահայ իրավաբան-պատմաբան Շ. Թորիկյանը, երբ եզրակացնում է, որ «Հայաստանի տարածքային հարցերին վերաբերող պայմանագրի կետերը չեն կարող լինել իրանական պարտավորություն Հայաստանի համար»<sup>1</sup>:

Մոսկվայի պայմանագրի ստորագրումից հետո Խորհրդային Ռուսաստանի ղեկավարության և Կարմիր բանակի հրամանատարության վճռական դիրքորոշման շնորհիվ քննալական գործերի գինագրավումից ազատագրվեց Ալեքսանդրապոլի գավառը, որը, համաձայն պայմանագրի, մնալու էր ՀՄԽՀ կազմում: Ապրիլի 22-ին թուրքական վերջին գործնասերը հեռացան Ալեքսանդրապոլից<sup>2</sup>: Լոռուց հետո Ալեքսանդրապոլի գավառը հաջորդ տարածքն էր, որ Հայաստանի խորհրդայնացումից հետո միացվեց հանրապետությանը:

Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածի համաձայն Խորհրդային Ռուսաստանը պարտավորություն էր ստանձնել դիմելու աներաժեշտ քայլերի, որպեսզի Թուրքիայի և Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև առաջիկայում ստորագրվող պայմանագրում վերջիններս «պարտադիր կերպով ճանաչեն սույն պայմանագրի այն հոդվածները, որոնք անմիջականորեն իրենց նն վերաբերվում»<sup>3</sup>: Փաստորեն, բուլնիկյան Ռուսաստանը ոչ միայն նվիրաբերում էր Հայաստանի տարածք-

Բ.Ա., К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г. «Вестник общественных наук». Ереван, 1999, N 1, с. 183-187):

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ Ջ.Ա. Կիրակոզյան, Ռ.Յ. Մահալյան, Երևան, 1972, էջ 499-507:

<sup>2</sup> Ավետիսյան Հ.Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 355:

<sup>1</sup> Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային իրավունքը, Բնրույթ, 1976, էջ 107:

<sup>2</sup> Ազգախնայան Վ.Ն., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, էջ 127-137:

<sup>3</sup> Документы внешней политики СССР, т. III, Москва, 1959, с. 602.

անդ Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին, այլև պարտավորվում էր ստիպելու ՀՄԽՀ իշխանություններին ճանաչել այդ փաստը:

Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսին նախապատրաստվելու փուլում՝ 1921 թ. մայիսի 7-ին, Բաքվում գումարվեց Անդրկովկասի երեք հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ քննարկվեց նաև սահմանների հարցերը: Ելնելով ՀՄԽՀ ու Նախիջևանի միջև սահմանի ճշտման վերաբերյալ Մոսկվայի պայմանագրի 3-րդ հոդվածից՝ խորհրդակցությունը որոշեց. «Իսկույն ևեթ միջոցներ ձեռք առնել տեղում Ադրբեջանի և Հայաստանի ներկայացուցիչների կողմից ռառամնասիրելու սահմանի ճիշտ որոշման հարցը, ազգագրական սկզբունքի, նմանապես և տեղական բնակչության կողմից այդ հարցի շուրջը հաստատված հայացքների համաձայն»<sup>1</sup>: Հայադրբեջանական հանձնաժողովի կայացրած որոշումով ՀՄԽՀ սահմանը Նախիջևանի հետ սկսելու էր ոչ թե Արարատ կայարանից, այլ Ուրմիա գյուղից (այժմ՝ անբնակ) և Արազդայան (այժմ՝ Երասխ) կայարանից: Երևանի գավառից անջատված Արարատ-Քյոմուրլուդաղ-Արազդայան եռանկյունին պետք է մնար ՀՄԽՀ կազմում:

Թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի համար Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միասնական քաղաքական ծրագրի դրույթները հաստատվեցին ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 3-ի «Կարսի կոնֆերանսի մասին» որոշումով: Նրանում մասնավորապես նշվեց, որ անհրաժեշտ է

խստորեն պահպանել Մոսկվայի պայմանագրի շրջանակները, «ոչ մի դեպքում թույլ չտալ Կովկասի հանրապետությունների մեկուսի ելույթները, բոլոր հարցերում լինել միահամուռ»<sup>2</sup>:

Կոնֆերանսի հետ կապված իր հարցերը նախապատրաստեց նաև Խորհրդային Հայաստանի կառավարությունը: «Կարսում Թուրքիայի հետ առաջիկա կոնֆերանսում ՀՄԽՀ-ի կողմից քննարկման ներկայացվող հարցեր» վերնագիրը կրող հուշագրում այլ խնդիրների թվում հայկական կողմն առաջարկում էր ՀՄԽՀ օգտին սահմանների որոշ ուղղումներ կատարել Նախիջևանի երկրամասում և Արփաչայի գոտում, Հայաստանին վերադարձնել նրա միջնադարյան մայրաքաղաք Անիի ավերակները և այլն: Սակայն հայկական առաջարկները կոնֆերանսում հանդիպեցին թուրքական կողմի: համար դիմադրությանը և մերժվեցին:

1921 թ. հոկտեմբերի 13-ին Կարսում ստորագրած թուրք-անդրկովկասյան «Բարեկամության պայմանագիրը»<sup>2</sup> չնչին փոփոխություններով վերահաստատեց Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրով որոշված թուրք-անդրկովկասյան սահմանը: Խորհրդային կողմի միակ ձեռքբերումը կարելի է համարել այն, որ ՀՄԽՀ սահմանների մեջ ներառվեց Նախկին Երևանի գավառի հարավում գտնվող վերը նշված եռանկյունին՝ շուրջ 260 քառ. կմ տարածքով: Ընդ որում, վերջինի մեջ էին մտնում նաև Արարատյան դաշտից Դարալագյազ (Վայոց ձոր) տանող ճանապարհը (այն այսօր էլ չի կորցրել իր ռազմավարական նշանակությունը) վերահսկող Բյարքի (այժմ՝ Տիգրանաշեն), ինչպես նաև Զա-

<sup>1</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 515:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1185, թ. 42-43:

<sup>2</sup> Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), էջ 517-527:

Փարլու-Կյունսդե (Գենուտ) զույգ գյուղերը, որոնք հետագա տարիներին աստիճանաբար «փոխանցվեցին» Նախիջևանի ԻԽՍՀ-ին (35-40 քառ. կմ տարածքով)՝

Ավելացնենք նաև, որ, ի տարբերություն Մոսկվայի պայմանագրի, որով Նախիջևանի տարածաշրջանի նկատմամբ խնամակալությունն Ադրբեջանն իրավունք չունեի զիջելու «մի երրորդ պետության», Մոսկվայի ջանքերով Կարսի պայմանագրից այդ պայմանը հանվեց: Թուրքիան, փաստորեն, «ճանաչում էր Անդրկովկասի նկատմամբ Խորհրդային Ռուսաստանի ամբողջական վերահսկողությունը»<sup>2</sup>:

«Այդ զիջումների դիմաց,- ինչպես հետագայում հայտարարեց կոնֆերանսում թուրքական պատվիրակության անդամ Մուխթար բեյը,- մենք Կարսի կոնֆերանսում ստացանք մեզ համար կարևոր իրավունքներ՝ Նախիջևանի շրջանից հարավ ընկնող տարածքները Թուրքիային միացնելու և երապրական Ադրբեջանի հետ անմիջական կապ ունենալու համար»<sup>3</sup>:

Խորհրդային Ռուսաստանի ճնշման ներքո Խորհրդային Հայաստանը թեև ստորագրեց Կարսի պայմանագիրը, սակայն նրա իշխանություններն առիթը բաց չէին թողնում իրենց դժգոհությունը հայտնելու համար: Կարսի պայմանագրի տակ իր ստորագրությունը դրած ՀՄԽՀ արտգործո՞ղկոմ Ասքանազ Մաավյանը նշում է. «Մենք չենք կարող երբևիցե հրաժարվել հողային պահանջներից, որոնք մեզ համար անհրաժեշտություն

նա, նոր պետության ստեղծման և ապրելու կարելիության առաջին պայմանը»<sup>1</sup>:

«Ավելի ծանր և ավելի անօգուտ խաղաղություն, քան Կարսին է, հազիվ թե կարելի է գտնել պատմության էջերում»<sup>2</sup>, - արձանագրում է հեղափոխական պատմաբան Բ. Բորյանը և իրավացիորեն նկատում, որ Կարսի պայմանագիրն «ըստ էության, այնպես էլ Ֆրոնտայ, քաղաքական և միջազգային իրավական նորմերի տեսանկյունից ինքնուրույն փաստաթուղթ հանդիսանալ չի կարող, այլ կրկնում և ամրագրում է 1921 թ. մարտի 16-ի պայմանագիրը»<sup>3</sup>:

Հետևաբար, քանի որ Մոսկվայի պայմանագիրն իր հերթին ստորագրվել էր միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքների խախտումներով (պայմանագիրը ստորագրող կողմերն առանց որևէ փազորության միջամտել էին այն չստորագրած ինքնիշխան պետության (պետությունների) տարածքային ամբողջականության հարցերին), ուստի տարածքային սահմանազատման հարցում Կարսի պայմանագրի նկատմամբ Հայաստանն իրավական պարտավորություն չպետք է կրի:

Կարսի պայմանագրով որոշված թուրք-անդրկովկասյան սահմանի սահմանագծման աշխատանքներն արդյունավետ դարձնելու համար նշանակվեց թուրք-անդրկովկասյան սահմանագծման միացյալ հանձնաժողով՝ ՌՍԴԽՀ ներկայացուցչի մասնակցությամբ: Անդրկովկասյան պատվիրակությունների առաջարկով այդ հանձնաժողովն իր հերթին բաժանվեց երկու

<sup>1</sup> Հաշվարկները՝ Գ. Բաղդասյանի:

<sup>2</sup> О'Кляштор Т.Э., Г.В. Чичерин и советская внешняя политика (1918-1930), Москва, 1991, с. 200.

<sup>3</sup> ՀԱՄ, ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 36:

<sup>1</sup> «Խորհրդային Հայաստան», Երևան, 21 հոկտեմբերի 1921, N 201:

<sup>2</sup> Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, часть II, Москва-Ленинград, 1929, с. 163.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 300-301:

սնթառանձնաժողովների՝ թուրք-հայկական և թուրք-վրացական սահմանագծերը տեղում ուսումնասիրելու և ճշգրտելու համար: Թիֆլիսում 1921 թ. դեկտեմբերի 10-ին համապատասխան քարտեզագրմամբ հաստատվեց թուրք-անդրկովկասյան սահմանագիծը (դելիմիտացիա)<sup>1</sup>:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը Կարսի պայմանագիրը վավերացրեց 1922 թ. մարտի 20-ին, իսկ քենալական Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի իշխանությունների փոխադարձ պայմանավորվածությամբ՝ վերջիններս պայմանագիրը վավերացրեցին միաժամանակ՝ 1922 թ. մարտի 16-ին<sup>2</sup>՝ Մոսկվայի ռուս-թուրքական թալանչիական պայմանագրի տարեդարձի օրը:

Կարսի պայմանագրի վավերացման արձանագրությունների փոխանակումից հետո առաջ եկավ ԽՍՀՄ-Թուրքիա սահմանագծի հստակեցման և միջպետական սահմանի երկայնքով սահմանանշաններ տեղադրելու հարցը: 1922 թ. վերջերից սկսվեցին սահմանանշան նախնական աշխատանքները: Մի քանի տարվա ընթացքում՝ քարդ ռեյիեֆային և խիստ կլիմայական պայմաններում, հարյուրավոր սահմանապահ սպաների, գինվորների ու հողաչափ մասնագետների մասնակցությամբ զգալի աշխատանքներ տարվեցին սահմանագատման և հատուկ սահմանային ազդանշանների տեղադրման ուղղությամբ (դենարկացիա)<sup>3</sup>:

<sup>1</sup> Հակոբյան Ա.Մ., նշվ. աշխ., էջ 262-263, 304:

<sup>2</sup> Պայմանագիրը վավերացրեցին Համառուսաստանյան կենտրոնական և արևմտահայկանյան Վրացական կենտրոնական կառավարությունը (տե՛ս ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 46, թ. 35) և Թուրքիայի Ազգային մեծ ժողովը. 172 կողմ, 12 դեմ և 3 ձեռնպահ ձայներով (տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 221, թ. 144):

<sup>3</sup> Հակոբյան Ա.Մ., նշվ. աշխ., էջ 314:

Սահմանագծում նախատեսվել կազմակերպված խորհրդային-թուրքական խառը հանձնաժողովը հիմնական աշխատանքները կատարեց 1925-1926 թթ. ընթացքում: Խորհրդային պատվիրակությունը ղեկավարում էր Օտտո Կարկլինը (այնուհետև նրան փոխարինեց իր տեղակալ Ի. Ճարսկովը), իսկ թուրքական պատվիրակությունը՝ Ֆահրի բեյը: Թուրքական կողմի որոշ ձգձգումներից հետո 1925 թ. հունվար-մայիսին Թիֆլիսում, Երևանում, Իզդիրում, Հաջիբայրամում (ներկայումս՝ Բազարան), Լենինականում, Կարսում տեղի ունեցած հանձնաժողովի և նրա կազմում գործող ջրային բաժանմունքի նիստերի՝ ընթացքում քննարկվեցին կողմերի ներկայացրած սահմանագծման տարբերակները, Արաքս և Արփաչայ (Ախուրյան) գետերի հոմերի փոփոխության, գետերի հոմով սահմանի անցկացման, կամուրջների, ձկնորսության, սահմանային սյուների տեղադրմանն առնչվող և մի շարք այլ հարցեր: Նիստերի ժամանակ տարակարծություններ առաջացնող խնդիրներից էր Արաքս գետի հունի փոփոխությունների ժամանակ առաջ եկած փոքր կղզյակների ու ծանծաղուտների հարցը: Չնայած թուրքական կողմի ներկայացրած հավակնոտ պահանջների՝ այդ տարածքների պատկանելության հարցը հիմնականում լուծվեց փոխզիջումային տարրերակով: Հարկ է արձանագրել, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերով թուրքերին մեծ տարածքային զիջումներ կատարած խորհրդային կողմը սահմանագծային հարցերում շատ ավելի անզիջում էր<sup>1</sup>: Հանձնաժողովի անդամներն այս ընթացքում ուսումնասիրություններ կատարեցին նաև միճահարոյց սահմանային հատվածներում:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 289, թ. 19-50, գ. 326, թ. 12-13, 17-19 շրջ., գ. 329, թ. 1-59:

Ինտերնո այն է, որ սահմանագծաան աշխատանքները ընթացքում Սազարաջուր, Չախմախ, Կարամադ, Տավշան-Ղլաղ, Բաշ-Շորագյալ բնակավայրերի արոտավայրերի ու մյուս հողատարածքների մասնակի կորուստը սահմանագոտու հայ բնակչության համար անհարմարություններ էր ստեղծել: Թյուրիմացություններից խոսափելու համար հանձնաժողովի խորհրդային պատվիրակների համար պատրաստված տեղեկատու փաստաթղթերից մեկում առաջարկվում էր սահմանասյուներ տեղակայել այն վայրերում, որտեղ բնական սահմանագիծը բացակայում է: Ինտերնո այն է, որ Կարսի պայմանագրով սահմանագիծը հաստատվել էր սուսկ քարտեզի վրա՝ սահմանագոտու որոշ հատվածներում հաշվի չառնելով բնական վիճակը:

Պայմանագրի տեքստի և բուն տեղանքի անհամապատասխանությունները սահմանագոտում կատարելու հարցում դժվարությունների էր հանգեցնում: Ըստ այդմ էլ՝ հայ գյուղացիները կանգնել էին սեփական հողերից զրկվելու իրական վտանգի առաջ: Խոսքը վերաբերվում էր Լենինականի գավառի մեկ տասնյակից ավել գյուղերի: Այսպես՝ թուրքական կողմում մնացող հողատարածքներ ունեին գավառի Օրխի օղլի, Ներքին և Վերին Իքիշ, Վարթանլի, Գյուլիբուլաղ, Բաջօղլի, Ներքին Ղզլղաշ, Ղարամահմեդ, Սրալլի, Բաշ-Շորագյալ, Տավշան-Ղլաղ գյուղերը: Դրանք վարելահողեր, յայլաներ, խոտհարքներ էին<sup>2</sup>: Հատկապես խնդրահարույց էր Բաշ-Շորագյալի հողատարածքների խնդիրը: Մասնավորապես 1925 թ. ապրիլի 20-ին Սահմանային հանրապետական հանձնաժողովին բաղված զեկուցագրում ՀԱԽՀ հողագործության ժողկոմի տեղակալ Սուրեն

Շադունցը և հողվարչության պետ Խաչատուր Ավդալբեկյանն առաջարկում էին սահմանագծաան ժամանակ գյուղի բոլոր հողատարածքները թողնել հայկական կողմում: Ուշադրություն հրավիրելով բաշշորագյալցիների՝ իրենց բնակության վայրը վերադառնալու պահանջի օրինականության ու դրա իրագործելիության հանգամանքի վրա՝ զեկուցագրի հեղինակներն ընդգծում էին, որ գյուղի բնակչության մեծ մասը թուրքական քարդերից փրկվել է, սակայն գյուղում չեն բնակվում միայն սահմանագծի հստակ չլինելու և անվտանգության նկատառումներից ելնելով: Նրանք ժամանակավորապես հանգրվանել էին Լենինական քաղաքում և նույնանուն գավառի տարբեր գյուղերում՝ անհամբեր սպասելով վերադարձի հնարավորությանը: Այդ պատճառով էլ չեն մասնակցել գավառում իրականացված հողաբաժանությանը, ժամանակավոր կեցության վայրերում հողով չեն բավարարվել և «ցայսօր մնայուն տնտեսությամբ կապված չեն այլ վայրի հետ»<sup>1</sup>:

Խորհրդաթուրքական սահմանագծի հստակեցման և տեղում սահմանասյուների տեղադրման աշխատանքներն ընդհատումներով շարունակվեց ավելի քան մեկուկես տարի: Դրանց ավարտից հետո՝ 1926 թ. սեպտեմբերի 9-ին, Թիֆլիսում ստորագրվեց Խորհրդային Միության և Թուրքիայի Հանրապետության պետական սահմանագծի գլխավոր արձանագրությունը՝ իր հավելվածներով: Դրանով վիճահարույց տեղամասերից մասնավորապես Բաշ-Շորագյալի հողատարածքներն անցան Թուրքիային, Վարթանլի գյուղի հիմնական մասը, Աղբաբա լեռից Կարսին ընկած 312 դեսյատին և Ղարամահմեդ գյուղի 61 դեսյա-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 5, գ. 406, թ. 3:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 326, թ. 33:

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 41 և շրջ.:

տին արտավայրերը մնացին Խորհրդային Հայաստանի կազմում և այլն<sup>1</sup>: Իսկ արդեն 1927 թ. հունվարի 8-ին Կարսում ստորագրվեց «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Թուրքիայի Հանրապետության սահմանային գետերի, գետակների և առվակների ջրօգտագործման կոնվենցիան»՝ իր հավելվածով, որով կողմերը պայմանավորվեցին հավասարապես օգտվել գետերի, գետակների և առվակների ջրերից, հստակ սահմանվեցին ջրօգտագործման մանրամասները<sup>2</sup>:

Փաստորեն, 1925–1926 թթ. ընթացքում Խորհրդայնությունը խառը հանձնաժողովի կողմից հստակեցվեց 1921 թ. Մոսկվայի և դրա շարունակությունը հանդիսացող Կարսի ոչ օրինական պայմանագրերով որոշված հայ-թուրքական սահմանագիծը, որը վերասահմանագծման ենթարկվեց նաև հաջորդ տասնամյակներում:

#### **1.4. Խորհրդային Ադրբեջանի ուրեմգությունները հայկական տարածքների նկատմամբ**

Ադրբեջանառուսական Խորհրդային զորքերի դեմ կենաց և մահու կռիվ մղող Սյունիքի պաշտպանները Հայաստանի Հանրապետության Խորհրդայնացմանը հաջորդող օրերին չհավատացին Զանգեզուրը Հայաստանի մաս հանդիսանալու խոստմանը: «Ազատ Սյունիք» հողվածաշարում ինքը՝ այդ պայքարի առաջնորդ Գաբեգին Նժդեհը, Ադրբեջանի հեղկոմի հայտարար

<sup>1</sup> ՀԱՄ, ֆ. 113, ց. 29, գ. 1, թ. 8–24: Նաև՝ Арутюнян А., Из истории демаркации советско-турецкой границы (1973 г.), «Вестник архивов Армении», 2008, № 1, с. 190.

<sup>2</sup> ՀԱՄ, ֆ. 113, ց. 29, գ. 3, թ. 5–8 շրջ.:

ությունը ռայոնայանը «խաբեպատիր խոստումստրով պաշտալու» գործողություն էր համարում: Ավելին՝ արդեն 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի վանքում տեղի ունեցած համազանգեզուրյան առաջին համագումարը որոշեց «Զանգեզուրը յայտարարել ժամանակատրապես ինքնավար, մտցնելով հանրապետական իրաակարգ, մնալով անկախ՝ մինչև քաղաքական հնարավորութիւն կ'ունենայ միանալու իր մայր երկրի՝ Հայաստանի հետ: Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները»<sup>2</sup>: Այստեղ «մայր երկրի» տակ հասկացվում էր Հայաստանի Հանրապետությունը; այլ ոչ թե Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունը: Ինքնավար Սյունիքը հոչակելով երբեմնի Զանգեզուրի գավառի սահմաններում՝ Գ. Նժդեհը դրանով հիմք էր ստեղծում ողջ Սյունիքը հայկական պետությանը (անկախ, կամ էլ թեկուզ՝ Խորհրդային) միացնելու համար: Կարծում ենք, դրա համար իրավական հիմք էր հանդիսացել Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը, որով Հայաստանի ՍԽՀ-ի մեջ անվերապահորեն մտնելու էր ամբողջ Զանգեզուրի գավառը:

Այն հանգամանքը, որ զանգեզուրցիները կողմ չէին արտախայտվում ՍԽՀ-ին միանալուն, պայմանավորված էր երկրամասի հայության՝ շուրջ կես տարի Խորհրդային զորամասերի դեմ պայքարելու իրողությամբ, Զանգեզուրում բռնկիկների կատարած դաժանություններով, ինչպես նաև նրանց ու առանձնապես Գ. Նժդեհի համոզումով, թե ՀՀ համար կործանարար հետևանք կունեցած թուրքական արշավանքը տեղի է ունեցել Խորհրդային

<sup>1</sup> Նժդեհ Գ., Ազատ Սյունիք, Երկեր: Երկու հատորով, հ. 2, Երևան, 2002, էջ 115:

<sup>2</sup> Գեորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919–1921), Գորբեշև, 1981, էջ 113:

տաղրանքի արդյունքում է ընդունել, նրա բնորոշմամբ, «այսպես կոչված «խորհրդային» իրավակարգը»<sup>1</sup>:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները 1920 թ. վերջին և 1921 թ. սկզբին Զանգեզուրի վրա վերահսկողություն տարածելու իրական հնարավորություն չունեին, ուստի բավարարվում էին միայն «դեկլարացիաներով»: 1921 թ. հունվարի 29-ին «Զանգեզուրի գյուղացիությանը» ուղղված դիմումում Հայաստանի հեղկոմը տեղեկացնում էր Ադրբեջանի հեղկոմի 1920 թ. նոյեմբերի 30-ի հոչակագրի մասին, հայտարարում, որ խորհրդային իշխանության համար առաջնային խնդիր է Զանգեզուրը ՀՍԽՀ-ին միացնելը և առաջարկում վերջ տալ «աննպատակ դիմադրությանը և ճանաչել Հայաստանի խորհրդային իշխանությունը»<sup>2</sup>: Սյունեցիներն ու նրանց հրամանատար Նժդեհը այս և նմանատիպ հայտարարություններին հավատ չընծայեցին:

1921 թ. ապրիլի 27-ին Տաթևի վանքում տեղի ունեցած Զանգեզուրի հայության երկրորդ համագումարում հնչեցավար Սյունիքը վերանվանվեց Լեռնահայաստան, ստեղծվեց կառավարություն՝ Գ. Նժդեհի գլխավորությամբ<sup>3</sup>: Մինչ այդ՝ 1920 թ. ապրիլի սկզբին, Գ. Նժդեհը վճռական հակահարվածով թուրքաթարական միացյալ ուժերից մաքրել էր Որոտան և Հազարի գետերի ստորին ավազանի տարածքները՝ անվտանգության ապահով գոտու վերածելով Զանգեզուրի հարավարևելյան սահմանները: Միաժամանակ դրանով ճանապարհ էր հարթվում

դեպի օրհասական պայքար միող Արցախ: Այս իրադարձություններից հետո է Նժդեհը մտահոգացել Լեռնահայաստանի ստեղծման գաղափարը, որով կվերականգնվեին պատմական Սյունիքի վարչական սահմանները Հազարի (Ագարակուգետ)–Արաքս գծով: Դա է հավաստում նաև Որոտանի կոիվներին անմիջապես հաջորդած Զավնդուրի գավառի ազատագրման գործողությունը (6-13 ապրիլի 1920 թ.), որի շնորհիվ Զանգեզուրի գինված ուժերի վերահսկողության տակ հայտնվեց Բարթազ (Բարդութադք) լեռնագագաթից մինչև Ողջի գետի ստորին ավազան տարածվող պատմական Կովսականը, մի տարածք, որը հայաթափվել էր նախքան XVIII դարը: Նույն ժամանակահատվածում հայկական վերահսկողությունը հաստատվել էր Արսիանից արևելք ընկած լեռնային արտավայրերի շրջանի վրա՝ մինչև Հազարիի Հոչանց (Հոչագ) վտակի վերին հոսանքը: Ուշագրավ է, որ այս սահմանները հետագայում փոխանցվեցին ՀՍԽՀ-ին և մինչև 1920-ական թվականների կեսերը համարվում էին վիճելի:

1921 թ. ապրիլին Լեռնահայաստանի հոչակոմը և նա 3-4 ամսով «Ազատ Լեռնահայաստանի գոյության» անհրաժեշտությունը Գ. Նժդեհը բազատրում է հետևյալով, որոշակի ժամանակ էր պետք 1921 թ. փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Զանգեզուր նահանջած երևանյան զաղթականներին, մտավորականներին ու զինվորներին իրան անցնելու համար<sup>4</sup>: Մինչդեռ իրականում նա հույս ուներ արտաքին նպաստավոր իրավիճակի դեպքում Հայաստանից հեռացնել բոլշևիկներին:

<sup>1</sup> Նժդեհ Գ., Իմ պատասխանը Հայաստանի ողբերգությունը թրքաբոլշևիկ փաստաթղթերի լույսի տակ, Երկեր: Երկու հատորով, հ. 2, էջ 214:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 169, թ. 1:

<sup>3</sup> Գեորգեան Վ., նշվ. աշխ., էջ 145-147:

<sup>4</sup> Նժդեհ Գ., Ինչու պայքարեց Լեռնահայաստանը, Երկեր: Երկու հատորով, հ. 2, էջ 12, նույնի, Ազատ Սյունիք, Երկեր: Երկու հատորով, հ. 2, էջ 150:

Չանգեզուրի խնդիրը խաղաղ ճանապարհով կարգավորելու նպատակով 1921 թ. մայիսի 12–15-ին Սիսիանի Ղալաջուղ գյուղում բանակցություններ տեղի ունեցան ՀՍԽՀ և Լեռնահայաստանի պատվիրակությունների միջև, որոնք անարդյունք ավարտվեցին: Իսկ արդեն հունիսի 1-ին Լեռնահայաստանը վերանվանվեց Հայաստան, ինչն ավելի զայրացրեց խորհրդային կողմին: Խաղաղ ճանապարհով Չանգեզուրը խորհրդայնացնելու փորձերի ձախողումից հետո ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն 1921 թ. հունիսի 3-ին որոշեց հունիսի վերջին ռազմական ճանապարհով լուծել «հակահեղափոխական Չանգեզուրի» խնդիրը<sup>1</sup>: Որոշման կենսագործումից առաջ՝ հունիսի 13-ին, ՀՍԽՀ Ժողկոմխորհը նամակ-հայտարարությունով դիմեց Լեռնահայաստանի իշխանություններին: Հայտարարության համաձայն՝ երկրամասը կազմելու էր խորհրդային Հայաստանի մասը, ներում էր շնորհվելու խորհրդային իշխանությունների դեմ սպառազործիչներին և այլն<sup>2</sup>: Ինչպես Ղալաջուղի բանակցությունների ժամանակ, այնպես էլ այս հայտարարության մեջ չէր նշվում Չանգեզուրն ինչպիսի սահմաններով պետք է անցնե՞ր ՀՍԽՀ-ին: Ուստի «Չանգեզուր» հասկացության տակ պետք էր հասկանալ ողջ գավառը, մանավանդ՝ որ այդպես էր նշվում Ադրբեջանի հեղկոմի հայտարարությունում և Երևանի հայ-ռուսական համաձայնագրի մեջ:

Եվ միայն 1921 թ. հունիսի 26-ին վերագրավելով նախօրեին Յապոնի կողմից ռազմակալված Դարալազյազը՝ ՀՍԽՀ Կարմիր բանակը շարունակեց ռազմական գործողությունները՝ խնդիր

դնելով պարտության մատնել Չանգեզուրում կենտրոնացած «հակահեղափոխական ուժերին» և երկրամասը միացնել խորհրդային Հայաստանին:

Գարեգին Նժդեհը որոշում է դադարեցնել պայքարը. տեղի բնակչությանը պատգամելով չդիմարդել հայ-ռուսական կարմիր զորքերին և անխնա լինել՝ եթե հարձակում ձեռնարկեն ադրբեջանական ջոկատները: Հուլիսի 9-ին մի խումբ զինակիցներով նա անցնում է Արաքս գետի պարսկական ափը: Զարգացնելով առաջխաղացումը՝ հուլիսի 13-ին խորհրդային ուժերը գրավեցին Մեղրի գյուղն ու Գեներալի շրջանը, երկրամասի խորհրդայնացումն ավարտված էր<sup>3</sup>:

Չանգեզուրի ինքնապաշտպանությունն ունեցավ այն արդյունքը, որ երկրամասի հայությունը փրկվեց ադրբեջանական ջարդերից, իսկ գավառի արևմտյան հատվածը միացավ խորհրդային Հայաստանին, հակառակ դեպքում նրան կարող էր սպառնալ Նախիջևանի կամ Լեռնային Ղարաբաղի ճակատագիրը: Ուստի պատահական չէ, որ Գ. Նժդեհի հետագայում գրած աշխատություններում կարմիր թելի նման անցնում է այն միտքը, որ իր և զինակիցների վերջնական նպատակը Սյունիքը Մայր Հայաստանի կազմում պահելն էր: Եվ այդ պայքարի հետևանքով կանխվեց երկրամասն Ադրբեջանին կցելու հեռանկարը, իսկ վերջնարդյունքում այն միացավ խորհրդային Հայաստանին<sup>2</sup>:

<sup>1</sup> Տե՛ս Գևորգյան Վ., նշվ. աշխ., էջ 173–175, Ախունյան Ա. Հ., Չանգեզուրի գլխավորը (1920–1921 թթ.), Երևան, 2000, էջ 601–602:

<sup>2</sup> Մուքիսյան Հ. Կ., Սյունիքը Հայաստանի կազմում պահպանելու խնդիրը Գարեգին Նժդեհի աշխատություններում, «Լուսերը հասարակական գիտություններին», 2012, N 2–3, էջ 141–148:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1187, թ. 13:

<sup>2</sup> «Խորհրդային Հայաստան», 19 հունիսի 1921, N 106:

Սակայն ողջ խնդիրն այն է, որ նման պնդումը միանշանակ չէ. քանի որ Խորհրդային Հայաստանին էր անցել միայն Զանգեզուրի արևմտյան մասը: Ասվածի վկայությունն է այն իրողությունը, որ ողջ Զանգեզուրում խորհրդային կարգեր հաստատուեց (1921 թ. հուլիսի 13) մեկ շաբաթ անց՝ հուլիսի 20-ին, ՀՍԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի (ժողկոմխորհ) հրատարակած «ՀՍԽՀ վարչական վերաբաժանումների մասին» դեկրետում շրջանցվեց Զանգեզուրի վերաբաժանման հարցը: Դեկրետի համաձայն՝ ՀՍԽՀ-ն բաժանվեց 8 գավառի, այդ թվում՝ Դարալագյազի գավառը՝ Քեշիշքենիի և Գեղևազի գավառակներով:

ՀՍԽՀ վարչական վերաբաժանումների մասին դեկրետի ընդունումից ավելի քան մեկ ամիս անց՝ 1921 թ. օգոստոսի 31-ին, ՀՍԽՀ ժողկոմխորհը որոշում ընդունեց «Զանգեզուրի գաւառ կազմելու մասին»: Այստեղ հստակ նշվում էր. «Զանգեզուրի՝ ՀՍԽ Հանրապետութեանը կցած մասից կազմել առանձին Զանգեզուրի գաւառ (կենտրոնը՝ Գորիս)»՝ հետևյալ գավառակներով. Գորիսի, Դիսի (Տեղ), Տաթևի, Սիսիանի (կենտրոնը՝ Բունակոթ), Ղափանի (կենտրոնը՝ Ղաթարի գործարանները) և Մեղրիի<sup>1</sup>:

Դեկրետում արձանագրված «Զանգեզուրի՝ ՀՍԽ Հանրապետությանը կցված մաս» արտահայտությամբ Խորհրդային Հայաստանի դեկավարները սթարգորոշ կենտրով մատնանշում էին, որ կա նաև Զանգեզուրի՝ ՀՍԽՀ-ին չկցված (այն է՝ ադրբեջանա-

<sup>1</sup> ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ II, Էջմիածին, 1921, էջ 83-84:

<sup>2</sup> ՀՍԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Երևան, 1921, N 5, էջ 39-40: 1922 թ. ՀՍԽՀ-ում անցկացված համահայաստանյան պուդառտետական վիճակագրության տվյալների համաձայն՝ Զանգեզուրի 3 գավառակներում ընդգրկված էին հեռակալ թվով բնակավայրեր. Ղափան՝ 80, Սիսիան՝ 37, Տեղ՝ 9, Տաթև՝ 8, Գորիս՝ 7, ընդամենը՝ 141 բնակավայր (Յուզակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի, հրատ. ՀՍԽՀ վիճակագրության, Երևան, 1923, էջ 54-64):

գլխի գործընկերությունը պարզեցվեց 1921 թ. հունիսի 20-ին: Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով հանրապետության մաս էր ճանաչվում ամբողջ Զանգեզուրի գավառը:

Ուստի պատահական չէ, որ, ՀՅԴ հայտնի գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանը հայ-ադրբեջանական տարածքային վեճերը լուծելու բոլշևիկյան իշխանությունների սկզբունքը «մաքիավեյան» է անվանում, որի արդյունքում «Զանգեզուրի գավառի մի մասը» միացվել է Ադրբեջանին<sup>1</sup>:

Զանգեզուրում Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության և Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ԱՍԽՀ) միջև սահմանագծի անորոշ լինելը տեղում զանազան խնդիրների, թյուրիմացությունների առթի էր դառնում: Ուստի առաջնային խնդիր էր ժամանակավոր սահմանագծի հաստատումը: Մանավանդ որ անհրաժեշտ էր նաև պատրաստվել առաջիկայում կայանալից տեղական խորհուրդների ընտրություններին: Այս հարցի կարգավորումը հանձնարարվեց Զանգեզուրում ՀՍԽՀ արտակարգ լիազոր Դրաստամատ Տեր-Մինոնյանին:

Որքան էլ զարմանալի թվա, նախկին ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի տարածքում ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի միջև ժամանակավոր սահմանագծի որոշումը վերապահվեց ոչ թե միջպետական հանձնաժողովին, այլ Զանգեզուրի և Ղուբաթլուի կոմունիստներին, ինչը վկայում էր Ադրբեջանի կողմից իրականացվող անբարիան քողարկելու ցանկության մասին:

1921 թ. հոկտեմբերի 12-13-ին 43 անձի մասնակցությամբ տեղի ունեցավ ՀՍԽՀ Զանգեզուրի և ԱՍԽՀ Ղուբաթլուի գա-

<sup>1</sup> Ռուբեն, Զանգեզուրի պայքարը. «Գրոշակ», 1925, թիւ 6 (դեկտեմբեր), էջ 173:

վաների: «պատասխանատու գործիչների» խորհրդակցություն, որի գլխավոր դերակատարներն էին՝ Դ. Տեր-Սիմոնյանը, Ղուբաթլուի գավառային գործադիր կոմիտեի նախագահ Գուսի Հաջինը: ԱԿ(Բ)Կ Ղուբաթլուի գավկոմի քարտուղար Աբաս Սուլթանովը, Ազիզ Մուսաևը, Զանգեզուրի գավառային հեղկոմի նախագահ Գրիգոր Օհանջանյանը, Զանգեզուրի գավիեղկոմի անդամ-քարտուղար Գևորգ Սաֆրազբեկյանը, ՀԿ(Բ)Կ Զանգեզուրի գավկոմի քարտուղար Մնացական Թավաքալյանը, Զանգեզուրի գավիեղկոմի նախագահի տեղակալ Աշոտ Շախմուրադյանը: Հենց վերջինս էլ զեկուցեց «ժամանակավոր սահմանների հարցը» թեմայով՝ շեշտելով, որ երկու շրջանների միջև ժամանակավոր վարչական սահմանների բացակայությունը խոչընդոտում է արդյունավետ աշխատանքին: «Ամբողջ գյուղեր չեն տեսնում խորհրդային իշխանությունը, այսինքն՝ չգիտեն վարչական տեսակետից ենթարկվում են Ղուբաթլուին, թե՛ Զանգեզուրին: Սահմանային շերտը, որտեղ իշխանություն չի հաստատվել, տարբեր բանդաների համար հավաքատեղի է հանդիսանում: Անհրաժեշտ է ժամանակավոր սահմաններ հաստատել», - նշեց զեկուցողը<sup>1</sup>:

Նման տարօրինակ և անհասկանալի ձևակերպումով մոռացության էր տրվում Ղուբաթլուի հիմնական մասի՝ Զանգեզուրի գավառի մասը լինելու իրողությունը: Կարծիքների փոխանակությունից հետո խորհրդակցության կայացրած որոշումը մեջբերում ենք ամբողջությամբ. «Շնորհել հանձնաժողով՝ պարզելու համար, թե որ գյուղերում են գյուղխորհուրդներ եղել, որոնց ներկայացուցիչները մայիսի 1-ին մասնակցել են համաարդրեջանա-

կան խորհուրդների առաջին համագումարին, այդտեղ պետք է տարածվի Ղուբաթլուի գործադիր կոմիտեի իշխանությունը, իսկ Զանգեզուրի հեղկոմի տարածք համարել այն, որը 1921 թ. հուլիսին մաքրվել է Նոդեհի բանդաներից: Հանձնաժողովի մեջ մտնում են Զանգեզուրի և Ղուբաթլուի հողային բաժինների և ներքին գործերի բաժինների վարիչները»<sup>1</sup>:

Հարկ է նշել, որ նշված խորհրդակցության գումարումից մեկ օր առաջ՝ հոկտեմբերի 11-ին, հավանաբար Գորիսում «Ղուբաթլուի և Զանգեզուրի գավառների ադմինիստրատիվ ժամանակավոր սահմանները որոշելու, տապալված կառավարության սահմանները վերականգնելու հուլիսի 2-ի տվյալներով» հարցով 3 զանգեզուրցի գործիչների՝ գավիեղկոմի նախագահի տեղակալ Աշոտ Շախմուրադյանի, Հողային բաժանմունքի վարիչ Համբարձում Տեր-Հովհաննիսյանի և բաժանմունքի գործերի կառավարիչ (1921 թ. հուլիսի 9-ից մինչև սեպտեմբերի 6-ը բաժանմունքի վարիչ) Հովհաննես Ղուկասյանի մասնակցությամբ հատուկ նիստ էր գումարվել: Չափազանց հետաքրքիր օրակարգով այդ նիստն ընդունել էր հետևյալ որոշումները (մեջբերում ենք ամբողջությամբ).

«1. Դարալագեազի գաառի ամբողջ սահմանագիծը ըստ **հին** վարչական սահմանագծի պահպանել Զանգեզուրի սահմանների մէջ:

2. Հիւսիսային սահմանը սկսում է՝ Դաազեոզ լեռան գագաթից դեպի արևելք Ջիվանշիրի գաառի հին վարչական սահմանագծով մինչև Իւչրուվաղ լեռան գագաթը, այնտեղից դեպի հարավ-արևելք անցնելով Ֆիդին-չինգիլ լեռան գագաթը մինչև

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 22 շք., ֆ. 146, ց. 1, գ. 48, թ. 13 շք.:

<sup>1</sup> Նույն տեղում:

‘Լզըլբողազ լեռնագագաթը, այնտեղից ուղիղ արևելք’ մինչև Օլուուար լեռան գագաթը, այնտեղից իջնելով հարավ-արևելք ուղղությամբ Իշըխուև և Քաչալ դաղ լեռնագագաթները՝ Ջիննի-գեօլը թողնելով թուրք քուչորների իրաաստության տակ: Քաչալ դաղից սահմանագիծը տանել հետևեալ գիղական հասարակութիւնների հողերի սահմաններով. Բայանդուր, Խոզնաար, Քոսալար (Ջաբուղը և Նարուզլուն թողնել Քուրդիստանի տերիտորիայի մէջ, սահմանագիծը անցնում է Հազարու գետի աջ ափով մինչև Կոռնիծոր գիւղը), Կոռնիծոր, Մազմազակ (լեռան գագաթը, Ալիդուլխուշաղի, Գօարջիկ, Մամեղլու (Մամեղլու գիւղը իր հողամասերով թողնում է Ղուբատլուի սահմաններում), Ջիբիկլու, Ջելվայ, Ջոր, Այադի, Գոյեալ, Եղուարդ (Սիրքաթասը մնում է Ջանգեզուրի սահմաններում), Հազարագ, Գազալու (Նարարաբան մնում է Ղուբատլուի սահմաններում), Շահիֆլու, Ղարագոլ (Ռազիդարան մնում է Ղուբատլուի սահմաններում) Հանդ, սահմանագիծը Հանդից իջնում է վերջինիս հասարակութեան հողերի սահմանագծով հետևեալ լեռնագագաթներով. Շուքիւրաթագ, Բարթագ, Սագիրտ, Աղբանդ՝ մինչև Երասխ գետը: Պարսկաստանի սահմանը սկսում է Աղբանդ գագաթից Երասխ գետի հոսանքով՝ մինչև Նախիջևանի հին սահմանը: Նախիջևանի սահմանագիծը մնում է հին սահմանների մէջ<sup>1</sup>: Փաստացի հենց այս սահմանագծման հիման վրա էլ տեղի ունեցավ Ջանգեզուրի գավառում ՀՄԽՀ-ի և ԱՄԽՀ-ի ժամանակավոր սահմանաքաժանումը:

Փաստորեն, Գարեգին Նժդեհի գլխավորած Ջանգեզուրի գոյամարտի արդյունքում նախկին Ռուսական կայսրության Ելի-

գավառադրի նահանգի Ջանգեզուրի գավառի արևմտյան մասը միացավ Խորհրդային Հայաստանին: Բացառված չէ, որ եթե մինչև 1921 թ. մայիս-հուլիսը (ադրբեջանական տեղական խորհուրդների ընտրությունների և Ջանգեզուրի խորհրդայնացման շրջանը) Ջանգեզուրի գավառից առավել քիչ տարածքներ գտնվեին Գ. Նժդեհի իշխանության տակ, ապա ավելի սերմ կլինեք Խորհրդային Հայաստանի տարածքը: Այս ամենով հանդերձ՝ պետք է փաստել, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագրի համաձայն Խորհրդային Հայաստանի մաս հանդիսացող Ջանգեզուրի գավառը քողարկված կերպով բաժանվեց ՀՄԽՀ-ի և ԱՄԽՀ-ի միջև:

ՀՄԽՀ-ի և ԱՄԽՀ-ի միջև գոյություն ունեցող սահմանային խնդիրներին լուծում տալուն ուղղված իրական քայլեր սկսվեցին իրականացվել 1922 թ. սկզբից: 1922 թ. փետրվարի 8-ին Ջանգեզուրի գավառային գործկոմին ուղղված գրությամբ ՀՄԽՀ արտաքին գործերի ժողկոմ Ա. Մոսվյանը և ժողկոմատի քաղաքական բաժնի վարիչ Պ. Յակոբյանը տեղեկացնում էին, որ արտաքին գործերի ժողկոմատը մտադիր է առաջիկայում «վերջնականապես որոշել սահմանային հարցը Ադրբեջանի հետ» և խնդրում է համապատասխան զեկուցագիր պատրաստել՝ անդրադառնալով Ջանգեզուր վերադարձած մահմեդականների քանակին, հայերի և մահմեդականների միջև եղած հարաբերություններին, Ղուբաթլուի գավառի գործկոմի, Քրոստանի հետ տեղական հայկական իշխանությունների ունեցած փոխհարաբերություններին, խնդրի լուծման սեփական առաջարկներ պատրաստել, ինչպես նաև տեղեկացնել, թե «Հայաստանի և Ադրբեջանի միջև որ սահմանը Ջանգեզուրում պիտի համարել ամենից շատ

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 39, գ. 50, թ. 19 և շրջ., ֆ. 132, գ. 1, գ. 299, թ. 9 և շրջ.:

ուսման պատճառով փոխակազմային անդամները, որոնք այն էլ, որ ՀՍԽՀ Չանգեզուրի և ԱՍԽՀ Ղուբաթլուի գավառների միջև շարունակական վեճեր էին ընթանում հողային և վարչական սահմանների անորոշության պատճառով: Դրանց կարգավորմանն ուղղված գործնական քայլեր իրականացվեցին միայն Անդրդաշնության կազմավորումից հետո:

Հայաստանի խորհրդայնացումից հետո նախկին Ելիզավետպոլի նահանգի Ղազախի գավառը և փաստացի բաժանվել էր ՀՍԽՀ Դիլիջանի և ԱՍԽՀ Ղազախի գավառների միջև: ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում հայկական և ադրբեջանական սահմանակից գյուղերի միջև առկա հողային վեճերը 1921 թ. սեպտեմբերից առ քր կերպով դարձյալ մեջտեղ եկան:

Դեռևս 1921 թ. մայիսին ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովմատը տեղեկություններ էր ստացել ադրբեջանցի գյուղացիների կողմից սահմանային Լալիգեղ և Ուզունթալա հայկական գյուղերի հողերի բռնագավթման և Աքսիֆարայի կիրճի անտառի ոչնչացման մասին<sup>2</sup>: Խորհրդային Հայաստանի հյուսիսարևելյան սահմանահատվածում ադրբեջանցի գյուղացիների կողմից սահմանախախտման, հայկական գյուղերում կատարած թալանի և վիճելի հողամասերի բռնագավթման վերաբերյալ հայկական կողմի բողոքները Խորհրդային Ադրբեջանի բարձրագույն իշխանություններին էր ուղարկվում ՀՍԽՀ արտգործոդկոմատի միջոցով: Արտգործոդկոմ Ա. Մոսվյանը կամ Բաքվում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Ի. Դովլաթյանի միջոցով, կամ էլ ան-

ձամբ խնդրի վերաբերյալ գրագրություն էր վարում Խորհրդային Ադրբեջանի արտգործոդկոմ Մ.-Դ. Հուսեյնովի հետ: Հայկական կողմին ուղղված ադրբեջանական պատասխան գրությունները նույնպես ՀՍԽՀ արտգործոդկոմատի միջոցով էր փոխանցվում Խորհրդային Հայաստանի իշխանություններին (մինչև 1922 թ. հուլիսին արտգործոդկոմատի լուծարումը)<sup>1</sup>: ՀՍԽՀ իշխանությունների արդարացի պահանջներն ու բողոքները փաստացի անուշադրության էին մատնվում Ադրբեջանի ղեկավարության կողմից:

Դեռևս 1921 թ. գարնան կեսերից, երբ Խորհրդային Ռուսաստանի կողմից խորհրդայնացված էր Վրաստանը, ճեշված էր Հայաստանում բռնկված հակախորհրդային ապստամբությունը, իսկ Չանգեզուրի (և դրանով իսկ Անդրկովկասյան ամբողջ տարածաշրջանի) խորհրդայնացման գործընթացը մտել էր որոշիչ փուլ, Անդրկովկասում խորհրդային քաղաքականությունը կենսագործող ՌԿ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն ձեռնամուխ եղավ տարածաշրջանի խորհրդային հանրապետությունների միջև առկա տարածքային խնդիրների կարգավորմանն ու միջպետական սահմանների հստակեցմանը: Կապբյուրոյի 1921 թ. մայիսի 2-ի պլենումում քննարկվեց հանրապետությունների սահմանների հարցը և որոշվեց ստեղծել համապատասխան հանձնաժողով՝ կազմված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչներից՝ Կապբյուրոյի անդամ Սերգեյ Կիրովի ղեկավարությամբ: Հանձնաժողովը պետք է մինչև հունիսի 1-ը պարզեր խնդիրը և ներկայացներ Կապբյուրոյին<sup>2</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 156, թ. 1 և շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում. գ. 45, թ. 54-55:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 222, թ. 2-10, ց. 2, գ. 45, թ. 83 և շրջ., գ. 98, թ. 86, 90 և շրջ., ֆ. 140, թ. 23-25:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1185, թ. 7:

Հայաստանի ոստիկանի 1921 թ. մայիսի 5-ի արտասու ընտանիք-վեց Հայաստանի սահմանների որոշման հարցը: Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմանների հաստատման վերաբերյալ արտագործողկոմի փոխանորդ Ա. Մոսավյանի գեկուցումը (սելուց հետո Հայիեղկոմը որոշեց Ա. Մոսավյանի նախագահությամբ (անդամներ՝ Ս. Համբարձումյան, Ա. Ղարազյուզյան, Հ. Լազյան) ստեղծել համապատասխան հանձնաժողով՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ Հայաստանի սահմանները որոշելու նպատակով նյութեր պատրաստելու համար, ինչպես նաև սահմանների խնդիրը բարձրացնել հարևան հանրապետությունների կառավարությունների առջև<sup>1</sup>:

Վրաստանի և Ադրբեջանի հետ սահմանային հարցերի քննարկմանը պատրաստվելու գործում զգալի աշխատանք էր կատարում ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը: Մայիսի 19-ին մի շարք ժողովմատներին ու ժողովներին հին ուղղված գրությանը արտագործողկոմատի քարտուղար Ա. Խոջամիրյանն առաջարկում էր հաջորդ օրը ժամը 1-ին «ներկայինել Հայաստանի սահմանների որոշման խորհրդակցությանը»<sup>2</sup>: Ժողովուհատը տեղեկատվություններ էր պատրաստում, քարտեզներ հավաքում վիճելի տարածքների վերաբերյալ<sup>3</sup>:

ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան քյուրոյի 1921 թ. մայիսի 2-ի պլենումի որոշմամբ ստեղծված Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների սահմանները որոշող հանձնաժողովը (Թիֆլիսում իր աշխատանքներն իրականացրեց հունիսի 25-27-ին: Հանձնաժողովում վրացիներից ներկայացված էին Ավանիժեն և

Թոդրիան, ադրբեջանցիներից՝ Հուսեյնովը, Հաջինսկին և Ռասուլզադեն, հայերից՝ ՀՄԽՀ միակ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանը: Հանձնաժողովի նիստում վերջինս առաջարկեց ՀՍԽՀ-ին միացնել Լոռու չեզոք գոտին<sup>1</sup>, Ախալքալաքի գավառը և Լեոնային Ղարաբաղը: Առաջարկը, սակայն, կտրականապես մերժվեց հանձնաժողովի ադրբեջանցի և վրացի ներկայացուցիչների, ինչպես նաև նախագահ Ս. Կիրովի կողմից: Մնան իրավիճակում Բեկզադյանը հրաժարվեց հանձնաժողովի՝ հետագա աշխատանքներին մասնակցելուց և պահանջեց վիճելի բոլոր հարցերը փոխանցել Կովկասյան քյուրոյի պլենումի քննարկմանը<sup>2</sup>:

Հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան քյուրոյի պլենումի որոշումների առդյունքում Լեոնային Ղարաբաղն ապօրինաբար փոխանցվեց Ադրբեջանին<sup>3</sup>, Լոռու չեզոք գոտին մնում էր Հայաստանի կազմում, իսկ Ախալքալաքի և Էրզրամի (Ծալկայի) շրջանների հարցը փոխանցվեց

<sup>1</sup> Լոռու չեզոք գոտին, որն ընդգրկում էր շուրջ 40 գյուղեր, ստեղծվել էր 1919 թ. հունվարի 9-17-ին Թիֆլիսում Անտանտի ներկայացուցիչների մասնակցությամբ հրավիրված հայ-վրացական խորհրդաժողովի որոշմամբ: Արանով ժամանակավորապես «կարգավորվում էին» նախկին Ռուսական կայսրության Թիֆլիսի նահանգի Բորչալուի և Ախալքալաքի գավառների պատկանելության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության և Վրացական Դեմոկրատական Հանրապետության միջև գոյություն ունեցող տարաձայն վեճերը (տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 82-83): Հայաստանի խորհրդայնացումից հետո Լոռու չեզոք գոտու խնդիրն միջամտեց խորհրդային Ռուսաստանը, որի հետահար նպատակն էր Ադրբեջանից և Հայաստանից հետո խորհրդայնացնել նաև Վրաստանը: Ինչդեռ իրականացնելու նախապարհին ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան քյուրոն և 11-րդ Կարմիր բանակի ռազմիկ-խորհուրդը, համագործակցելով ՀՍԽՀ իշխանությունների հետ՝ նախապատրաստում և 1921 թ. փետրվարի կեսերին Լոռու չեզոք գոտում ապստամբություն են բարձրացնում: Ապստամբության հարթակակից հետո Լոռիում հաստատվում է խորհրդային իշխանություն, որը ենթարկվելու էր խորհրդային Հայաստանի կառավարությանը: Չարագանելով հարձակումը՝ փետրվարի 23-ին Կարմիր բանակը մտավ Թիֆլիս, ինչի արդյունքում խորհրդային կարգեր հաստատվեցին նաև Վրաստանում (մանրամասն տե՛ս Խաչատրյան Կ. Հ., նշվ. աշխ., էջ 83-96):

<sup>2</sup> Поговорки Карабах в 1918-1923 гг., с. 640-642.

<sup>3</sup> Մանրամասն տե՛ս սույն աշխատության երրորդ գլխում:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 15, թ. 17:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 66, թ. 2:

<sup>3</sup> Նույն տեղում, ց. 2, գ. 21, թ. 73:

Վրաստանի կոմկուսի Կենտկոմի քննարկմանը: Վերջինս հուլիսի 16-ին հաստատեց Լոռու չեզոք գոտու մասին Կովկասյան բյուրոյի պլենումի որոշումը, իսկ ինչ վերաբերում է Ախալքալաքի և Խրամի շրջաններին, ապա անընդունելի համարեց այդ շրջանները Հայաստանին միացնելը<sup>1</sup>:

1921 թ. օգոստոսի 15-ին ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոն Անդրկովկասի խորհրդային հանրապետություններին սուաջարկեց սահմանագծման վերաբերյալ ընդհանուր պայմանագիր ստորագրել<sup>2</sup>: Մակայն հետագայում այդպիսի միասնական պայմանագիր չստորագրվեց: Մասնավորապես Հայաստանի և Վրաստանի միջպետական սահմանի վերջնական որոշումն ամրագրվեց երկկողմ համաձայնագրով, նոյեմբերի 6-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ա. Մյասնիկյանը և Վրաստանի հեղկոմի նախագահ Պ. Մդիվանին Թիֆլիսում համաձայնագիր ստորագրեցին երկու հանրապետությունների սահմանների որոշման վերաբերյալ: Կնքված համաձայնագրով Լոռու չեզոք գոտին մնաց Խորհրդային Հայաստանի կազմում, իսկ Ալեքսանդրապոլի և Ախալքալաքի գավառների սահմանագատման համար հիմք էր ընդունվել ցարական շրջանի վարչական բաժանումը: 1922 թ. հունվարի 4-ին Հայաստանի և Վրաստանի ներկայացուցիչների միջև ստորագրված լրացուցիչ համաձայնագրով առավել հստակեցվեց երկու հանրապետությունների միջպետական սահմանագիծը<sup>3</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ԲԳԸ, № 1, գ. 7, թ. 43-45:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 1021, ց. 2, գ. 1185, թ. 38:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1, թ. 66, գ. 55, թ. 3, 10, ֆ. 114, ց. 2, գ. 55, թ. 21 և շրջ. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատի ինֆորմացիոն բաժնի «Բիւլետեն», թիվ 8, Երևան, 1922, էջ 7:

1921-1922 թվականներին Խորհրդային Հայաստանը և Խորհրդային Ադրբեջանի իշխանությունների կողմից հայաադրբեջանական սահմանագատման մասին վերջնական համաձայնագիր այդպես էլ չկնքվեց և հայաադրբեջանական սահմանը, փաստորեն, մնաց անորոշ:

Ամփոփենք, նորաստեղծ Խորհրդային Հայաստանի տարածքի և սահմանների ձևավորման գործընթացը 1920-1922 թթ. ընթացքով մի քանի փուլերով. ա) 1920 թ. դեկտեմբերի 2-ի երևանի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով, բ) Մոսկվայի և Կարսի 1921 թ. խորհրդաթուրքական պայմանագրերով, գ) կենտրոնական և հանրապետական կուսակցական մարմինների առանձին որոշումներով: Արդյունքում, եթե 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ՀՍԽՀ տարածքը, ինչպես նշվել է, պետք է կազմեր ավելի քան 43.000 քառ. կմ, ապա արդեն 1921 թ. վերջին - 1922 թ. սկզբին տատանվում էր 32.000-33.000 քառ. կմ-ի սահմաններում<sup>4</sup> կրճատվելով ավելի քան ¼-ով:

Այսպիսով, ՀՍԽՀ տարածքի և սահմանների որոշման հարցում բուլշևիկյան Ռուսաստանը չպաշտպանեց Խորհրդային Հայաստանի և հայության շահերը: Հայկական տարածքների զգալի

<sup>4</sup> Ուշագրավ է, որ 1924 թ. Մոսկվայում հրատարակված «Сборник статистических сведений по Союзу ССР» գրքում ՀՍԽՀ տարածքը 1923 թ. մայիսի որոշյալի ցույց է տրված 30.349 քառ. վերստ կամ 34539 քառ. կմ (Молжков Ю.А., նշվ. աշխ., էջ 68): Իսկ Հարավային Անգլիական նպաստամատույց կոմիտեի կողմից 1923 թ. վերջին կազմված տեղեկատու փաստաթղթերից մեկում նշվում է, որ Խորհրդային Հայաստանի տարածքը կազմում է 33.000 քառ. կմ (ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 150, թ. 67): Ի դեպ, «ԽՍՀՄ փառջատարածքային բաժանումը 1927 թ.» վերնագրված տեղեկանքում նշված է, որ Անդրդաշնության կազմում ընդգրկվելու շրջանում ՀՍԽՀ տարածքը կազմում էր 30.948 քառ. կմ, քնակությունը՝ 867.671 մարդ («Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране, т. 5, 1927 г., Москва, 2003, с. 788):

Այսը ապօրինաբար հանձնվեցին քննալագան խորհրդային և  
խորհրդային Ադրբեջանին: Դրանով, սակայն, խորհրդային Հա-  
յաստանին պարտադրված տարածքային կորուստները չավարտ-  
վեցին, այլ շարունակվեցին հետագա տարիներին և: Խորհրդա-  
յին Հայաստանը, ի վերջո, պարփակվեց խիստ խոցելի սահման-  
ներում՝ ընդամենը 29.742,59 քառ. կմ՝ տարածության վրա:

<sup>1</sup> Տե՛ս Տեղեկատու, էջ 5:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ

#### 2.1. Անդրկովկասյան դաշնության ձևավորումը

Անդրկովկասի խորհրդային երեք հանրապետությունների՝  
Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի, տնտեսական ու ուսգ-  
մաքաղաքական միավորման քաղաքականությունը պար-  
տադրված էր խորհրդային Ռուսաստանի կողմից: Միավորման  
լավագույն ծն. համարվեց խորհրդային ֆեդերացիան (դաշնույթ-  
յունը): Խորհրդային ղեկավարության կողմից նկատի էր առն-  
վում նաև այն հեռանկարը, որ դաշնություն կազմող հանրապե-  
տությունների միջև վարչատարածքային սահմանազատման  
գործընթացը շատ ավելի դյուրին ընթացք կստանա:

Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների դաշ-  
նություն ստեղծելու գործընթացի արագացմանը նպաստեց 1921  
թ. նոյեմբերի 3-ին Քաքվում կայացած ՌԿ(Բ)Կ կենտկոմի կով-  
կասյան բյուրոյի պլենումը՝ անդրկովկասյան հանրապետություն-  
ների կուսակցական ղեկավարության մասնակցությամբ: Պլենու-  
մի ընդունած «Անդրկովկասյան հանրապետությունների դաշ-  
նության մասին» բանաձևում անհետաձգելի ու անհրաժեշտ հա-

մարմնի անդրկովկասյան հասրապետությունների միջև ռազմա-  
քաղաքական, ֆինանսատնտեսական և արտաքին քաղաքակա-  
նության ոլորտների միավորման դաշնային միությանական պայ-  
մանագրի ստորագրումը, միասնական վարչատնտեսական և  
քաղաքական կենտրոնի՝ Միությանական խորհրդի ստեղծումը:

Կովկասյան բյուրոյի պլենումի որոշումներին 1921 թ. նոյեմ-  
բերի 29-ին անդրադարձավ ՌԿ(Բ)Կ կենտկոմի քաղբյուրոն:  
Ակզբունքորեն միանգամայն ճիշտ և իրականանալի համարելով  
որոշումը՝ քաղբյուրոն նրա անմիջական իրագործումը համարեց  
վաղաժամ: Հանձնարարվեց դաշնության հարցը հանրապե-  
տություններում դարձնել համաժողովրդական քննարկման  
առարկա, և դրա օգտին լայն քարոզչություն վարելով՝ խնդիրը  
լուծել հանրապետությունների խորհուրդների համագումարների  
միջոցով: Գործընթացը, սակայն, հարթ չէր ընթանում, այլակադ-  
ծություն և դիմադրություն էր ցուցաբերում Վրաստանի կոմկուսի  
ղեկավարության մի մասը՝ հեղկոմի նախագահ Պ. Մդիվանու  
գլխավորությամբ: Նրանք գտնում էին, որ դաշնության կազմա-  
վորման համար չկան իրական նախադրյալներ, և այն պար-  
տադրված է կենտրոնական իշխանությունների կողմից: Պնդե-  
լով Անդրկովկասի հանրապետությունների իրական անկախու-  
թյունը պահպանելու անհրաժեշտության վրա՝ Մդիվանին և իր  
կողմնակիցները հանդես էին գալիս հանրապետությունների  
միջև երկկողմանի պայմանագրային հարաբերություններ հաս-  
տատելու առաջարկությամբ: Վրացական կողմի հիմնականում  
ճիշտ դիրքորոշումը կոմկուսի վերնախավի կողմից որակվեց որ-  
պես ազգային թեքում, որի դեմ անգիջում պայքար ծավալվեց:

Վրաստանի կոմկուսի կենտկոմի պլենումը սոյսբարր վար-  
չին, իսկ Ադրբեջանինը՝ դեկտեմբերին, հավանության արժա-  
նացրեցին Անդրդաշնության կազմավորման մասին Կովկասյան  
բյուրոյի որոշումը: Հայաստանի կոմկուսի կենտկոմը որոշմանը  
կողմ էր արտահայտվել ավելի վաղ՝ նոյեմբերի 14-ին: Գտնվելով  
սոցիալ-տնտեսական ծանր վիճակում՝ Հայաստանը, ի տարբե-  
րություն Վրաստանի և Ադրբեջանի, որոնց աշխարհագրական  
նպաստավոր դիրքը, բնական և նյութական պաշարները զգալի  
առավելություններ էին, ընդգրկվելով դաշնության մեջ, կորցնելու  
քիչ բան ուներ: Ընդհակառակը, Հայաստանի իշխանությունները  
դրանում էին տեսնում երկիրը և ժողովրդին արտաքին վտանգ-  
ներից պաշտպանելու և սոցիալ-տնտեսական ծանր վիճակից  
դուրս բերելու լավագույն ճանապարհը:

1922 թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի ունեցած Հա-  
յաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմկուսների ու պատգա-  
մավորների խորհուրդների համագումարները հաստատեցին  
Անդրկովկասյան դաշնություն կազմելու անհրաժեշտությունն ու  
հրատապությունը: Դրանց հաջորդեց Անդրկովկասի կուսկազ-  
մակերպությունների առաջին համագումարը, որը կայացավ 1922  
թ. փետրվարի 18-ից 22-ը: Համագումարը հաստատեց  
Անդրդաշնության Միությանական պայմանագրի տեքստը և  
Բարձրագույն տնտեսական խորհրդի մասին կանոնադրությու-  
նը: Քննարկված կազմակերպչական խնդիրների շարքում  
առանձնանում էր Կովկասյան բյուրոն լուծարելու և փոխարենը  
ՌԿ(Բ)Կ կենտկոմի Անդրկովկասի երկրամասային կոմիտե  
(Անդրերկրկոմ) ստեղծելու մասին համագումարի որոշումը: Վեր-

Անդրերկրյան և Կասպից ծովերի միջև գտնվող Անդրկովկասի համայնքի նախագահության կազմում ընդգրկվեց նաև Ա. Մյասնիկյանը:

Անդրերկրյանի 1922 թ. փետրվարի 23-ի պլենումի առաջին իսկ նիստում որոշվեց անհապաղ կյանքի կոչել Անդրդաշնությանը և այդ նպատակով հրավիրել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտրոնականների ներկայացուցիչների լիազոր կոնֆերանս: Վերջինս իր աշխատանքները սկսեց 1922 թ. մարտի 11-ին Թիֆլիսում: Մարտի 12-ին ընդունվեցին Անդրկովկասի հանրապետությունների դաշնային միություն կազմելու մասին պայմանագիրը և Բարձրագույն տնտեսական խորհրդի մասին կանոնադրությունը: Դրանով իրականություն էր դառնում Անդրկովկասի խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միությունը (ԱԽՍՀՄ): Լիազոր կոնֆերանսը թեև հաստատում էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի «լիակատար անկախությունը և ինքնուրույնությունը», սակայն իրականում Միությանական պայմանագիրը նախատեսում էր Անդրկովկասի հանրապետությունների ինքնիշխանության զգալի սահմանափակումներ: Մասնավորապես հանրապետություններում վերացվելու էին պետականությունն արտահայտող մի շարք առանցքային ժողովմատներ՝ ռազմական, արտաքին գործերի, արտաքին առևտրի, ֆինանսների և այլն: Այդ ոլորտների կառավարումը փոխանցվում էր Անդրդաշնության գործադիր մարմնին՝ Միությանական խորհրդին, որի նախագահությունը բաղկացած էր երեք հանրապետությունների ներկայացուցիչներից (Ա. Մյասնիկյան, Պ. Մդիվանի, Ն. Նարիմանով):

Անդրդաշնության ստեղծումը խորհրդային իշխանությունների համար ուներ զուտ քաղաքական նշանակություն: Նրա միու-

թեանական մարմինների կազմակերպչական թուլությունը, ինչպես նաև հանրապետությունների հակասությունները, այդ թվում՝ տարածքային-սահմանային սուր վեճերը, գործնականում հնարավորություն չտվեցին միության շրջանակներում հասնել համագործակցության ու փոխօգնության շոշափելի արդյունքների և ձեռքբերումների: Միությունը գոյատևեց ընդամենը մի քանի ամիս: 1922 թ. դեկտեմբերի 10-ից 13-ը Բաքվում հրավիրված Անդրկովկասի խորհրդների առաջին համագումարում ԱԽՍՀՄ-ն վերափոխվեց Անդրկովկասի խորհրդային Դաշնային Սոցիալիստական Հանրապետության (ԱԽԴՍՀ): Համագումարն ընդունեց նաև ԱԽԴՍՀ Սահմանադրությունը և որոշեց խորհրդային մյուս հանրապետությունների՝ ՌՍԴԽՀ-ի (Ռուսաստան), ՈւՍԽՀ-ի (Ուկրաինա) և ԲՍԽՀ-ի (Բելարուս) հետ միավորվել ԽՍՀՄ-ի կազմում:

Ի տարբերություն Անդրկովկասի դաշնային միության՝ հանրապետության կազմում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ինքնուրույնությունն ու իրավունքներն ավելի էին սահմանափակվում և ռազմաքրեցվում նվազագույնի: Անդրկովկասի դաշնային հանրապետությունը գոյություն ունեցավ մինչև 1936 թ. դեկտեմբերը:

Անդրկովկասյան Դաշնության կազմավորումից հետո Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի միջև գոյություն ունեցող խնդրահարույց հարցերի շարքում առաջնայիններից էին տարածքային-սահմանագծային խնդիրները: Բանն այն է, որ

<sup>1</sup> Մանրամասն տե՛ս Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, էջ 402-412:

սկզբունքային տարածայնությունների պատճառով որոշ դեպքերում հնարավոր չէր եղել միջպետական սահմանների մասին երկկողմ պայմանագրեր ստորագրել (մասնավորապես Հայաստանի և Ադրբեջանի միջև): Անգամ հանրապետությունների միջև ստորագրված պայմանագրերն ու համաձայնագրերը վերջնական չէին, տարակարծությունների տեղիք էին տալիս: Սրանք սահմանային շերտում գտնվող հողատարածքների, անտառների, աղբյուրների պատկանելության և օգտագործման հարցում հանգեցնում էին վեճերի, երբեմն՝ նույնիսկ ընդհարումների: Այս ամենին ավելանում էին քոչվոր և գաղթականների խնդիրները: Նշյալ իրողությունը Անդրդաշնության իշխանություններին հարկադրեց հողային հաձնաժողովներից գնատ ստեղծել նաև նշյալ հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողովներ:

Նշված խնդիրների կարգավորման գործում առաջնային դեր ուներ Անդրդաշնության Կենտրոնական գործադիր կոմիտեն (Կենտգործկոմ, ԿԳԿ): Նույն սկզբունքով հանրապետություններում այդ գործառույթը վերապահված էր կենտգործկոմներին և գավառային գործկոմներին: Այսպես՝ Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի կողմից 1922 թ. փետրվարի 2-ին ընդունված Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՄԽՀ) Սահմանադրության 37-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի խորհուրդների համագումարի և Կենտրոնական գործադիր կոմիտեի իրավասության ներքո էր «Հանրապետության սահմանների որոշումն ու փոփո-

խումը, նաև դրա մասերի, ինչպես և Հանրապետությանը պատկանող իրավունքների օտարումը»<sup>1</sup>:

Անդրդաշնության գոյության առաջին տարիներին սահմանային խնդիրներով, բացի պետական մարմիններից, նախկինի նման շարունակեցին զբաղվել նաև կուսակցական մարմինները (ի դեմս ՌԿ(Բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի): Սահմանային վեճերը կարգավորող հանձնաժողովներ են կազմակերպել նաև Անդրդաշնության Միությանական խորհուրդը, նույնիսկ Կովկասյան կարմիր բանակի հրամանատարությունը<sup>2</sup>:

1922 թ. մայիսի 8-ին Միությանական խորհուրդը կազմեց Հայաստանի և Ադրբեջանի սահմանային վեճերը կարգավորող հանձնաժողով: Իսկ մայիսի 15-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմն անդրկովկասյան երեք հանրապետությունների տարածքային-սահմանային վեճերը լուծող հանձնաժողովում ՀՄԽՀ ներկայացուցիչ նշանակեց Մ. Ղարաբեկյանին<sup>3</sup>: Գոյություն ունեցող հողային վեճերը կարգավորելու նպատակով 1922 թ. հոկտեմբերի 30-ին պատկառելի կազմով առանձին հանձնաժողով կազմակերպեց նաև ՌԿ(Բ)Կ Անդրերկրյանը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել էին երկրամասի երեք նշանավոր բոլշևիկ գործիչները՝ Գ. Օրջոնիկիձեն, Ն. Նարիմանովը, Ա. Մյանսիկյանը<sup>4</sup>:

Անդրկենտգործկոմի նախագահության 1923 թ. փետրվարի 5-ի որոշմամբ ստեղծվեց գավառների հողային վեճերը որոշող


<sup>1</sup> ՀՄԽՀ Սահմանադրություն, «ՀՄԽՀ դեկրետների և որոշումների հավաքածու», 1922, N 8, էջ 63:

<sup>2</sup> Մասիկյան Ա.Լ., Հայաստանը Անդրկովկասյան Դաշնության կազմում, Վանաձոր, 2013, էջ 175:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>4</sup> Ղազարխեջյան Վ.Ն., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., Երևան, 1975, էջ 130:

# ՀԱՄԱՀ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎԱՌՈՐՄԱԸ (1920 թ. դեկտեմբեր - 1922 թ. սկիզբ)



# ՀՄԽՀ-ի ԵՎ ԼՂԻՄ-ի ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏՆԵՐԸ 1923-1930-ական թր



© Զարտեգի հեղինակ՝ Գեղամ Բաղայան  
 Զարտեգագիր՝ Մարտին Մարտիրոսյան  
 Խմբագիր՝ Կարեն Խաչատրյան

## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- ՀՄԽՀ-ի արևելյան և հարավային սահմաններն ըստ Երևանի 02.12.1920թ. համաձայնագրի
- Խորհրդա-իրանական սահմանը
- ՀՄԽՀ-ի սահմանները Չանգեզուրի, Ալ լճերի և Շամշադինի (Տավուշ) հատվածներում 1921-1926թթ.
- Հայկական ԽՍՀ-ի արևելյան և հարավ-արևմտյան սահմանները 1936թ.
- Լեռնային Ղարաբաղի տարածքը (շուրջ 8000կմ<sup>2</sup>)
- Նորաստեղծ ԼՂԻՄ-ի (տարածքը՝ շուրջ 5000կմ<sup>2</sup>) սահմաններն ըստ ԱդրՄԽՀ-ի ԿԳԿ-ի 06.08.1923թ. հրամանագրի և ԼՂԻՄ-ի 1924թ. Սահմանադրության տվյալների
- ԼՂԻՄ-ի (տարածքը՝ շուրջ 4400կմ<sup>2</sup>) սահմանները 1940թ.
- ՀՄԽՀ-ից և ԼՂԻՄ-ից բռնագավթված տարածքները, որոնք 1923-1925թթ. ընդգրկվեցին այսպես կոչված «Բրդստանի գավառի» կազմում
- ՀՄԽՀ-ից տարանջատված և ԱդրՄԽՀ-ին բռնակցված նախկին Չանգեզուրի գավառի հարավ-արևելյան հատվածը
- Նորաստեղծ ԼՂԻՄ-ից դուրս թողնված և ԱդրՄԽՀ-ին բռնակցված Հյուսիսային Արցախի (Գյուլիստան-Գետաշեն) շրջանը՝ ավելի քան 1000կմ<sup>2</sup> տարածքով
- 1920-ական թթ. կեսից մինչև 1930-ական թթ. վերջը ՀՄԽՀ-ից (ՀԽՍՀ) և ԼՂԻՄ-ից ԱդրՄԽՀ-ին (ԱԽՍՀ) բռնակցված տարածքները
- ԱդրՄԽՀ-ին 1921թ. բռնակցված Գարդմանի (Հայկական Գանձակ) տարածքը

կանաչության հասնաժողով, որի նախագահ նշանակվեց ՀՄԽՀ կենտրոնականի նախագահ Աարո Համբարձումյանը, ում նույն թվականի մայիսի 14-ին փոխարինեց Աարգիս Կասյանը<sup>1</sup>: Իսկ արդեն Անդրկենտրոնականի նախագահության 1924 թ. հունվարի 30-ի նիստում որոշում կայացվեց նշյալ հանձնաժողովը վերանվանել «Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, քրոգաագործման վեճերը լուծող հանձնաժողով» (փաստաթղթերում կրճատ անվանվում է նաև Հողհանձնաժողով) և հաստատել հանձնաժողովի հետևյալ կազմը. նախագահ՝ Աարգիս Կասյան, անդամներ՝ Ս. Յաղուբով և Ն. Խոմերիկի<sup>2</sup>:

Անդրկենտրոնականի նախագահության 1927 թ. հունիսի 20-ի նիստում քննարկվեց Անդրդաշնության հանրապետությունների միջև ծագած հողային և անտառային վեճերի վերաբերյալ հանձնաժողովի կազմած կանոնադրության նախագիծը, ինչը նպատակ ուներ գոյություն ունեցող սահմանային վեճերին լուծումներ գտնել: Ըստ այդմ էլ որոշվեց Կենտրոնականի նախագահության հաստատմանը ներկայացնել հանձնաժողովի կանոնադրության խմբագրված տարբերակը: «Անդրդաշնության հանրապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի» կանոնադրության առաջին կետի համաձայն՝ Անդրկենտրոնականի նախագահության 1924 թ. հունվարի 30-ի որոշմամբ գործող «Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, քրոգաագործման վեճերը լուծող հանձնաժողովը» վերանվանվեց «Անդրդաշնության հան-

րապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի»<sup>3</sup>: Հանձնաժողովը գործելու էր Անդրդաշնության կենտրոնականի ենթակայության ներքո՝ հաշվետու լինելով նրան: Նրա մեջ մտնելու էին նախագահն ու 2 անդամները՝ նշանակված Անդրկենտրոնականի կողմից, ինչպես նաև 6 անդամներ, որոնց ներկայացնելու էին դաշնության կազմի մեջ մտնող 3 հանրապետությունները: Այսինքն՝ յուրաքանչյուր հանրապետությունից նշանակվելու էր 2 ներկայացուցիչ, որոնք հաստատվում էին Անդրկենտրոնականի նախագահության կողմից: Որոշման հատուկ նետով սահմանվում էր, ոչ Անդրդաշնության տարածքում գործող պետական հիմնարկությունները «պարտավոր են ներկայացնելու հանձնաժողովին բոլոր պահանջվող տեղեկությունները: ու նյութերը», նաև անհրաժեշտ տեղեկություններ ու բացատրություններ տալ հանրապետությունների կենտրոնականներին<sup>4</sup>:

Անդրդաշնության Կենտրոնականի նախագահության 1928 թ. հուլիսի 22-ի նիստում հաստատվեց Կենտրոնականի առընթեր հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի նոր կազմ. Ա. Կասյան (նախագահ), Եգանով (նախագահի տեղակալ), Ս. Յակոբով, Գ. Ստուբոս (անդամներ): Հանձնաժողովի մեջ ընդգրկվելու էին նաև Անդրդաշնությունը ներկայացնող երեք հանրապետություններից երկուական ներկայացուցիչներ<sup>5</sup>: Անդրկենտրոնականի նախագահության սեպտեմբերի 2-ի նիստում հաստատվեցին հանձնաժողովի նոր անդամները. ԱՄԽՀ-

<sup>1</sup> Ջրային վեճերի լուծումը հանձնվել էր Անդրկովկասի ջրային տնտեսությանը:

<sup>2</sup> ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1763, թ. 20-21:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 1412, թ. 34: Հայաստանի Կենտրոնականի նախագահության 1929 թ. օգոստոսի 7-ի որոշմամբ հանձնաժողովում ՀՄԽՀ ներկայացուցիչներ նշանակվեցին Ա. Երզնկանը և Վ. Մամիկոնյանը (ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 77, 86):

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 115, 131 շրջ.:

<sup>2</sup> Վրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ), ֆ. 607, ց. 1, գ. 23, թ. 6:

ից՝ Մ. Բաղիրովը և Մ. Շամսադինսկին, ՀՍԽՀ-ից՝ Ա. Երզնկյանը և Վ. Մամիկոնյանը, ՎՍԽՀ-ից՝ Ս. Զուրեվին և Վ. Վաշակիձեն՝:

Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև գոյություն ունեցող տարածքային-սահմանային վեճերին վերջ տալուն ուղղված Անդրկենտրոնական նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում կայացված հայտնի որոշումից և դրա կենսագործմանն ուղղված գործուն քայլերից հետո Դաշնության ղեկավար շրջանակները հանգեցին այն համոզման, որ այլևս նպատակահարմար չէ Անդրկենտրոնական կից գործող Հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի գոյությունը: 1930 թ. սեպտեմբերի 22-ին Դաշնության ԿԿԿ-ի նախագահությունը որոշում ընդունեց հանձնաժողովը լուծարելու մասին: Այս որոշման հիման վրա սեպտեմբերի 30-ին Կենտրոնական փոքր նախագահությունը որոշում կայացրեց հանձնաժողովի լուծարման կարգի մասին: Ըստ այդմ՝ հանձնաժողովի բոլոր գործերը (նաև խնդրահարույց սահմանների վերաբերյալ) փոխանցվեց Անդրդաշնության հողագործության ժողկոմատին, որի իրավասությանը հանձնվեց լուծարվող հանձնաժողովի լիազորությունները<sup>2</sup>:

Հարկ է փաստել, որ Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի գավառների ու շրջանների միջև առկա տարածքային-սահմանային վեճերին լուծում տալու նպատակով Անդրդաշնության գոյության ողջ ընթացքում վերջինի ղեկավար մարմինների նախաձեռնությամբ ու հսկողությամբ ստեղծվել և գործել են կենտ-

րոնական ու տեղական բազմաթիվ հանձնաժողովներ: Վարչատնտեսական սահմաններ հաստատելու նպատակով ստեղծված տեղական հանձնաժողովների մեջ մտնում էին մեկական ներկայացուցիչներ շահագրգիռ հանրապետություններից և Անդրկենտրոնական կողմից նշանակված ներկայացուցիչը: Տեղական հանձնաժողովների կողմից պատրաստված նյութերն ուղարկվում էին միութենական հանձնաժողովին, իսկ նրա միջոցով՝ Անդրկենտրոնական նախագահություն, որի որոշումները համարվում էին վերջնական: Անդրդաշնության սահմաններում սահմանագծային աշխատանքներ իրականացնող կենտրոնական և տեղական հանձնաժողովների աշխատանքները կատարվում էին ձգձգումներով, հաճախ ուղեկցվում տեղական բնակչության դժգոհություններով:

## 2.2. Հայ-ադրբեջանական տարածքային-սահմանային խնդիրները

Անդրկովկասյան դաշնության կազմավորումից հետո հատկապես խնդրահարույց էր Խորհրդային Հայաստանի և Ադրբեջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՍՍԽՀ) գրեթե ամբողջ սահմանային գոտում գոյություն ունեցող տարածքային-սահմանային սուր վեճերին լուծում գտնելը: Սա դժվարին խնդիր էր, քանի որ վիճելի տարածքների վերաբերյալ կողմերը սկզբունքային տարաձայնություններ ունեին: Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողովի կողմից 1925 թ. հունվարի 2-ին պատրաստված զեկուցագրի

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 199, թ. 12, գ. 1412, թ. 89:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 240, թ. 2 և շրջ.:

համաձայն՝ ՀՍԽՀ-ի և ԱՄԽՀ-ի ողջ սահմանային շերտում վեճեր գոյություն ունեին 2 հատվածում՝ համապատասխանաբար Դիլիջան-Ղազախի, Զանգեզուր-Քրդստանի գավառների միջև: Համարվում էր, որ վեճեր չկային համապատասխանաբար Դիլիջանի, Նոր Բայազետի և Շամխորի, Նոր Բայազետի և Գյանջալի, Նոր Բայազետի և Քրդստանի, Դարալագյազի և Քրդստանի գավառների միջև<sup>1</sup>: Փաստորեն, Անդրդաշնության օրոք հայ աղքեղացիների սահմանում առանցքային վեճերը, որոնց դեպքում կողմերը սկզբունքային տարակարծություններ ունեին, վերաբերվում էին Շինիխ-Այրումի շրջանի, Կապանի 21 գյուղերի և Մեղու երեք գյուղերի պատկանելության հարցին, որին ավելացավ նաև Ալ լճերի խնդիրը:

Ստորև անդրադառնանք Անդրդաշնության օրոք ՀՍԽՀ հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան սահմաններում հանրապետության ունեցած տարածքային կորուստներին ու մասնակի ձեռքբերումներին, ինչպես նաև ինքնավար Նախիջևանի հետ սահմանի հաստատմանը:

\* \* \*

1920-ական թվականներին ՀՍԽՀ Դիլիջանի և ԱՄԽՀ Ղազախի գավառների միջև առկա ամենասուր տարածքային վեճը Շինիխ-Այրումի շրջանի հողատարածքների պատկանելության խնդիրն էր: Ընդհանուր առմամբ, այդ շրջանում վիճելի էր համարվում 15.659 դեյալտին տարածք, որից 6.751 դեյալտինը անտառներ էին, 3.621 դեյալտինը՝ ամառային արոտավայրեր, իսկ մնացած մասը՝ անասնապահական ձմեռանոցներ և գյու-

ղատնտեսության համար նպաստազոր ոռոգատարածքներ: Այդ տարածքի վրա գտնվում էր 34 գյուղ ու գյուղակ, ուր բնակվող թուրքերի թիվը 4.124 էր (77% ծովա): 1923 թ. ապրիլին Դիլիջանի և Ղազախի գավառների վարչատնտեսական սահմանազծում անցկացվեց, որը հաստատվեց Անդրկենտրոնի կազմում գտնվող գավառների հողային վեճերը որոշող հանձնաժողովի 1923 թ. ապրիլի 28-ի նիստում: Որոշման համաձայն Շինիխ-Այրումի շրջանում գտնվող 5.000 դեյալտին հողատարածքը ՀՍԽՀ Դիլիջանի գավառից հանձնվեց ԱՄԽՀ Ղազախի գավառին<sup>2</sup>: Սակայն այս որոշման հիման վրա սահմանազատում չկատարվեց: 1923 թ. մայիսի 14-ին Անդրկենտրոնի նախագահության որոշմամբ Դիլիջանի և Ղազախի գավառների միջև վեճերը որոշող հատուկ տեղական հանձնաժողովի ղեկավար նշանակվեց Ա. Յաղուրովը, ում հանձնարարվեց քննություն կատարել և 2 շաբաթվա ընթացքում Կենտրոնում ուղարկել միճելի հարցերի վերաբերյալ կայացված որոշումները<sup>3</sup>: Այդուհանդերձ, իրավիճակը շարունակում էր լարված մնալ:

1925 թ. հունիսին տարածաշրջան գործուղվեցին Հողահանձնաժողովի աշխատակիցներ Յա. Կոչետկովը և Վ. Չխենկեյին, իսկ նույն թվականի օգոստոսին՝ անտառային տեղամասերի հատուկ փորձագետներ<sup>4</sup>: Բանն այն է, որ 1923-1924 թթ. Ղազախի հողաշինարարական խմբի կազմած հատակագիծը հիմնված չէր 1923 թ. ապրիլի 28-ի որոշման վրա, և Խորհրդային Աղքեղացիներն ապօրինաբար տիրացել էր ավելի մեծ հողատարածքի, քան նախատեսվում էր նշված որոշմամբ: Խորհրդային Աղքեղացիներ-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 195, ֆ. 112, ց. 2, գ. 31, թ. 36:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 131:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 195:

<sup>4</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 168, թ. 23 և շրջ.:

կայացուցիչները, առաքելով աստառապետին, խախտել էին 1923 թ. որոշված սահմանը և գրավել շուրջ 7.000 դեպյատին տարածք: Շարունակելով ապօրինի գործողությունները՝ աղբբեջանցիները Ղազախի գավառի հաշվին իրենց ձեռքբերումը հասցրել էին մինչև 11.800 դեպյատին<sup>1</sup>: ՀՍԽՀ հողագործության ժողկոմատի բազմաթիվ դիմումների հիման վրա Հայկենտգործկոմի նախագահությունը 1925 թ. հոկտեմբերի 13-ին որոշեց դիմել Անդրկենտգործկոմին՝ առաջարկելով մինչև սահմանագծումը դադարեցնել հողաշինարարությունը Շինիխ-Այրումի շրջանում և ապօրինի գործողությունների համար պատասխանատվության ենթարկել Ղազախի հողաշինարարական խմբին: Հայկական կողմի կարծիքով՝ 1923 թ. ապրիլի 28-ին որոշված սահմանագիծը պետք է անցկացվեր երկու հանրապետությունների լիազորների ներկայությամբ, և միաժամանակ Դիլիջանի ու Ղազախի գավառների միջև սեպածև մտնող համահավասար հողամասի փոխանակություն կատարել: Այսինքն՝ 4.000 դես. տեղամասի դիմաց ՀՍԽՀ ԿԳԿ-ն առաջարկում էր տարածքով ու բնակչության թվով համահավասար տեղամաս տրամադրել Բաշքենդի շրջակայքում: Այս դեպքում խնդիրն այն էր, որ Շինիխ-Այրումի շրջանի թուրք և Բաշքենդի շրջանի հայ բնակչությունը մերժում էին տեղափոխվել հարևան հանրապետություններ<sup>2</sup>: Փաստորեն, ՀՍԽՀ իշխանությունները ոչ առանց հիմքերի մտավախություն ունեին, որ ազգագրական էինք վրա կատարված այս սահմանազատումը հետագայում կարող է կրկին բարդություններ առաջացնել վարչական վերաբաժանման ժամանակ և, բացի այդ,

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 31, թ. 36:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 32-37:

սեպածև խրվելով Հայաստանի տարածքում, աղբբեջանաբնակ գյուղերը «սովորության համաձայն» ապագայում կփորձեին հայկական գյուղերի հաշվին ընդլայնել իրենց հողատնարածքները:

1925 թ. նոյեմբերի 2-ի նիստում Անդրկենտգործկոմի հողահանձնաժողովը, քննելով հարցի վերաբերյալ եղած նյութերը, եկավ այն եզրակացության, որ խնդրի վերջնական լուծման համար անհրաժեշտ է շուտափույթ նիստ հրավիրել՝ երկու հանրապետությունների հողժողկոմների մասնակցությամբ: Դրանից հետո նոյեմբեր ամսվա ընթացքում հողահանձնաժողովը մի քանի անգամ հարցը վերանայելու համար նիստեր հրավիրեց, որոնց Աղբբեջանի ներկայացուցիչը չժամանեց: ԱՄԽՀ հողժողկոմ Գ. Բունիաթազադեն ներկայացավ միայն 1927 թ. հունվարի 11-ին Ա. Կասյանի գլխավորությամբ տեղի ունեցած Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողերի, անտառների, ջրօգտագործման վեճերը լուծող հանձնաժողովի և նույն օրը տեղի ունեցած Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստերին, որոնց ՀՍԽՀ-ի կողմից մասնակցում էր հողժողկոմ Ա. Երզնկյանը<sup>1</sup>: Այդ որոշման համաձայն Շինիխ-Այրումի շրջանի ամբողջ տարածքը (11.659 դեպյատին) ճանաչվեց Ղազախի գավառի մաս, իսկ շրջանին կից անտառի վիճելի տարածքը (4.000 դեպյատին)՝ Դիլիջանի մաս: Միևնույն ժամանակ, նկատի ունենալով, որ ՀՍԽՀ Բաշքենդ գյուղն այդ դեպքում կհայտնվեր Ղազախի գավառում, որոշվեց առանձնացնել մի հողաշերտ՝ ամառային արոտավայր, որը տարածքային առումով գյուղը կկապեր Դիլիջանի հետ: Սակայն հենց նույն օրը որոշումը չեղյալ համարվեց, քանի որ Հայաստանի ներկայացուցիչ Ա.

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 195-196:

Շրջայանն այս հարցը կապում էր ՀՄԽՀ և ԱՄԽՀ միջև Այլ լճեր ամառային արուսաւայրի 12.000 դեռյառին տեղամասի համար ընթացող վճի հետ, որը նախատեսւում էր հանձնել Նոր Բայազետի գաւառին<sup>1</sup>: Նշենք, որ կողմերը դեռևս 1923 թ. ապրիլից Անդրդաշնութան ԿԳԿ-ի նիստերում արծարծվող այս հարցի առնչությամբ կրկին համաձայնության չեկան: Նշալ հարցի վերաբերյալ վերջնական համաձայնություն կայացվեց Անդրկենտրոնի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում, որտեղ որոշվեց հաստատել 1927 թ. հունվարի 11-ին կայացած համաձայնությունը<sup>2</sup>: Նշված որոշմամբ Բաշքենդը ՀՄԽՀ-ի հետ էր կապվելու նեղ հողաշերտով, որը հետագայում անցավ Ադրբեջանին<sup>3</sup>:

Անդրդաշնութան ԿԳԿ-ն քայլեր ձեռնարկեց կայացված որոշումը կենսագործելու նպատակով: 1929 թ. ընթացքում մասնավորապես Շինիխ-Այրումի անառատային շրջաններում տեղադրվեց սահմանային 45 տեղանշան՝ պլանով նախատեսված 40 կմ երկարության վրա: Դատրաստվել էր նաև համապատասխան նախագիծ՝ Բաշքենդ գյուղը հարակից տարածքներով ՀՄԽՀ-ին միացնելու համար: Հետագուովել էր նշված գյուղի և Շինիխ-Այրումի գյուղնկերության հողօգտագործման դրույթունը, տեղում քննվել և պլանի մեջ էր ներառվել վիճելի 4.844 հեկտար տարածքը: Կենտրոնի որոշմամբ նախատեսվում էր նաև Շինիխ-Այրումի շրջանի հողերից օգտագործման համար մի փոքր մաս հատկացնել Բաշքենդ գյուղի բնակիչներին: Սակայն, ինչպես ակնհայտ երևում է Անդրկենտրոնի նախագահությա-

յան 1929 թ. նոյեմբի 20-ի սրտար սկիզբով, արտահանաչատրել շրջանում հողի սակավ վիճելը, սերովեց յուրաքանչյուր շնչին գուն 0,75 հեկտար տարածք տրամադրելու առաջարկը<sup>1</sup>:

Սուր վեճեր գոյություն ունեին նաև Շինիխ-Այրումի շրջանին սահմանակից առանձին գյուղերի միջև գտնվող հողատարածքների համար, որոնց լուծումը, կապված հողանձնատողովի աշխատանքների ոչ ճիշտ կազմակերպման, երբեմն թույլ տրված սխալների և ապօրինությունների հետ, երկարաձգվում էր: Այսպես՝ 1922 թ. սահմանային վեճեր գոյություն ունեին հայկական և մուսուլմանական Թաթլու, Չախմախի (ԱՄԽՀ) և Լալիգեղ (Լալաքենդ) (ՀՄԽՀ), գյուղերի, Կոթի (ՀՄԽՀ) և Դաշսագի (ԱՄԽՀ) գյուղերի միջև «Կարաչալ» տեղամասի համար՝ 304 դեսյատին տարածքով, Կողբ (ՀՄԽՀ) և Շիխի (ԱՄԽՀ) գյուղերի միջև «Չամչա» (փաստաթղթերում հանդիպում է նաև «Չոմչա» տարբերակով) տեղամասի համար՝ 940 դեսյատին տարածքով, Դովեղ (ՀՄԽՀ) և Քյամարլի (ԱՄԽՀ) գյուղերի միջև «Բաղման-ջալախ» կոչվող տեղամասի նկատմամբ և «Աջի» (ոուսերեն՝ Аджы) տեղամասը՝ 1002 դեսյատին տարածքով, Բարանա (ՀՄԽՀ) և Դալմախի (ԱՄԽՀ) գյուղերի միջև<sup>2</sup>:

Վերը թվարկված գյուղերի միջև վիճելի հողատարածքների պատկանելության հարցը մանրամասն քննարկվեց Տավուշի, Քարվանսարայի և Ղազախի գավառների սահմանային շրջանների վեճերը կարգավորող հանձնատողովի 1922 թ. մայիսի 27-ի նիստում, որտեղ թվում էր, թե վերջնականորեն լուծում տրվեց քննարկվող հարցերին՝ մասնավորապես հայկական և մուսուլ-

<sup>1</sup> ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1136, թ. 17 և շրջ.:

<sup>2</sup> ՀԱԱ ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 78:

<sup>3</sup> Մանակյան Ա.Լ., նշվ. աշխ., էջ 182:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 1412, թ. 37 և շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 168, թ. 26 և շրջ.:

ժամական գյուղերի միջև ծագած վեճերին, որն առավել խնդրահարույց էր: Բանն այն էր, որ մուսուլմանները գրավել էին հայերին պատկանող, բայց իրենց տիրույթների մեջ խրված հողերի մեծ մասը և հրաժարվում էին վերադարձնել: Նիստում որոշվեց հայերին վերադարձնել իրենց հողակտորները, իսկ մուսուլմաններին հնարավորություն ընձեռել մինչև քերքի հավաքումն օգտվել հայկական հողերից, որից հետո վերադարձնել: Այս և մյուս հողատարածքների հարցերին նիստում որոշակի լուծում տրվեց, որն ամրագրվեց Անդրդաշնության Միութենական խորհրդի նախագահության 1922 թ. մայիսի 29-ի նիստում: Միևնույն ժամանակ առաջարկվեց տեղերում ստեղծել առանձին հարցերի կարգավորման խառը հանձնաժողովներ:

Սակայն խնդիրն այսքանով չավարտվեց: 1922 թ. հունիսի 6-ին Խորհրդային Ադրբեջանի ժողովրդական կոմիսարների խորհրդի միջնորդությամբ Միութենական խորհուրդը որոշեց վերանայել հողային վեճերի մասին կայացված որոշումները<sup>1</sup>: Արդեն նույն թվականի հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմի նախագահության նիստում որոշվեց ստեղծել նոր հանձնաժողով՝ Գ. Օրջոնիկիձե, Ն. Նարիմանով, Ա. Մյասնիկյան կազմով<sup>2</sup>: Միևնույն ժամանակ արձանագրվեց, որ Միութենական խորհրդի մայիսի 29-ի նիստի որոշումները կյանքի չեն կոչվել: Մա ակնհայտորեն ադրբեջանական իշխանությունների վարած «հետևողական» աշխատանքի արդյունքն էր: Այդ էր պատճառը, որ գյուղերի միջև գտնվող հողատարածքների հարցի լու-

ծումը երկարաձգվեց մինչև 1920-ական թվականների վերջը: Ընդ որում, գյուղերի միջև վեճերի ծագման նախապատմությունը ներկայացնող տվյալներից ակնհայտ երևում է, որ հաճախ վեճերն առաջանում էին ադրբեջանցի խոշոր հողատերերի (փաստաթղթերում նշվում է՝ կալվածատերեր) պատճառով, ովքեր իրենց հողակտորները վաճառում էին հայերին, իսկ հետո առանց հիմքի հետ էին պահանջում:

1923 թ. հոկտեմբերի 18-ին տեղի ունեցած Անդրկենտրոնկոմի նախագահության նիստում որոշվեց Կողբ (ՀԽԱՀ) և Շիխլի (ԱՍԽՀ) գյուղերի միջև վիճելի համարվող «Չամչա» տեղամասը տալ շիխլիցիներին: Սակայն այս որոշման դեմ հանդես եկավ ՀՍԽՀ ԿԳԿ-ն՝ պատճառաբանելով կողբեցիների սակավահող լինելը և խեղդեց-հարցը վերանայել: Արդյունքում՝ Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահությունը 1924 թ. մարտի 17-ին որոշեց վերանայել որոշումը: Սահմանվեց, որ հարցի վերաբերյալ Կենտրոնկոմի հողային վեճերը որոշող կենտրոնական հանձնաժողովի կայացրած որոշումը վերջնական և անբեկանելի պիտի լինի<sup>3</sup>: Քննելով երկու գյուղերի հողերի քանակի, չափի և քնակչության վիճակի վերաբերյալ ներկայացված նյութերը՝ Հողհանձնաժողովի 1924 թ. հոկտեմբերի 27-ի նիստում որոշվեց տեղամասը հանձնել Կողբին<sup>3</sup>:

Հայկական Դուվեղ և ադրբեջանական Բյամարի գյուղերի միջև վիճելի համարվող «Բաղմանչալախ» տեղամասի հարցը քննարկվեց Դաշնության գավառների միջև սահմանները որոշող

<sup>1</sup> ՀԱՄ, ֆ. 607, ց. 1, գ. 84, թ. 1:

<sup>2</sup> Хармаидарни С.В., Ленин и становление Закавказской федерации 1921–1923 гг., Ереван, 1969, с. 278.

<sup>3</sup> ՀԱՄ, ֆ. 112, ց. 1, գ. 35, թ. 50 և շրջ.:

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 46 և շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 168, թ. 38 և շրջ.:

<sup>3</sup> Нифталиев И., Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2010, с. 187.

հանձնաժողովի 1923 թ. սեպտեմբերի 28-ի նիստում, որտեղ որոշվեց տեղամասը հանձնել Դովեդին: Այս որոշումը դժգոհությամբ ընդունվեց քամարիեցիների կողմից<sup>1</sup>: Արդյունքում՝ 1925 թ. որոշվեց տեղամասը հավասարապես բաժանել կողմերի միջև:

Հատկապես դժվար էր հայկական Բարանա և ադրբեջանական Ղայմախի գյուղերի միջև գտնվող 1002 դեյաստին տարածքով «Աջի» տեղամասի հարցը, որը 1918–1920 թթ. գտնվում էր Հայաստանի Հանրապետության կազմում: Տարածքին տիրելու դեպքում Ադրբեջանը հնարավորություն կունենար Հայաստանի հյուսիսարևելյան տարածքները կտրել միմյանցից: Բացի այդ՝ այստեղի անտառները բազմազան են, իսկ արտավայրերը՝ անասնապահության համար չափազանց հարմար: Ի վերջո, Անդրկենտրոնումի հողի հանձնաժողովի 1924 թ. հուլիսի 31-ի որոշմամբ տեղամասի հյուսիսարևելյան մասը՝ 612 դեյաստին տարածքով, հանձնվեց ԱՄԽՀ-ին, իսկ հարավարևմտյան մասը՝ 390 դեյաստին տարածքով, ՀՄԽՀ-ին<sup>2</sup>:

Ադրբեջանը հավակնություններ էր հանդես բերում նաև Լալիգեղ և Չախմախի գյուղերի միջև ընկած 69 դեյաստին տարածքի նկատմամբ: 1922 թ. սկսած քննարկումները հանգեցրին նրան, որ 1924 թ. հոկտեմբերի 8-ին որոշվեց այն թողնել Դիլիջանի գավառի սահմաններում<sup>3</sup>: Ռազմավարական կարևոր նշանակություն ունեին նաև այդ շրջանում գտնվող և Դիլիջանի գավառին պատկանող Սոֆու, Բարխուդարու և Վերին Աքսիկարու (Ոսկեպար) գյուղերը՝ ընդհանուր 3104 դեյաստին տարածքով, որոնք Անդրդաշնության ԿԳԿ-ի հողային և անտառային վեճերը

լուծող տեղական հանձնաժողովի 1929 թ. հուլիսի 19–20-ր որոշմամբ հանձնվեցին Դիլիջանի գավառին<sup>4</sup>:

Թեև Անդրկենտրոնումի նախագահության գործուն միջամտության արդյունքում 1929 թ. ընթացքում ՀՄԽՀ-ի հյուսիսարևելյան սահմանում առկա տարածքային վեճերի հիմնական մասը «լուծվել» էր, այդուհանդերձ գոյություն ունեին մասնակի վեճեր, որոնց լուծումը երկարաձգվեց մինչև Անդրդաշնության լուծարումը:

1930-ական թվականների սկզբներին ադրբեջանցիները հավակնություններ ներկայացրեցին ՀՄԽՀ Շամշադինի և ԱՄԽՀ Գետաբեկի շրջանների միջև գտնվող անտառային տարածքի նկատմամբ: Անդրդաշնության ԿԳԿ-ի կայացրած որոշման համաձայն 1930 թ. այդ տարածքը ՀՄԽՀ մաս էր հանդիսանում, որն ամրագրվել էր 1932 թ. հրատարակված պետական քարտեզում: Ադրբեջանական կողմը տարբեր քայլերի էր դիմում՝ հաստատված սահմանագծի խախտմանը հասնելու համար: Բանն այնտեղ հասավ, որ 1936 թ. հունիսին երկու կողմերի մասնակցությամբ հանձնաժողով կազմվեց, որը տեղում քննարկեց Շամշադինի և Գետաբեկի շրջանների միջև առկա հողային-անտառային վեճերը և համապատասխան որոշում կայացրեց: Արդյունքում՝ որոշվեց շրջանների սահմանաբաժանման համար հիմք ընդունել 1930 թ. Անդրդաշնության ԿԳԿ-ի կայացրած որոշումը<sup>5</sup>:

Ի դեպ, Խորհրդային Հայաստանի հյուսիսարևելյան հատվածում 1930-ական թվականների կեսերին սիճելի էր համար-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 168, թ. 39, գ. 143, թ. 95 և շրջ:

<sup>2</sup> Нифгалтев И., նշվ. աշխ., էջ 187:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 192:

<sup>4</sup> Նույն տեղում:

<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 687, թ. 9, 13:

վում ՀՍԽՀ Իջևանի և ԱՍԽՀ Դազախի շրջանների համապատասխանաբար Բաղանիս և Բաղանիս-Այրում գյուղերի միջև գտնվող Թարաքյամազարի հողակտորը: Խնդիրը կարգավորելու նպատակով ստեղծված Հայկական և Ադրբեջանական ԽՍՀ կենտգործկոմների միացյալ հանձնաժողովը 1937 թ. սեպտեմբերի 13-ին որոշեց 30 հա տարածքով Թարաքյամազարի վիճելի հողամասը հանձնել Իջևանի Բաղանիս գյուղի օգտագործմանը, իսկ Իջևանի շրջանի ամառային արոտավայրերից 120 հա հանձնել Դազախի Բաղանիս-Այրում գյուղի օգտագործմանը: Նշված որոշումը հաստատվեց ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահության 1937 թ. հոկտեմբերի 16-ի նիստում: Հանրապետության հողփոխումին հանձնարարվեց 10 օրվա ընթացքում իրականացնել կայացված որոշումը<sup>1</sup>:

Այսպիսով՝ Անդրկովկասյան դաշնության օրոք, բազմաթիվ քննարկումներից հետո, ի վնաս հայկական շահերի և Խորհրդային Հայաստանին պատկանող տարածքների կորստի հաշվին «լուծում տրվեց» հանրապետության հյուսիսարևելյան սահմաններում գոյություն ունեցող տարածքային վեճերին: Դրա հետևանքով Խորհրդային Հայաստանը և նրա իրավահաջորդը հանդիսացող Հայաստանի երրորդ Հանրապետությունը հայտնվեցին ռազմավարական տեսակետից աննպաստ պայմաններում:

\* \* \*

Հայաստանի առաջին հանրապետության տարիներին հայկական իշխանությունը տարածվում էր նաև Եփզավետպոլի

<sup>1</sup> Նույն տեղում, ց. 3, գ. 328, թ. 2:

Մանասյի նահանգի Անաճշլիզի գյուղոթ արևմտյան սահմանում՝ նային Մեծ և Փոքր Ալ լճերի (Ալագյուլլար, թուրքերեն՝ *Atagöller*) վրա՝ շուրջ 260 քառ. կմ տարածությամբ: 1923 թ. հայկական կողմը հարց բարձրացրեց կցելու այդ տարածքը Նոր Բայազետի գավառին, ինչը հիմնավորվում էր վարչական կառավարման նպատակահարմարությամբ: 1923 թ. ապրիլի 23-ին հարցը քննարկվեց Անդրկենտգործկոմի նախագահության կողմից, սակայն խնդիրը մնաց չկարգավորված: 1926 թ. օգոստոսի 10-ին ՀՍԽՀ ԿԳԿ-ն Անդրդաշնության ԿԳԿ-ին խնդրեց արագացնել հարցի կարգավորումը: Հոկտեմբեր-դեկտեմբերին Դաշնության կենտգործկոմին կից Հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովը մի շարք հարցումներ ուղարկեց ՀՍԽՀ և ԱՍԽՀ իշխանություններին: Ադրբեջանական կողմը փորձում էր հիմնավորել Քրդստանի քոչվորների՝ այդ տարածքներից օգուվելու անհրաժեշտությունը: Ալ լճերի ամառային արոտավայրի պատկանելության հարցն այնուհետև քննարկվեց Հողհանձնաժողովի 1927 թ. հունվարի 11-ի նիստում, սակայն կողմերի սկզբունքային տարաձայնությունների պատճառով համաձայնություն չկայացվեց<sup>2</sup>: Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում, Դաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների սահմանային խնդիրներին առնչվող հարցերի թվում քննարկվեց նաև արոտավայրի հարցը, ուր որոշվեց ամբողջ վիճելի տարածքը հանձնել Քրդստանի գավառին<sup>2</sup>:

Նշված որոշումը Խորհրդային Հայաստանում միանշանակ չընդունվեց: Այսպես՝ 1930 թ. նոյեմբերի 12-ին ՀՍԽՀ ԿԳԿ-ին

<sup>1</sup> ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1136, թ. 8-9, 13, 16, 21:

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 78:

ուղղված գործառնում Իստրապատության Հողօտղկումատը բողոքում էր, որ արոտավայրի վերաբերյալ Անդրկենտգործկոմի որոշումը կայացվել է առանց տեղում զննություն-ուսումնասիրություն կատարելու, տեղական գործկոմների ու ժողկոմատի կարծիքը հարցնելու: Շեշտվում էր, որ սեպի նման ՀՍԽՀ-ի մեջ մտած նշյալ տարածքը «յուր դիրքով, ջրային պայմաններով և այլն միանգամայն կտրված է Խ. Ադրբեջանի սահմանակից շուրջ շրջաններից (Քրդստան) և Բասարգեչարի շրջանի շարունակությունն ու անբաժան մասն է կազմում: Նրա ռացիոնալ օգտագործումը (խոտհարքներ ու ջրեր) կապված է Բասարգեչարի շրջանի գյուղերի հետ»: Վերջում ժողկոմատն առաջարկում էր միջնորդել Անդրկենտգործկոմի առջև՝ հարցն ընդհանուր կարգով վերաքննարկելու համար: Այդ նպատակով առաջարկվում էր ՀՍԽՀ հողօտղկոմատի մասնակցությամբ տեղում զննություն և մանրամասն ուսումնասիրություն կատարել, լսել տեղական գործկոմների կարծիքներն ու առարկությունները<sup>1</sup>:

Սակայն ՀՍԽՀ հողօտղկոմատն իր առաջարկներում հապաղել էր: Բանն այն է, որ Անդրդաշնության ԿԳԿ-ի հատուկ հանձնաժողովն Ալ լճերի տարածքում սահմանագծման աշխատանքներն արդեն ավարտել էր: Ելնելով այդ իրողությունից՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ի փոքր նախագահության 1930 թ. դեկտեմբերի 17-ի նիստում որոշվեց «հարցը համարել սատոված»<sup>2</sup>: Փաստելը, նշված տարածքը, բացի տնտեսական հարմարություններից, Խորհրդային Ադրբեջանին նաև ռազմավարական առավելություններ էր ընձեռում Խորհրդային Հայաստանի նկատմամբ: Ի դեպ, Ալ

լճերի շրջանը ներկայումս ներառված է Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի կազմում:

\* \* \*

Անդրդաշնության կազմավորման շրջանում ՀՍԽՀ Զանգեզուրի և ԱՄԽՀ Ղուբաթյուի գավառների միջև սուր հակասություններ գոյություն ունեին Տանձաբերի շրջանի և Շուռնուխի շրջանի անտառաշերտի պատկանելության հարցում: Զանգեզուրի տեղական ղեկավարները Երևան ուղարկած նամակներում ու զեկուցագրերում զգուշացնում էին, որ Տանձաբերի շրջանի Ադրբեջանին անցնելուց հետո Կասանի տարածաշրջանն «ընդմիշտ բաժանվում է Բուն Զանգեզուրից և Սիսիանից»: Շուռնուխի անտառը Զանգեզուրի համար ուներ ոչ միայն տնտեսական, այլև ռազմավարական կարևորություն: Այն գավառի րևակցության փայտի կարևոր շտեմարանն էր: Անտառի միջով էր անցնում նաև Գորխ-Կասան խճուղին:

1922 թ. հուլիսի 3-ին ՀՍԽՀ ԿԳԿ-ի նախագահ Ս. Համբարձումյանին ուղղված զեկուցագրում ներկայացնելով Ղուբաթյուի հետ սահմանում գոյություն ունեցող իրավիճակը՝ Զանգեզուրի գավառօրծկոմի Հողային բաժնի վարիչ Աիևայանն առաջարկում էր շտապ լուծել գավառի հողային և վարչական սահմանների հարցը: Զեկուցագրի վերջում նա մատնանշում էր, որ, առանց այս հարցերի կանոնակարգման, երկու շրջանների միջև «ետրմալ կյանք և բարյացակամ հարաբերություններ չինել չեն կարող»<sup>3</sup>: Բանն այն է, որ Ղուբաթյուի շրջանի ղեկավարությունը և նրան ծայնակցող Ադրբեջանի ԿԳԿ-ն Զանգեզուրի սահմանա-

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 551, թ. 8:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 7:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 3, գ. 123, թ. 5 և շրջ.:

մերձ բնակավայրերում ապրող հայ գյուղացիներին տեղի-անտեղի պարբերաբար մեղադրում էին սահմանախախտման և սեփական տարածքում ոչ օրինական գործունեություն ծավալելու մեջ<sup>1</sup>:

Աղրբեջանական իշխանություններն ամենատարբեր քայլերի էին դիմում՝ Զանգեզուրի գավառի անգամ փոքրաթիվ մուսուլմանական բնակչություն ունեցող գյուղերն Աղրբեջանին բռնակցելու նպատակով: Մասնավորապես՝ 1921 թ. սկսած Զանգեզուրի գավառի գյուղերը հավակնություններ էր հանդես բերում Մեծյուրջանի Աղարա և Թղուֆ սակավամարդ գյուղերի նկատմամբ: Աղրբեջանական իշխանությունների հիմնադրամբ նշված գյուղերի մուսուլման բնակիչները հրաժարվում էին ենթարկվել ՀՍԽՀ տեղական իշխանություններին, վճարել հարկերն ու տուրքերը: Սա այն դեպքում, երբ շրջանի դեկավարությունն ունեցած սուղ միջոցներից սերմացու և անհրաժեշտ պարագաներ էր հատկացնում նշյալ գյուղերին<sup>2</sup>: Նման քայլերով աղրբեջանցիները հող էին նախապատրաստում վիճելի ճանաչված տարածքների պատկանելության հարցն իրենց օգտին լուծելու նպատակով:

1923 թ. հուլիսի 7-ին ԱՍԽՀ ԿԳԿ-ն դեկրետ հրապարակեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ (ԼՂԻՄ) կազմավորելու մասին: Նույն օրը տեղի ունեցած ԼՂԻՄ-ի և Քրդստանի սահմանները որոշող հանձնաժողովի նիստում որոշվեց նաև կազմավորել Ինքնավար Քրդստան, որի սահմանները պետք է որոշվեր ԼՂԻՄ-ի սահմանների հաստատումից հետո: Արդեն հուլիսի 16-ին Աղրբեջանի կոմկուսի Կենտկոմի նախագահությունը որո-

շյալ ընդհանուր լիարժեք բնակչության տարածքներում հիմնականում գավառ (այսպես կոչված «Կարմիր Քրդստան») կազմավորելու մասին: Ակնհայտ էր, որ Ղուբաթլուի գավառի հիմքի վրա ստեղծվող «Կարմիր Քրդստան» անվանումով արհեստական վարչական միավորի միջոցով աղրբեջանական իշխանությունները ձգտում էին բացառել ՀՍԽՀ-ի և ԼՂԻՄ-ի միջև անմիջական ցամաքային կապի առկայությունը: Նշենք, որ 1920-ականների սկզբներին հայկական նշյալ երկու պետական կազմավորումների անմիջական ցամաքային կապը փաստող բազմաթիվ վկայություններ կան: Փաստորեն, նպատակային քաղաքականության արդյունքում Աղրբեջանը ոչ միայն նորանոր հողատարածքներ յուրացրեց տարածքային տեսակետից առանց այն էլ բզկտված Խորհրդային Հայաստանից, այլև բացառեց ԼՂԻՄ-ի հետ նրա տարածքային կապը<sup>1</sup>:

Արխիվային վավերագրերը փաստում են, որ Խորհրդային Հայաստանում ամենևին չէին հաշտվել նախկին Ելիզավետպոլի նահանգի Զանգեզուրի գավառի՝ ՀՍԽՀ-ի և ԱՍԽՀ-ի միջև բաժանման փաստի հետ: Ասվածի վկայությունն է 1923 թ. օգոստոսի 30-ին ՀՍԽՀ հողագործության ժողկոմատի Հողային բաժանմունքի կողմից հանրապետության ԿԳԿ-ի համար պատրաստած զեկուցագիրը ՀՍԽՀ Զանգեզուրի գավառի սահմանների մասին: Այն ստացել էր Զանգեզուրի գավառի կոմիտեի նախագահության հավանությունը<sup>2</sup>: Փաստաթղթի վերջում դրված է հողժողկոմ Արամայիս Երզնկյանի, ժողկոմատի Հողային բաժնի վարիչ Խաչատուր Ավդալբեկյանի և ժողկոմատի գործավարի ստորագ-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 7 և շրջ.:  
<sup>2</sup> Նույն տեղում, գ. 1, գ. 62, թ. 16-18, գ. 2, գ. 19, թ. 26-27:

<sup>1</sup> Բարսեղյան Դ., Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհագրաքաղաքական ապեկետները, «21-րդ դար», 2005, N 4, էջ 83-106:  
<sup>2</sup> ՀԱԱ. ֆ. 112, գ. 2, գ. 11, թ. 42-43:

յութը՝ որը իր մեջ ունի անբարեկամությունը, հեղինակը ու մարդայեկանն էր: Զեկուցագրին կից եղել է նաև համապատասխան քարտեզ: Հայաստանի ազգային արխիվում մեզ չի հասցրվել գտնել այդ քարտեզը: Զեկուցագրի պատճենը որպես «ի գիտություն» օգտատուի 31-ին ուղարկվել է ՀՄԽՀ ներքին գործերի ժողկոմատին<sup>1</sup>:

Զեկուցագրում առաջարկվում էր սահմանային վեճերը լուծող Անդրկենտրոնական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցող ՀՄԽՀ ներկայացուցիչներին հանձնարարել Զանգեզուրի գավառի դեպքում հասնել հետևյալ նպատակավոր սահմանագծի հաստատմանը. «Հարավից Արաքս գետը (պարսկական սահման), արևելքից (Խորհրդային Ադրբեջան)՝ Հազարու գետը Արաքսի հետ խառնվելուց սկսված մինչև Աղ-Օղլան գետի միացման կետը՝ Ծիծեռնավանքի մոտ: Վերջին կետից սահմանն արևմուտք ձգվող ուղիղ գծով միանում է Կուճի-Ղովջան (6.721) գագաթի հետ և այսպե՛ս 6.554, 9.219 և 10.482 բարձունքների ուղղությամբ ձգվող լեռնաշղթայի՝ գծով միանում է Մրխթոցյան շղթայի հետ և Դալիդաղից (11.906) սկսած հին սահմանը նախ Զաքրայիլի և այսպե՛ս Դարալագյազի ու Նախիջևանի գավառների հետ պահում է անփոփոխ՝ մինչև Կարճևանի լեռները, որտեղ սահմանագիծը լեռնաշղթայով և ուղիղ գծով Կալնեկ (7.075) գագաթի վրայով միանում է Արաքսին՝ Զանգեզուրի գավառի մեջ թողնելով Կարճևանի հարթությունը»<sup>2</sup>:

Այնուհետև նշյալ սահմանագիծն աշխարհագրական, վարչական և տնտեսական տեսակետից նպատակահարմար լինելը

որոշանալիքով մի շարք տրամաբանված փաստարկներ էր բերվում: Նախ նշվում էր, որ սահմանն անցնելու է անմատչելի լեռնագագաթների և խորը ձորերի միջով, այսպե՛ս շեշտվում, որ մասնանշված սահմաններում վարչական տեսակետից դյուրին կլինի գավառի կառավարումը, այն հանդիսանում է մեկ տնտեսական միավոր, ուստի նպատակահարմար չէ նրա կենտրոնում բնկած անտառամասը երկու մասի բաժանել: Աննպատակահարմար էր համարվում «Կարմիր Քրդստանի» առանձնացումից հետո Ղուբաթլուի առանձին գավառի ստեղծումը: Դրանով Կապանի շրջանը բուն Զանգեզուրին կապող միակ ճանապարհը դուրս էր մնում Զանգեզուրի գավառի վարչական սահմաններից, ինչն անթույլատրելի էր համարվում: Զեկուցագրում ընդգծվում էր, որ սահմանագծի ջանկացած տարբերակի դեպքում Միսիանի, Կապանի ու Սեղդիի շրջաններում մնալու է մահմեդական բնակչություն, «որի կրթական-կուլտուրական աշխատանքի կապը նույն պարսառի ձեռքով միանգամայն անհրաժեշտ է»: Ըստ այդմ էլ՝ փաստաթուղթն ավարտվում էր հետևյալ տողերով. «Խորհրդային կարգերում Ղուբաթլուի շրջանը չի կարելի գատել կարմիր Զանգեզուրից, որը վերջնականապես ազատագրվել է ազգայնական, կղերական ու կալվածատիրական տարրերից ու նրանց վաքած քաղաքականությունից: Ղուբաթլուի շրջանի անտորմալ գատումը կարող է ռեակցիա առաջ բերել Զանգեզուրի աշխատավորության մտքերի մեջ, իսկ նրա միացումը Զանգեզուրին կարող է միայն ուղախություն պատճառել դեռ մինչև այսօր մոլլաների, աղսակալների ու կալվածատերերի ազդեցությունից չազատագրված Ղուբաթլուի շրջանի աշխատավորությանը, որի ներկայացուցիչներին գավառի իշխանության կազմի մեջ մտցնե-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 41:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 42:

լու հեղափոխական քայլը պետք է կատարել օր առաջ»<sup>1</sup>։ Սակայն ՀՍԽՀ հողագործության ժողկոմատի առաջարկները կյանքի չկոչվեցին, դրանք չքննարկվեցին նույնիսկ Անդրդաշնության ԿԳԿ-ի հանձնաժողովների շրջանակներում։ Գերիշխող մտայնության պայմաններում նույնիսկ տեսականորեն չէր քննարկվում միութենական հանրապետությունների սահմանների փոփոխության հարցը։

«Կարմիր Քրդստան» կազմակերպելու մասին որոշումից հետո առաջնային խնդիր դարձավ վերջինի սահմանների որոշումը, այդ թվում՝ ՀՍԽՀ Զանգեզուրի գավառի հետ սահմանագծի հստակեցումը։ 1923 թ. հոկտեմբերի 18-ին Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստում քննարկվեց Ադրբեջանի ԿԳԿ-ի միջնորդությունը՝ Քրդստանի և Զանգեզուրի գավառների սահմանային վեճերը կարգավորելու մասին։ Կենտգործկոմի որոշմամբ այդ նպատակով ստեղծվեց համապատասխան հանձնաժողով՝ Գեորգի Ստուրոայի նախագահությամբ և Քրդստանի ու Զանգեզուրի գավառների գործկոմների ներկայացուցիչների մասնակցությամբ, որոնց հանձնարարվեց «լուծել նշված գավառների միջև գոյություն ունեցող բոլոր սահմանային վեճերը»<sup>2</sup>։ Մեկ ամիս չանցած՝ նոյեմբերի 12-ին, Անդրդաշնության ԿԳԿ-ն որոշեց նշված գավառների սահմանագիծը որոշող մեկ այլ հանձնաժողով կազմել՝ այս անգամ Սիլվեստր Թողրիայի ղեկավարությամբ<sup>3</sup>։ Ինչպես իրավացիորեն նկատում է պատմաբան Ա. Սահակյանը, այս իրողությունը «հետևանք էր այդ շրջաններում տի-

րուլ լարված դիտության, որը երբևէ չկարգվեց որ ընդհանրապես չի»<sup>1</sup>։

1923 թ. դեկտեմբերի 17-ին Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստում քննարկվեց Ա. Թողրիայի զեկուցումն իր ղեկավարած հանձնաժողովի աշխատանքների մասին։ Զեկուցման վերաբերյալ կայացված որոշումից պարզվում է, որ սահմանային խնդիրների կարգավորման սկզբունքների հարցում հանձնաժողովի անդամների միջև տարակարծություններ էին եղել։ Հաշվի առնելով այդ հանգամանքը՝ որոշվեց նոր հանձնաժողով ստեղծել՝ Մ. Օրախելաշվիլի (նախագահ), Ա. Լուկաշին, Ղ. Մուսաբեկով, Ա. Յաղուբով, Ա. Կասյան (անդամներ) կազմով<sup>2</sup>։ Չնայած նորաստեղծ հանձնաժողովին վերջնական որոշում կայացնելու լիազորություն էր տրված, այդուհանդերձ, այս որոշմանը ևս վիճակված էր թղթի վրա մնալ։

Սահմանագծի անորոշ դրությունն անհանգստություն էր պատճառում զանգեզուրցիներին։ Խնդիրն այն է, որ չէր դադարում Քրդստանի տարածքից տարբեր ավազակախմբերի կողմից սահմանակից հայկական գյուղերի վրա կատարվող պարբերական հարձակումներն ու թալանը։ Զանգեզուրի գավառի կոմի բազմաթիվ դիմումների հիման վրա՝ ՀՍԽՀ ԿԳԿ-ն 1924 թ. մարտին սահմանախախտումների վերաբերյալ եղած նյութերը փոխանցեց երկու գավառների սահմանագիծը որոշող հանձնաժողովին<sup>3</sup>։ 1924 թ. մայիսի 14-ին Անդրկենտգործկոմը Զանգեզուրի և Քրդստանի սահմանները որոշող հանձնաժողովին (նախագահ՝ Շ. Էլիավա) հանձնարարեց առկա խնդիրներին լուծում տա-

<sup>1</sup> Լույն տեղում, թ. 43։

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 173, К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР. 1918–1925: Документы и материалы, Баку, 1989, с. 206.

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 186։

<sup>1</sup> Սահակյան Ա.Լ., նշվ. աշխ., էջ 177։

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 143, թ. 27։

<sup>3</sup> Լույն տեղում, թ. 182։

լու տայատապույ սայրսը վարջիս տարածաշրջան սեպտեմբը՝ 1924 թ. հունիսին հանձնաժողովը Զանգեզուրի և Քրդստանի գավառների սահմանագծման վերաբերյալ որոշում կայացրեց, որը 1924 թ. օգոստոսի 18-ին արժանացավ Անդրդաշնության ԿԿԿ-ի հավանությանը<sup>1</sup>: Այդուհանդերձ, այս և նմանատիպ որոշումները գործնական քայլերի չհանգեցրին: Անդրկենտրոնները ձգձգում էր մասնագետ հողաչափերի գործուղումը, որոնք պետք է վերջնականապես որոշեին սահմանային գյուղերի վեճի առարկա իսանդիսացող հողատարածքների պատկանելության հարցը: Այս պատճառով վեճեր և տարբեր թյուրիմացություններ էին լինում հայ և ադրբեջանցի գյուղացիների միջև<sup>2</sup>: Նշված հանգամանքն առաջ էր բերում ՀՍԽՀ ղեկավարության դժգոհությունը:

Զանգեզուրի և Քրդստանի գավառների միջև սահմանների գծման համար կազմվել էր տեղական հանձնաժողով՝ Յա. Կոչետկովի նախագահությամբ և Հայաստանի ու Ադրբեջանի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հանձնաժողովը տեղում աշխատանքներ իրականացրեց 1926 թ. սեպտեմբերի առաջին կեսին, իսկ նրա կայացրած որոշումներն ամրագրվեցին 1926 թ. սեպտեմբերի 12-ին, 14-ին և 15-ին կայացած նիստերում ընդունված որոշումներով<sup>3</sup>:

Նշված հանձնաժողովում՝ որպես ՀՍԽՀ հողփոխվումատի ներկայացուցիչ, ընդգրկվել էր նաև նշանավոր գրող, մասնագի-

տությամբ հողաշինարար Ավետի Բակունցը: Նրա կողմից ՀՍԽՀ հողփոխվումատի հողվարչությանը ներկայացված զեկուցագրերից պարզ է դառնում, որ հանձնաժողովը որպես աշխատանքի հիմք ընդունել էր դեռևս 1924 թ. հուլիսի 11-ին ՀՍԽՀ հողփոխվում Ա. Երզնկյանի և ԱՍԽՀ Ժողկոմխորի նախագահ Մ. Բաղիրովի միջև կնքված համաձայնությունը<sup>4</sup>: Սակայն այդ համաձայնագրով անցկացված սահմանագիծը անհնար էր տեղում բնության մեջ անցկացնել, քանի որ որոշ մասերում անորոշ էր և վեճերի տեղիք էր տալիս: Վիճելի հողերի մի մասը, այսպես կոչված, նախկին «բեկական» հողեր էին, որոնք ցարական շրջանում գնվել էին այս կամ այն կողմի գյուղացիների կողմից: Հողօգտագործունը խառն էր, այսինքն՝ հայ և թուրք գյուղացիները կողք-կողքի կամ իրենց հողերի վրայով անցնելով մշակում էին այդ հողերը: 1924 թ. հուլիսի 11-ի համաձայնագրով սահման էր ընդունվել Գորիս-Կապան խճուղին, որն անորոշություն էր մտցնում շրջանում, քանի որ որոշ հայկական գյուղերի վարելահողեր հայտնվում էին խճուղուց այն կողմ: Հայկական կողմն առաջարկում էր սահմանագիծը որոշ փոփոխության ենթարկել իրավիճակը չափելու համար, որին դեմ էին արտահայտվում և՛ հանձնաժողովի նախագահ Յա. Կոչետկովը, և՛ Ադրբեջանի ներկայացուցիչ Ասադ Կարանը: Հետագայում տեղի ունեցած քննարկումների արդյունքում որոշակի համաձայնություն կայացավ, սակայն, ինչպես նշում է Ա. Բակունցը, հանձնաժողովի աշխատանքների արդյունքում տուժող կողմը մեծ մասամբ եղել է Զան-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 269:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 168, թ. 23 շրջ., 27 և շրջ.:

<sup>3</sup> Նույն տեղում, գ. 2, գ. 62, թ. 4, 6-9:

<sup>4</sup> Հանձնաժողովի նշված նիստերի արձանագրությունները տե՛ս ՀԱԱ, ֆ. 132, գ. 1, գ. 437, թ. 7-11:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, գ. 1, գ. 62, թ. 18, «Կապանցյան Ա. Ավետի Բակունցի գործունեությունը ՀՍԽՀ հողփոխվումատի կողմից (1925-1928 թթ.)», «Բաներ Հայաստանի արխիվներին», 1979, N 2, էջ 90-100:

<sup>2</sup> Բակունց Ա., Երկեր, հ. 4, Երևան, 1984, էջ 481:

գեզուրի հայությունը: Այդ է փաստում նաև անենայն հավանականությամբ 1929 թ. Հայկենտգործկոմի կողմից կազմված արշուակը, որտեղ տրվում է հայկական գյուղերից Քրդստանի գավառին անցած հողատարածքների պատկերը<sup>1</sup>:

Ա. Բակունցի՝ 1926 թ. հոկտեմբերի 18-ին ՀԽՍՀ հողագործության ժողկոմատի հողվարչությանն ուղղված զեկուցումից ակնհայտորեն երևում է, որ հանձնաժողովը սահմաններն անցկացնելիս հաշվի չէր առնում ո՛չ Ջանգեզուրի սակավահողությունը, և ո՛չ էլ այն հանգամանքը, թե գյուղերն ինչ կապեր ունեն հարևան շրջանների հետ, և որոշումների հիմքում դնում էր, այսպես կոչված, էթնիկական սկզբունքը<sup>2</sup>: Բնականաբար, ազգային սկզբունքը կարևոր գեներ էր հարհրդային Ադրբեջանի ձեռքին, քանի որ որոշ թուրքական գյուղեր ու գյուղակներ սեպի նման խրված էին հայկական գյուղերի միջև, և Ադրբեջանի օգտին սահմանային ձևափոխումներ կատարելու առիթ էին հանդիսանում: Փաստերը ցույց են տալիս, որ չեն անտեսվել նաև մի շարք այլ պարագաներ (հատկապես տնտեսական գործոնը): Մասնավորապես, խոսելով 1924 թ. հուլիսի 11-ին կատարված սահմանագծման մասին՝ 1926 թ. հոկտեմբերի 18-ի նույն զեկուցագրում Ա. Բակունցն արձանագրում է դրանում թուրք գյուղացիների ցանկությամբ կատարված փոփոխության մասին՝ հօգուտ Ջանգեզուրի<sup>3</sup>: Ասվածին լրացնելու են գալիս Հայաստանի ազգային արխիվում պահվող մի քանի զեկուցագրեր, որոնցում Ջանգելանի շրջանի ադրբեջանաբնակ գյուղերի բնակիչները դիմումներ էին ուղղում Ջանգեզուրի գավառի ղեկավարին՝ խնդրելով ընդունել

իրենց գավառի ղեկավարի իշխանության տակ: Հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ գյուղացիները տնտեսապես կապված են Կապանի հետ, և նրանց 50%-ը աշխատում էր պղնձի հանքերում: 1926 թ. սեպտեմբերի 6-ին գրած մեկ այլ զեկուցագրում Ա. Բակունցը խոսում է Տեղ և Խնածախ գյուղերի մասին, որոնց սահմանները 1926 թ. կատարվող ներքին հողակարգավորման ժամանակ դեռևս անորոշ էին<sup>4</sup>: Այս երկու սահմանամերձ գյուղերի շուրջ առկա վեճերը պարզորոշ կերպով արտահայտում էին Ադրբեջանի նկրտումները ռազմավարական և տնտեսական տեսանկյունից մեծ կարևորություն ունեցող սահմանամերձ շրջանների նկատմամբ: Ուստի՝ օրինաչափ է, որ 1926 թ. հոկտեմբերի 6-ին ԱՍԽՀ կենտգործկոմը ոգևորությամբ հավանության արժանացրեց Վ. Կոչետկովի հանձնաժողովի սեպտեմբերյան որոշումները Ջանգեզուրի և Քրդստանի գավառների սահմանների մասին<sup>5</sup>:

Փաստորեն, Ա. Բակունցի կողմից Հողժողկոմատի հողվարչությանը ներկայացված զեկուցագրերը արժեքավոր տեղեկություններ են պարունակում Ջանգեզուրի գավառի սահմանագծման աշխատանքների, հայկական հողատարածքներն ամեն գնով զավթելու ադրբեջանցիների ձգտումների վերաբերյալ:

1922 թ. Ջանգեզուրից Մեղրու գավառի առանձնացումից հետո խնդրահարույց էր նաև ՀՍԽՀ Մեղրու և ԱՍԽՀ Կարյազինու-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 132, ց. 1, գ. 444, թ. 1-7 շքք.:

<sup>2</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 477:

<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 98, թ. 105:

<sup>4</sup> Տե՛ս Դազարյան Գ., Ակտե Բակունցի մասնակցությունը Ջանգեզուրի գավառի տարածքում հայ-արրբեջանական սահմանը որոշող հանձնաժողովի աշխատանքներին (1920-ական թվականներ), «Հայոց պատմության կարգեր (գլխավորումը)» համալսարանի ժողովածու», N 15, Երևան, 2014, էջ 218-226:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 555, թ. 42:

<sup>2</sup> Բակունց Ա., նշվ. աշխ., էջ 486-487:

<sup>3</sup> Նույն տեղում:

յի (Ջարրայի) գավառների միջև սահմանը: Անդրդաշնության կազմում գտնվող հանրապետությունների վարչատարածքային միավորների սահմանների ճշգրտման գործընթացի շրջանակներում Անդրկենտրոնականի բարսողար Ա. Շահվերդյանը 1925 թ. սեպտեմբերի 25-ին դիմեց Հայկենտգործկոմին՝ հարցում կատարելով Մեղրու գավառի և Կարյազինոյի գավառի Չանգելանի գավառակի միջև հողային վեճերի առկայության մասին: Այդպիսին լինելու դեպքում առաջարկվում էր 5 վերստանոց բարստեզի վրա գծել ՀՄԽՀ հավակնությունները՝ կից ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ: Հոկտեմբերի 9-ին Հայկենտգործկոմը Թիֆլիս ուղարկեց ՀՄԽՀ հողագործության ժողկոմատի պատրաստած համապատասխան տեղեկանքը և կից բարստեզը: Հայտնելով, որ Մեղրու և Չանգելանի միջև լուծված չեն սահմանային վեճերը, ՀՄԽՀ 494-ն ներկայացնում էր սահմանի հայկական տարբերակի հետևյալ 3 հիմնավորումները.

1. Ներկայացվող սահմանագիծը հանդիսանում է ՀՄԽՀ հողժողկոմ Ա. Երզնկյանի և ԱՄԽՀ Ժողկոմխորհի նախագահ Մ. Բաղիրովի միջև կայացած Չանգելարի սահմանաբաժանման սկզբունքային համաձայնության շարունակությունը: Առաջարկվում է սահմանն անցկացնել լեռնագագաթները միացնող լեռնաշղթաների ջրարաշխ գծով, ինչը հետագայում կբացառի սահմանային վեճերի հնարավորությունը:

2. Առաջարկվող սահմանից արևմուտք ընկնող տարածքները հիմնականում ձմեռային արոտատեղեր էին, որոնք փաստացի օգտագործվում էին Կապանի և Մեղրու շրջանների խոտհարքներ չունեցող գյուղերի բնակիչների կողմից: Առանց այդ

արոտատեղերի կաթվածառար կլինե՞ր սշալ գյուղերի անասնապահությունը:

3. Սահմանը գծելիս հիմք էր ընդունվել նաև տարածքի ազգագրական պատկերը: Սահմանագծից արևմուտք էր ընկնում մահմեդականներով բնակեցված ընդամենը մեկ գյուղ՝ Նյուվադին:

Ելնելով այս ամենից՝ ՀՄԽՀ 494-ն Անդրկենտրոնականի խնդրում էր համապատասխան որոշում կայացնել նշված գավառների միջև վերջնական սահմանագծի հաստատման վերաբերյալ:

1926 թ. դեկտեմբերի 16-ին Անդրկենտրոնականի հողհանձնաժողովի նախագահ Ս. Կասյանին ներկայացված հաշվետվությունում հանձնաժողովի նախագահի տեղակալ Յա. Կոչետկովը հայտնում էր, որ իր ղեկավարած հանձնաժողովը (անդամները՝ ՀՄԽՀ ներկայացուցիչ, Չանգելարի գավառի կոմիտեի նախագահ Բ. Հարությունյան և Կարյազինի գավառի կոմիտեի նախագահ Մամեդխանով) մեկնել է վիճելի տարածք և տեղի բնակչության ներկայությամբ գնել ՀՄԽՀ 494-ի կողմից 1925 թ. հոկտեմբերի 9-ին առաջարկված սահմանագիծը, ինչպես նաև գրույցներ ունեցել գյուղացիության հետ, թե որ հանրապետությանն են ցանկանում միանալ: Նշվում էր, որ սահմանային շնորհում մուսուլման գյուղացիները կենտրոնացած են Ողջի գետի ավազանում (20 գյուղ-գյուղակներ՝ 412 տուն, 1552 անձ), Բասուտ գետի ավազանում (1 գյուղ՝ 25 տուն, 100 անձ) և Արաքս գետի ավազաններ՝ տարածքում գտնվող 3 գյուղերում (Նյուվադի, Էյևաճոր (Այ-

<sup>1</sup> ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 577, թ. 12 և շրջ., ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 62, թ. 16 և շրջ., 18-20:

սազրոյ), Թեղբար միասին 1/3 տուն, 504 անձ)։ Հանձնաժողովը հոկտեմբերի 14-ի նիստի ընթացքում Ադրբեջանի ներկայացուցիչը պահանջեց, որպեսզի Ողջի գետի ավազանի մուսուլման բնակիչները, երկու գյուղերի միասնական գյուղխորհուրդների ցանկության համաձայն, մնան Կարյազհիտյի գավառում։ Իսկ հացորդ օրը կայացած նիստի ժամանակ էլ նա պահանջեց Կարյազհիտյի գավառի տարածքում թողնել Նյուվադի, Էյնաձոր և Թողրթ գյուղերը՝ հիմնվելով բնակչության ցանկության վրա։ Իր առաջարկը Մամեդխանովը հիմնավորում էր նրանով, որ Մեղրու գավառում չկար համապատասխան դպրոց, կարող էր լինել լեզվի հարց և այլն՝ չնայած ընդունում էր, որ նշյալ գյուղերը տնտեսական և վարչական տեսակետից առավել շատ կապված են Մեղրու գավառի հետ։ ՀՍԽՀ ներկայացուցիչն էլ իր կողմից փաստեց, որ նշյալ գյուղերի անցումը Կարյազհիտյի գավառին անցանկալի վարչական և տնտեսական վիճակ կստեղծի, քանի որ գյուղերի բնակիչները տնտեսապես և վարչական տեսակետից առավելապես կապված են Զանգեզուրի և Մեղրու գավառների հետ (աշխատում էին «Կարմիր նոյեմբեր» պղնձի գործարանում<sup>2</sup> և այլն), իսկ չքավոր գյուղացիների մեծամասնությունը ցանկանում է մնալ Հայաստանի տարածքում։

Վերլուծելով կողմերի առաջարկները՝ Յա. Կոչետկովը եզրակացնում է, որ ՀՍԽՀ ԿԳԿ-ի առաջարկած սահմանագիծը

<sup>1</sup> Անդրկենտրոնի Հոդալին հանձնաժողովի 1927 թ. տվյալների համաձայն՝ Ողջի և Բասուտ գետերի ավազանների 21 գյուղակների զբաղեցրած տարածքը 7.000 դեցատին էր, Արացս գետի ավազանը 3 գյուղերինը՝ 9.000 դեցատին, միասին՝ 16.000 դեցատին (ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1765, թ. 78)։

<sup>2</sup> Կապահի գավառակի ներստրոն նախկին Դաթարի պղնձաձուլական գործարանն էր։

ա) Հանդիսանում է Զանգեզուրի և Քրդստանի գավառների միջև հաստատված սահմանների շարունակությունը։

բ) Այն անցնում է բնական սահմաններով, այսինքն՝ լեռնալանջերով ու լեռնաշղթաների գագաթներով և այդ պատճառով էլ հանդիսանում է բնական սահման։

գ) Ողջի գետի ավազանի ամբողջ բնակչությունը վարչական կենտրոն (տեղական գործկոմ) կունենա Մարտունավան քաղաքում («Կարմիր նոյեմբեր» գործարանը)։ Նշյալ կենտրոնից ավազանի գյուղերը գտնվում էին մի քանի վերստ հեռավորության վրա, իսկ բնակիչները տնտեսական առումով սերտորեն կապված էին Մարտունավանի հետ, քանի որ նրանք հանդիսանում են աշխատող մեծ ուժ «Կարմիր նոյեմբեր» գործարանի համար, ինչպես նաև օգտվում են տեղի բուժսպասարկումից, կրոպերատիվից և այլն։ Այս դեպքում՝ Ողջի գետի ավազանի մուսուլմանական և հարակից հայկական գյուղերի միջև առկա հողային վեճերը կլուծվեն ՀՍԽՀ-ում իրականացվող հողաշինարարական աշխատանքների շրջանակներում։

դ) Արաքսի ափամերձ տարածքում գտնվող Նյուվադի, Էյնաձոր, Թողրթ գյուղերը ևս վարչատնտեսական առումով առավել կապված են Մեղրու հետ և առավել մոտ են վերջինին, քան Զանգեզուրին։ Գյուղատնտեսական մթերքների իրացումը, ֆարրիկա-գործարանային ապրանքների ձեռքբերումը, բժշկական օգնությունը և մնացած ամեն ինչ այդ գյուղերը ստանում են Մեղրիից։

<sup>3</sup> Ի դեպ, 1927 թ. դրությամբ ՀՄԽՀ թողոր գավառներում փաստացի ավարտվել էր հողաշինարարական աշխատանքները՝ բացառությամբ Զանգեզուրի գավառի Գավառի շրջանի նշյալ վիճակի գյուղերի (Ավդալբեգյան ևս., «Տղաշինարարությունը Խորհրդային Հայաստանում 1921-1927 թթ.», «Գյուղատնտեսական կյանք», 1927, N 10-11, էջ 69)։

Յա. Կոչետկովն այնուհետև հատուկ շեշտում էր, որ ադրբեջանական առաջարկի ընդունման դեպքում կատարվի:

ա) Աղավաղված սահման, որն անցնում է կատարելապես անհարմար տեղերով:

բ) Անհրաժեշտ կլինի մոտուցման և հայ բնակիչների միջև եղած բոլոր հողային վեճերը լուծել Անդրկենտրոնական Հողահանձնաժողովի կողմից, որը շատ դժվար է քանի որ նշանակված Անդրկենտրոնական հանձնաժողովը հնարավորություն չի ունենա սահմանային շերտում հողակարգավորում անցկացնել:

գ) Սահմանը կանցնի «Կարմիր նոթեմբեր» գործարանից և Կապանի շրջկենտրոնից երկու վերստ հեռավորությամբ, որը դժվարություն կստեղծի շրջանի ղեկավարման համար:

դ) Այս բոլորից բացի՝ Թղութ գյուղը (52 մոտուցման բնակիչներով) Շվանիձորի (840 հայ բնակիչներով) թաղամասերից մեկն է, և այդ գյուղերը մեկը մյուսից բաժանելն անհնար է՝ նկատի ունենալով այն, որ հողերը (այգիներն ու արոտավայրերը) իրար կցված են:

Ներկայացնելով սահմանագծման հարցում հայկական և ադրբեջանական կողմերի դիրքորոշումներն ու իր եզրակացությունը՝ Յա. Կոչետկովը կից ներկայացրեց նաև առկա նյութերը՝ հնչյուն կոտեսենք, հարցի լուծման ժամանակ Անդրկենտրոնական ղեկավարությունը փաստացի միջանկյալ տարբերակ ընտրեց (ի վնաս ՀՄԽՀ շահերի)՝ Կապանի շրջակայքի 21 բնակավայրերը միացնելով Խորթրոպին Աղրծջանին, իսկ Մեղրու շրջակայքի 3 գյուղերը՝ Խորիդրոպին Հայաստանին:

<sup>1</sup> ՎԱՍ, ֆ. 607, ց. 1, գ. 1765, թ. 3-4 շրջ:

Ս. Կասյանի ղեկավարած ռասոնաժողովի 1927 թ. հունվարի 9-ի նիստում, ՀՄԽՀ և ԱՄԽՀ հողօրոգիներ Ա. Երզնկյանի և Դ. Բունիաթզադեի, նաև համապատասխան գավառոճկումների նախագահների ներկայությամբ, քննարկվեցին Յա. Կոչետկովի առաջարկները: Հանձնաժողովը միաձայն որոշեց վիճելի համարվող Արաքսի ափամերձ 3 գյուղերի (Նյուվադի, Էյնաձոր, Թղութ) տարածքը միացնել Մեղրու գավառին: Կապանի պրնձաճուլական գործարանի մոտակայքի վիճելի համարվող 21 գյուղերի և գյուղակների հարցն առկա թողնվեց՝ երկու օր անց՝ հունվարի 11-ին, գումարված Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության նիստում քննարկվեց «Մի կողմից Զանգեզուրի և Մեղրու (ՀՄԽՀ), մյուս կողմից՝ Քրդստանի և Կարյագինյի (ԱՄԽՀ) գավառների միջև վարչատնտեսական սահմաններ անցկացնելու մասին» հարցը: Որոշվեց մասնակի փոփոխություններով հաստատել Հողահանձնաժողովի հունվարի 9-ի նիստի որոշումները:

ա) Տեղական հետազոտող հանձնաժողովի կողմից Զանգեզուրի և Քրդստանի գավառների միջև հաստատված սահմանը՝ Գորիս գետից սկսած հարավ մինչև Սուսանթափայի սահմանաթմբերը, համարել հաստատված:

բ) Մեղրու շրջանի երեք գյուղերը, մասնավորապես՝ Նյուվադին, Էյնաձորը և Թղութը՝ իրենց անհատական հողերով, հանձնել ՀՄԽՀ Մեղրու գավառին:

Ողջի և Բասուս գետերի ավազաններում տեղակայված 21 գյուղերի պատկանելության հարցը կրկին թողնվեց բաց: Որոշվեց տարածաշրջան առանձին հանձնաժողով ուղարկել:

<sup>1</sup> Այսին տեղում, թ. 1:

յամբ (վերջինս նշանակվեց նաև Անդրկենտգործկոմի հողիանձնաժողովի հողաչափ), որի խնդիրն էր լինելու ծանոթանալ կողմերի տեսակետներին և տեղում հետազոտություն կատարել՝ առավել անկողմնակալ որոշում կայացնելու նպատակով: Հանձնաժողովում պետք է ընդգրկվեին ՀՄԽՀ և ԱՄԽՀ հողագործության ժողկոմատների ներկայացուցիչներ<sup>1</sup>:

Փաստենք մի կարևոր հանգամանք. սահմանային վեճերի առկախ մնալը դժվարացնում էր հանրապետությունների սահմանամերձ գյուղերի բնակիչների բնականոն կյանքը: Հայ գյուղացիներին և Ջանգեզուրի տեղական ղեկավարությանը զայրացնում էր վիճելի տարածքներում աղրբեջանական տեղական իշխանությունների կողմից պարբերաբար հրահրվող խժոժությունները՝ գողություններ, իրենց աշխատանքը կատարող հայ հովիվների, անտառապահների, ՀՄԽՀ-ին միանալ ցանկացող գյուղերի ազգաբնակչության հալածանքներն ու ձերբակալությունները և այլն: Աղրբեջանցիների գործողություններն ուղղված էին նրան, որ հայկական կողմը հրաժարվի այդ տարածքների նկատմամբ հավակնություններից: Եվ կարծես թե աղրբեջանցիներին ձեռնառու էր գոյություն ունեցող ստատուս քվոն: Նույնը չի կարելի ասել զանգեզուրցիների մասին: Ջանգեզուրի գավառը կոմի նախագահությունը 1925 թ. երկրորդ կեսին մի քանի անգամ դիմեց Հայկենտգործկոմին՝ միջնորդելու Անդրկենտգործկոմի առաջ, որպեսզի վերջինս կարճ ժամանակամիջոցում լուծում տա Կապանի և Ղուբաթլուի միջև գոյություն ունեցող սահմանա-

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 1763, թ. 11 և շրջ., ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 280, թ. 3 և շրջ., ց. 2, գ. 108, թ. 494:

յին վեճերին, նաև միջոցներ ձեռք առնել՝ աղրբեջանցիների անօրինություններին վերջ տալու համար<sup>1</sup>:

Նույն խնդիրը տեսնում ենք նաև համամիութենական մարդահամարի ժամանակ: 1926 թ. դեկտեմբերի 17-ին Խորհրդային Հայաստանում անցկացված մարդահամարի ընթացքում ՀՄԽՀ կենտրոնական վիճակագրական վարչության աշխատակիցների աշխատանքներին խոչընդոտել էր հարևան պետությունների հետ սահմանային վեճերը: Անդրդաշնության Կենտվիճվարի որոշման համաձայն՝ վիճելի բնակավայրում պետք է մարդահամար անցկացվեր այն հանրապետության կողմից, որի կազմում գտնվում էր տվյալ գյուղխորհուրդը: ՀՄԽՀ կենտվիճվարը չէր կարողացել մարդահամար անցկացնել հանրապետության մի շարք բնակավայրերում, ուր նման աշխատանք էին իրականացրել Աղրբեջանն ու Վրաստանը: Այսպես՝ մարդահամար չէր անցկացվել Վեդիբասարի Քյարքի գյուղում, Ջանգեզուրի Նյուվադի, Թղուֆ, Էյնաձոր գյուղերում, Ջանգեզուրի գավառի Կապանի գավառամասի մեկ տասնյակից ավել բնակավայրերում՝ այսպես կոչված «Ղարղույի շրջան»-ում (Աղքենդ, Բուրանլու, Ղայալու, Դարգլու և այլն): Իբրև պարզաբանում՝ նշենք, որ Քյարքին իրավական տեսակետից պատկանում էր ՀՄԽՀ-ին: Ինչ վերաբերում է Նյուվադի, Թղուֆ, Էյնաձոր գյուղերին, ապա դրանք ՀՄԽՀ Մեղրու գավառին միացնելու մասին Անդրկենտգործկոմի 1927 թ. հունվարի 11-ի որոշումից հետո ևս Աղրբեջանի ԿԳԿ-ն պատրաստակամություն չէր բերում հայկական կողմին փոխանցելու բնակավայրերի մարդահամարի նյութերը<sup>2</sup>: Նշված

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 2, գ. 62, թ. 13 և շրջ., 23–26:

<sup>2</sup> Նույն տեղում, ց. 1, գ. 280, թ. 20–25 շրջ.:

հանգամանքը դատադեցուսում էր ՀՍԽՀ կենտրոնականի՝ ստորա-  
համարի տվյալների մշակման աշխատանքը:

1927 թ. Գ. Ստորուսայի ղեկավարած հանձնաժողովի աշխա-  
տանքի տեսանելի արդյունքը Զանգեզուրի գավառի Տեղ և  
Քրդատանի Մալիբեկլի գյուղերի միջև սահմանի հստակեցումն  
էր: Այստեղ վեճ էր ընթանում 9 հողամասի (1065,25 դեսյատին  
տարածքով) պատկանելության վերաբերյալ: Գ. Ստորուսայի հու-  
լիսի 19-ի առաջարկների հիման վրա Անդրկենտրոնականի հողա-  
յին և անտառային վեճերը լուծող հանձնաժողովը ևոյեմբերի  
26-ի նիստում միաձայն որոշում կայացրեց սահմանագծի մա-  
սին, ինչը հաստատվեց Անդրդաշնության ԿԳԿ-ի փոքր նախա-  
գահության 1928 թ. հունիսի 7-ի նիստում: Նշված որոշմամբ վե-  
րը նշված վիճելի 9 հողամասից Զանգեզուրի գավառին անցավ  
361,30, իսկ Քրդատանին՝ շուրջ կրկնակի ավելի՝ 703,95 դեսյա-  
տին տարածք<sup>1</sup>: Անդրդաշնության ԿԳԿ-ն անմիջապես ձեռնա-  
մուխ եղավ կայացված որոշման կատարմանը: Հուլիսի 25-ին  
Անդրկենտրոնականի հողային և անտառային վեճերը լուծող  
հանձնաժողովի նախագահի տեղակալ եզրույթը ՀՍԽՀ ԿԳԿ-ին  
առաջարկեց տեղում սահմանագծման աշխատանքներ կատա-  
րելու և սահմանային նշաններ դնելու նպատակով ՀՍԽՀ ներ-  
կայացուցիչ նշանակել, որը պետք է անմիջապես անցներ պար-  
տականությունների կատարմանը: Այդ աշխատանքի համար  
ուղարկվեց Սողոմոն Կարապետյանը<sup>2</sup>:

Պետք է փաստել, որ Անդրկենտրոնականի նախագահության  
1927 թ. հունվարի 11-ի որոշումից հետո ադրբեջանցիները բոլոր

միջոցներով ընդդիմանում էին Արաքսի ափամերձ երեք գյուղե-  
րի՝ Հայաստանին անցնելուն: Այդ մասին վկայող փաստերը բա-  
վականին շատ են<sup>3</sup>: Ադրբեջանական կենտրոնական իշխանույթ-  
յունների անմիջակալ հսկողությամբ և տեղերում գործող ղեկա-  
վար մարմինների հետ սերտ համագործակցությամբ Նյուվադի,  
Էյնաձոր և Թղուբ գյուղերի մոտակյան բնակչության անունից  
1927-1928 թթ. դիմում-բողոքներ, նամակներ և հեռագրեր էին  
ուղարկվում ԹԻՖլիս՝ Անդրկենտրոնականին, ուր իբրև թե ցան-  
կություն էին հայտնում միանալ Զաքրայիլի գավառին<sup>4</sup>: Սակայն  
իրականությունն այն էր, որ նշյալ գյուղերի մոտակյան բնակչույթ-  
յան հիմնական մասը (հատկապես աղքատները) ցանկանում  
էին միանալ Մեղրու գավառին: Գ. Ստորուսայի հանձնաժողովի  
նիստերի ընթացքում նույնիսկ Զաքրայիլի գավառը կոմի նախա-  
գահ Մամեդխանովը հանգեց այն մտքին, որ առավել նպատա-  
կահարմար է նշյալ երեք գյուղերը միացնել Մեղրու գավառին:  
Այս տեսակետի հետ չհամաձայնվեց Ադրբեջանի հողագործույթ-  
յան ժողկոմ Գ. Բունիաթզադեն, ով կտրուկ կերպով պահանջում  
էր նշյալ գյուղերը թողնել Զաքրայիլի գավառի կազմում՝ հակա-  
ռակ դեպքում պահանջելով հարցը կրկին քննարկել Անդրդաշ-  
նության ղեկավար շրջանակներում<sup>5</sup>: Հարցը քննարկվեց նաև  
Զաքրայիլի գավառի կոմի նախագահության 1928 թ. հունվարի  
23-ի նիստում, ուր որոշվեց. «Նկատի ունենալով, որ նշված երեք  
գյուղերն ամբողջությամբ կտրված են դայրայի կենտրոնից (շուրջ  
70 վերստ) և բացակայում է հաղորդակցությունը, դարձյալ  
խնդրել Ադրբեջանի ԿԳԿ-ին այդ գյուղխորհուրդը դուրս բերել

<sup>1</sup> Նույն տեղում, ց. 2, գ. 1407, թ. 66 շրջ.-67, ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2270, թ. 2:

<sup>2</sup> ՀԱԼ, ֆ. 112, ց. 1, գ. 267, թ. 40:

<sup>3</sup> ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 1149, թ. 49-50:

<sup>4</sup> Նույն տեղում, ց. 1765, թ. 67, 72-73:

<sup>5</sup> Նույն տեղում, թ. 1 շրջ.-2:

Ջարբայիի գավառից և միացնել Մեղրիի գավառին»։ Ասվածը փաստում է նաև Նյուվադի գյուղի բնակիչների 1928 թ. փետրվարի 10-ի որոշումը Մեղրու շրջանին միավորվելու մասին։ Այստեղ միևնույն ժամանակ նշվում էր, որ գյուղի հարուստ կուլակներն են խոչընդոտել Մեղրու գավառին իրենց միավորմանը և ստիպել դիմումներ ուղարկել<sup>1</sup>։ Նշված հակասական դիմումները դժվարացնում էին սահմանները որոշող հանձնաժողովի աշխատանքները՝ հաճախ թյուրիմացություններ առաջ բերելով։ Հայաստանի ներկայացուցիչներին ևս զարմացնում էր այդ հակասական դիմումները, քանի որ մինչ այդ վերը նշված երեք գյուղերի թուրք բնակիչները, որոնք իրենց առօրյա գործունեության ընթացքում հաճախակի հարսաբերվում էին նաև Մեղրու գավառը կոմի հետ, հայ բնակիչների հետ խաղաղ գոյակցում էին։ Դ. Բունիաթզադեի դժգոհություններն ու շանտաժն անհետևանք չանցավ։ Հաշվի առնելով երկու կողմերի միջև գոյություն ունեցող սկզբունքային հակասությունները՝ հանձնաժողովը որոշում կայացրեց 3 գյուղերի հարցը հանել քննարկումից և փոխանցել դեկավար մարմինների որոշմանը<sup>2</sup>։

Ինչ վերաբերում է վերը հիշատակված 21 գյուղերին (Շայիֆի, Գիրգիլի, Նաջաֆլար, Կարազյոլ, Չուխուրյուրդ, Վերին Քենլիկ, Թագաքենդ, Առաջին Զյալի, Ջանբար, Շարիկուն, Աղքենդ, Քյալի, Գյուն, Ղշլաղ, Փիրվեյսալի, Շուրունլի, Բուրջանլար, Սեիդլար, Ներքին Քուլակլի, Ղազանչի, Թուլուկխոյախ), ապա դրանց պատկանելության հարցը բազմիցս քննարկվեց Անդրդաշնության կազմի մեջ մտնող հանրապետությունների միջև հողային և

անտառային վանելը բռնող հանձնաժողովի նիստերում, սակայն անընդհատ վերջնական որոշման ընդունումը ձգձգվում էր, և հարցը մնում էր բաց։ Տեղում գործող հանձնաժողովը, երկու հանրապետությունների ներկայացուցիչների համաձայնությամբ, մի քանի անգամ հանդիպումներ ունեցավ, նաև զրույցներ վարեց տեղի գյուղացիության հետ, սակայն անարդյունք։ Դրանց, ինչպես նաև Նյուվադի, Էյնածոր և Թղութ գյուղերի պատկանելության հարցը, այսպես ասած, «մեկ փաթեթով» որոշվեց Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում։

\* \* \*

Պատճառաբանելով Կարսի պայմանագիրը (13 հոկտեմբերի 1921 թ.)՝ 1920-ական թվականների կեսերին ադրբեջանցիները հավակնություններ էին հանդես բերում նաև Խորհրդային Հայաստանի և ինքնավար Նախիջևանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՆՍԽՀ) սահմանային գոտում գտնվող 9 բնակավայրի նկատմամբ։ Դրանք էին՝ Դարալագյազի գավառի Կուրթղուլազ, Գորադիս, Օղբին, Աղխաչ, Դիզին-Ալմալու, Ալմալու, Իթղան, Սուլթանբեկ (միասին շուրջ 35.000 դեսյատին տարածքով), Մեղրու գավառի Կարճևան գյուղերը, որոնք սահմանակից ՆՍԽՀ-ի բնակավայրերի հետ սահմանային վեճեր ունեին։ Վերը թվարկված բնակավայրերը 1918-1920 թթ. Հայաստանի Հանրապետության կազմում էին գտնվում։

1926 թ. հունվարի 11-ին, ապրիլի 14-ին և 1927 թ. օգոստոսի 3-ին տեղի ունեցած նիստերի ընթացքում Հայկոմկուսի կենտրոնի նախագահությունը քննարկեց ՆՍԽՀ-ի հետ սահմանի հաս-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 76։

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 80, 94, 95 և շք.։

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 2։

տասնամյա ուսուցչի, սակայն վերջնական որոշում չկայացվելիք: ՀԱԽՀ ղեկավարները նպատակահարմար էին համարում հարցը լուծել Անդրդաշնության կենտգործկոմի շրջանակներում՝ աղբյուր ջանական կողմի ներկայացուցիչների մասնակցությամբ<sup>1</sup>:

1927 թ. հոկտեմբերին Մեղրու գավառի Կարճևան գյուղի և ՆԱԽՀ Օրդուբադի գավառի Կիլիս գյուղերի միջև վիճելի համարվող 967,5 դեսյատին տարածքում հետազոտություն կատարեց Անդրդաշնության ԿԳԿ-ի հանձնաժողովը, սակայն այդպես էլ վերջնական որոշում չկայացվեց<sup>2</sup>:

Անդրդաշնության հանրապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովը 1929 թ. հունվարի 28-ից մինչև փետրվարի 2-ն ընկած ժամանակահատվածում գումարած նիստերի ընթացքում քննարկեց և որոշում կայացրեց նաև ՀԱԽՀ-ի և ՆԱԽՀ-ի միջև վիճելի համարվող բնակավայրերի և հողատարածքների վերաբերյալ<sup>3</sup>: Այն վավերացվեց Անդրդաշնության ԿԳԿ-ի նախագահության 1929 թ. փետրվարի 18-ի նիստում<sup>4</sup>: Մինչ այդ՝ 1927 թ. նոյեմբերին, տեղում որոշվել և համապատասխան արձանագրություն էր կազմվել ՀԱԽՀ-ՆԱԽՀ սահմանագծի Արագլայանի (այժմ՝ Երասխ) հատվածի վերաբերյալ<sup>5</sup>:

1929 թ. փետրվարի 18-ին Անդրկենտգործկոմի նախագահությունը մանրամասն քննության առավ դաշնության մեջ մտնող հանրապետությունների սահմանային գավառների միջև գոյություն ունեցող հողային և անտառային վեճերի մասին հարցը՝ խնդիր համարելով վերջնական լուծումներ տալ կուտակված և անընդհատ հետաձգվող խնդիրներին: Նշյալ նիստին մասնակցում էին նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ղեկավարները: Չնայած այս հանգամանքին՝ նիստի ընթացքում ընդունված որոշումները հետագայում միանշանակ չընդունվեցին: Ասվածն առավել քան վերաբերում է ՀԱԽՀ-ԱՍԽՀ սահմանագծին: Նշված նիստում հաստատվեց նաև ՀԱԽՀ Զանգեզուրի և ԱՍԽՀ Քրդստանի գավառների վարչատնտեսական սահմանը՝ համաձայն 1928 թ. օգոստոսի 24-28-ին կողմերի միջև կայացած համաձայնության: Ինչ վերաբերվում է հիմնական վիճելի տարածքներին, ապա որոշվեց Նյուվադի, Էյնաձոր և Թղուբ գյուղերն իրենց հողատարածքներով փոխանցել Մեղրիի գավառին, իսկ Ողջի և Բասուտ գետերի ավազանում գտնվող 21 գյուղերը՝ փոխանցել ԱՍԽՀ Զաքրայիլի գավառին: Անդրկենտգործկոմի հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովին հանձնարարվեց տեղում վերջնականապես որոշել Զանգեզուրի և Զաքրայիլի գավառների սահմանագիծը՝ լուծում տալով առկա հակասություններին: Որոշվեց նաև ՀԱԽՀ կազմում թողնել Նախիջևանի հավակնության առարկա հանդիսացած վերը նշված 9 գյուղերը: Մեղրու գավառի Կարճևան և Օրդուբադի գավառի Քիլիս գյուղերի սահմանային վիճելի համարվող հողամասը գրեթե հավասարապես բաժանվեց երկու գյուղերի միջև<sup>6</sup>:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 5, գ. 267, թ. 78-79 շրջ:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 6, գ. 6, թ. 4, 21-22, ց. 7, գ. 28, թ. 71:  
<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 703, թ. 203:  
<sup>3</sup> ՀԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2270, թ. 2 շրջ:  
<sup>4</sup> Ադրբեջանցի պատմաբան Ի. Նիֆթալիյին գայրուցել է այն հանգամանքը, որ նշված որոշումը կայացվել էր առանց «Նախիջևանի կարգավիճակի երաշխավոր» Թուրքիայի մասնակցության և համաձայնության (Нифталиев И., նշվ. աշխ., էջ 196): Մինչդեռ փաստ է, որ ի տարբերություն 1921 թ. Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագրի, Կարսի պայմանագրով Ադրբեջանը զրկվում էր իրավական հնարավորությունից՝ ապագայում Նախիջևանի հետ կապված որևէ հարցով դիմել Թուրքիային (մանրամասն տե՛ս Խոսեյատրյան Կ.Հ., նշվ. աշխ., էջ 141):  
<sup>5</sup> ՀԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2279, թ. 8:

Վերը բերված որոշումը պարզորոշ ցույց է տալիս, որ անհետևանք չանցան ադրբեջանական իշխանությունների հետևողական ճնշումներն ու շանտաժները: Չնայած հայկական կողմի ներկայացրած փաստարկներին՝ հաղթանակեց «որտեղ ադրբեջանական գյուղ, այնտեղ ադրբեջանական տարածք» սկզբունքով ուղղորդվող ադրբեջանական քաղաքականությունը: Բացի պատմական հիմքից (որի մասին ավելորդ է անգամ հիշատակելը) և վարչական նպատակահարմարությունից, նշենք նաև, որ Կապանի շրջակայքի 21 գյուղերն ամուր տնտեսական թելերով կապված էին Ջանգեզուրի գավառի հետ, քանի որ այդ գյուղերի բնակիչների զգալի մասը հանդիսանում էր Ջանգեզուրի պղնձածուխական գործարանի աշխատողներ: Չափազանց կարևոր է նաև արձանագրել, որ ռազմավարական և կոմունիկացիոն տեսակետներով ևս Ադրբեջանն առավելություն ստացավ հորհրդային Հայաստանի նկատմամբ: Վերջինի կարևորագույն քաղաքներից մեկի արվարձանով էր անցնում երկու երկրների սահմանագիծը, իսկ Ջանգեզուրի հարավն ու հյուսիսն իրար կապող խճուղին ցանկացած հակամարտության դեպքում գտնվելու էր ադրբեջանցիների փաստացի հսկողության ներքո:

Ի դեպ, այս նիստի օրակարգի խնդիրներից էր «ՀՄԽՀ Լոռի-Փամբակի և ՎՄԽՀ Բորջալուի գավառների միջև եղած ողջ տարածքում վարչատնտեսական սահմանի հաստատման մասին» հարցը: Ըստ այդմ՝ հաստատվեց ՀՄԽՀ և ՎՄԽՀ հողագործության ժողկոմներ Ա. Երզնկյանի և Ա. Ջուղեյի միջև 1928 թ. օգոստոսի 10-ին կայացած համաձայնությունը գավառների սահմանագծման մասին: Վրացական կողմի պահանջով ամրագրվում էր, որ ՀՄԽՀ տարածքում մնացող և ջրապաշտպան

հսկողություն սահմանվի: Երկու ժողկոմներին հանձնարարվեց կայացված համաձայնության հիման վրա լուծել բոլոր վիճելի հարցերը և մանրամասն նկարագրել նշված գավառների ամբողջ սահմանագիծը, որն այնուհետև ներկայացվելու էր Անդրդաշնության հանձնաժողովի հաստատմանը: Նիստում քննարկվեց նաև «ՀՄԽՀ Լենինականի և ՎՄԽՀ Ախալքալաքի գավառների միջև վարչատնտեսական սահմանի անցկացման մասին» հարցը: Մերժվեց հայկական կողմի խնդրանքը՝ 80 դեսյատին հողատարածք միացնել Լենինականի Դարաքյոյ գյուղին: Մասնակի փոփոխություններով հաստատվեց 1927 թ. օգոստոսի 13-ին Լենինականի և Ախալքալաքի գավառների միջև վարչատնտեսական սահմանի անցկացման մասին համաձայնության ակտը<sup>1</sup>:

Չնայած վերը բերված իրողություններին՝ պետք է ակտուսանքով արձանագրենք, որ ՀՄԽՀ ղեկավարներն ի զորու չէին ընդդիմանալ 1929 թ. փետրվարի 18-ին Անդրդաշնության կենտգործկոմի կայացրած որոշմանը: Ավելին, 1929 թ. ապրիլի 29-ին ՀՄԽՀ կենտգործկոմի նախագահությունը (նախագահ Ա. Կասյանի և քարտուղար Բ. Դաշտոյանի ստորագրությամբ) հատուկ շրջաբերական ուղղեց հանրապետության «բոլոր գավառորձկոմներին», ուր պարզաբանում էր «ԼՍԴԽՀ կազմի մեջ մտնող հանրապետությունների մի քանի սահմանամերձ գավառների բնակչության հողային և անտառային վեճերի մասին» որոշման հանգամանքները: Տեղեկացվում էր, որ նշյալ որոշումը տեղեղում կիրառելու պարտականությունը դրվում է Անդրկենտգործկոմին

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 83 և 2րջ:

առընթեր հողային և անտառային վեճերը քննող հանձնաժողովի վրա, որը պետք է իր աշխատանքներն ավարտեր 1929 թ. աշնանից ոչ ուշ: Տեղեկացվում էր, որ Անդրդաշնության կազմում գտնվող հանրապետությունների սահմանամերձ գավառների (այդ թվում՝ Ախալքալաքի և Լոռի-Փամբակի) միջև մինչ այդ «գոյություն ունեցող հողային և անտառային վեճերի լուծումը համարվում է վերջնական»: Շեշտվում էր, որ որոշումն ընդունվել է կողմերի լիազորված ներկայացուցիչների «միաձայն որոշմամբ, որոնք խորհրդակցությանը մասնակցել են Աղբրեջանի, Վրաստանի և Հայաստանի ՍԽՀ Կենտրոնականի ու ժողկոմխորհների նախագահների գլխավորությամբ»: Վերջում գավառներին հրահանգվում էր ամեն կերպ աջակցել Հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովին: Զանգատները ներարկվելու էին քրեական պատասխանատվության<sup>1</sup>:

Այդուհանդերձ աղբրեջանցիները ոչ միայն չէին զոհանում իրենց «ձեռքբերումներով», այլև ավելի մեծ հավակնություններ էին հանդես բերում: Այսպես՝ փետրվարի 16-ի որոշման հիման վրա ԱՄԽՀ նախկին Զարրայիի և ՀՍԽՀ Զանգեզուրի և Անդրուզ գավառների վարչատնտեսական սահմաններ անցկացնող հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտել էին Ղուբաբջուրի անտառտնտեսության ներկայացուցիչ Ազիզ Կույինչը, Զանգեզուրի շրջգործկոմի անդամ Մ. Համիրովը և Զանգեզուրի շրջգործկոմի ներկայացուցիչ Բասիմ Խալիլովը: Նրանց հրահրմամբ մուսուլման գյուղացիները սահմանային նշաններ տեղադրող հողաչափին մի քանի բնակավայրում դիմադրություն ցույց տվեցին, որի հետևանքով հունիսի 27-ին սկսված աշխատանքներն օգու-

տար 12-ին արգելակվեցին: Ա. Կույինչը տեղական բնակչությանը հողդրոմ էր նորանոր դիմում-բողոքներ ուղարկել ԹԻՖլիս, իսկ Բ. Խալիլովը սպառնալիցներ էր տեղում սահմանագծման աշխատանքներին օժանդակող մուսուլման գյուղացիներին՝ նրանց մեղադրելով «հայերից կաշառք վերցնելու» մեջ: Հողաչափ Ա. Սոսելին ստիպված էր պարբերաբար նրանց հիշեցնել, որ Անդրկենտրոնականի նախագահություն բողոք ներկայացնելու դեպքում իրենց արարքների համար նրանք պատասխանատվության կենթարկվեն: Բանն այնտեղ հասավ, որ Ա. Սոսելիի դիմումի հիման վրա Անդրկենտրոնականի նախագահությունը հրահանգեց պաշտոնից ազատել Ա. Կույինչին և պատասխանատվության ենթարկել<sup>2</sup>:

Ինչ վերաբերվում է ՀԱՄԽ-ՆՍԽՀ սահմանագծին, ապա վերջինի հստակեցումն առավել դյուրին եղավ: 1929 թ. ապրիլի 15-ին սահմանագծում կատարող հանձնաժողովի նախագահին ուղղված հրահանգում Անդրկենտրոնականի հողահանձնաժողովի նախագահի տեղակալ Վ. Զինենկեյին հանձնարարեց ՆՍԽՀ և ՀՍԽՀ վարչատնտեսական սահմանների ողջ երկայնքով սահմանագծում կատարել: Հետագա բարդություններից խուսափելու համար խորհուրդ էր տրվում սկզբում որոշել Կարճևանի և Քիլիտի սահմանագիծը, և հողաչափային-տեխնիկական հանձնաժողովի աշխատակիցների աշխատանքի հիման վրա համապատասխան ակտ կազմել<sup>3</sup>: Նշենք, որ մինչև աշուն հանձնաժողովը 110 կմ երկարությամբ սահմանագծում տեխնիկական աշխատանքներ էր կատարել՝ տեղադրելով 156 սահմանային տե-

<sup>1</sup> ՎԱԱ, ֆ. 607, ց. 1, գ. 2534, թ. 15-17 շրջ., 22 և շրջ., 28 և շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում, գ. 2279, թ. 11:

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 12 և շրջ.:

ղանշան, նաև կողմերի միջև բաժանել Կարճևանի և Քիփտի միջև վիճելի տարածքը: ՀՄԽՀ-ՆՄԽՀ սահմանագծի մնացյալ 120 կմ հատվածում, ուր աշխատանքները դեռևս ավարտված չէին, արոտավայրի (429,65 հա) վերաբերյալ վեճեր էին առաջացել: Անդրդաշնության հանրապետությունների հողային և անտառային վեճերը լուծող հանձնաժողովի 1929 թ. հոկտեմբերի 25-ի նիստում, որին մասնակցում էին նաև հանրապետությունների հողագործության ժողկոմները, որոշում կայացվեց վիճելի հարցերի վերաբերյալ և մանրամասն նկարագրությամբ հաստատվեց ՀՄԽՀ-ի և ՆՄԽՀ-ի սահմանագիծը<sup>1</sup>:

Չնայած գործադրված քանքերին՝ այդուհանդերձ, մինչև 1930-ական թվականների սկզբները ՀՄԽՀ-ի և ԱՄԽՀ-ի սահմանային որոշ հատվածներում հնարավոր չեղավ վերջ տալ առկա վեճերին և սահմանագծում կատարել: Դրանք էին՝ ՀՄԽՀ Կապանի և ԱՄԽՀ Ջանգելյանի շրջանների միջև շուրջ 300 հեկտար հողատարածքի պատկանելության շուրջ վեճը (հայկական Հանդ և ադրբեջանական Ռազիդարա գյուղերի միջև), Ջանգելյանի և Նուբաթլուի անտառատնտեսությունների միջև վեճի առարկա հանդիսացող 522,5 և 1277,5 հա անտառային տեղամասերի հարցը, հայկական Էսոզնավար և ադրբեջանական Հաջիար ու Սադունլար գյուղերի միջև վեճը<sup>2</sup>:

1930-ականների սկզբներին շարունակում էր խեղդահարույց մնալ ՀՄԽՀ Կապանի և ԱՄԽՀ Ջանգելյանի շրջանների սահմա-

հատուկ հանձնաժողով կազմեց՝ երկու շրջանների միջև եղած հողային վեճերին լուծում տալու նպատակով: Հիմք ընդունելով հանձնաժողովի առաջարկները՝ Անդրդաշնության ԿԳԿ-ի Եախազախությունը 1935 թ. հունիսի 28-ի նիստում որոշում կայացրեց Կապանի և Ջանգելյանի շրջանների միջև սահմանի հաստատման մասին: Ըստ այդմ՝ սահմանն անցնելու էր Բարթազ-Շյուքյուրթազ-Սորուկալա լեռնագագաթներով<sup>1</sup>: Նշյալ որոշումից անմիջապես հետո՝ օգոստոսի 12-13-ին, տեղում աշխատանքներ իրականացրեց Կապանի և Ջանգելյանի շրջանների սահմանները վերջնականապես որոշող հանձնաժողովը: 1935 թ. դեկտեմբերի 9-ին Երևան ուղարկելով երկու կողմերի միջև սահմանի վերաբերյալ ստորագրված վերջնական ակտը՝ Կապանի շրջագործկոմի ղեկավարությունը հայտնում էր, որ Ջանգելյանի հետ «սահմանի վեճի լսնդիրը լուծված է վերջնականապես տեղում»<sup>2</sup>:

Փաստորեն, Անդրդաշնության կենտգործկոմի 1929 թ. փետրվարի 18-ի որոշման հիման վրա՝ հիմնականում Խորհրդային Հայաստանի տարածքային կորուստների հաշվին, առերևույթ «կարգավորվեցին» Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի սահմանային հակասությունները: 1936 թ. դեկտեմբերի 6-ին ընդունված ԽՍՀՄ Սահմանադրությամբ և 1937 թ. փետրվարին տեղի ունեցած Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհուրդների արտակարգ համագումարների որոշումների համաձայն՝ լուծարվեց Անդրկովկասյան դաշնությունը: Այսուհետ Խորհրդային Հայաստանը,

<sup>1</sup> ՎԱԽ, ֆ. 607, ց. 1, գ. 866, թ. 13:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 9-10 շրջ.:

<sup>1</sup> Նույն տեղում, գ. 2270, թ. 36 շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում, թ. 38 շրջ.:

Խորհրդային Վրաստանը և Խորհրդային Ադրբեջանը հասել  
կազմում հանդես էին գալու որպես առանձին հանրապե-  
տություններ: Ուստի կարևոր էր, որ Անդրդաշնության գոյության  
ընթացքում հիմնականում որոշվեցին հանրապետությունների  
միջպետական սահմանագծերը: Այդ ամենով հանդերձ՝ իարկ է  
արձանագրել, որ տարածքային-սահմանագծային վեճերը շա-  
րունակվեցին նաև Անդրկովկասյան դաշնության լուծարումից  
հետո:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### ՀՂԻՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

#### 3.1. *Լեռնային Ղարաբաղի բուսակցումը Խորհրդային Ադրբեջանին*

1918 թ. մայիսի վերջին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաս-  
տանի անկախության հռչակումից հետո Ղարաբաղում (պատմա-  
կան Արցախ), որը 1813 թ. Գյուլիստանի ռուս-պարսկական պայ-  
մանագրով անցել էր Ռուսաստանյան կայսրությանը և 1868  
թվականից գտնվում էր կայսրության ելիզավետպոլի նահանգի  
կազմում, նույնպես կողմնորոշվեցին դեպի անկախությունը: 1918  
թ. հուլիսի 22-26-ին Շուշիում իրավիրված երկրամասի հայութե-  
յան 1-ին համագումարում Ղարաբաղը հռչակվեց վարչատարած-  
քային անկախ միավոր, ընտրվեց Ազգային խորհուրդ և Ժե-  
ղովրդական կառավարություն:

Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական  
օժանդակությամբ 1918-1920 թթ. Ղարաբաղի հայությանը մեծ  
կորուստների գնով հաջողվեց դիմակայել Ադրբեջանի ազգայ-  
նամոլ և ցեղասպան քաղաքականությանը (միայն 1920 թ. գար-  
նանը Շուշիում և հարակից հայկական բնակավայրերում իրա-  
կանացրած ջարդերի և էթնիկ զտումների արդյունքում սպանվե-

ցին մի քանի հազար հայ խաղաղ բնակիչներ, թալանվեց կամ ոչնչացվեց նրանց ողջ ունեցվածքը):

1920 թ. ապրիլի վերջին տեղի ունեցած 9-րդ համագումարում Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս հռչակած երկրամասի հայությանը այլ ելք չէր մնում, քան արդեն մայիսի 25-ին՝ 10-րդ համագումարում պատերազմից խտապելու նպատակով ընդունել խորհրդայնացումը:

Ղարաբաղի խորհրդայնացումից հետո խորհրդային Ադրբեջանի նկրտումները վերջինիս նկատմամբ թեև գնալով ուժգնանում էին, սակայն, ինչպես նշվել է, ԹԻՖլիսում 1920 թ. օգոստոսի 10-ին ՌՍԴԽՀ կառավարության և Հայաստանի Հանրապետության միջև ստորագրված համաձայնագրով Ղարաբաղը (նաև Ջանգեզուրն ու Նախիջևանը) հայտարարվեցին «վիճելի տարածքներ» և «Ժամանակավորապես» զինագրավվելու էին խորհրդային զորքերի կողմից: Դա, սակայն, «չէր կանխորոշելու վիճելի տարածքների նկատմամբ Հայաստանի Հանրապետության կամ Ադրբեջանական Սոցիալիստական խորհրդային Հանրապետության իրավասությունը»<sup>1</sup>:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ Ղարաբաղը 1918–1920 թթ. հանդիսանում էր առանց ճշգրիտ սահմանների վարչատարածքային առանձին միավոր և, ինչպես իրավագի նկատում է հետազոտող Ա. Մանասյանը, «դե-ֆակտո ներկայանում էր իբրև սուվերեն պետական կազմավորում»<sup>2</sup>:

1920 թ. դեկտեմբերի սկզբին Հայաստանի Հանրապետության խորհրդայնացմամբ նոր իրադրություն ստեղծվեց նաև Ղա-

րաբաղի հարցում: Հայաստանի խորհրդայնացման օրերին՝ 1920 թ. նոյեմբերի 30-ին, Ադրբեջանի հեղկոմը հանդես էր եկել հայտարարությամբ, որում նշվում էր, որ խորհրդային Ադրբեջանի և խորհրդային Հայաստանի միջև այլևս սահմանային խնդիր գոյություն չունի, Ջանգեզուրն ու Նախիջևանը անցնում են Հայաստանին, իսկ Ղարաբաղի լեռնային մասին տրվում է ինքնորոշման իրավունք: Դեկտեմբերի 2-ին հրապարակվեց Բաքվի «Կոմունիստ» թերթում: Ավելին, Ադրբեջանի հեղկոմը շուտով «Բոլորին, բոլորին, բոլորին» խորագրով դիմումով (որում Լեռնային Ղարաբաղին վերաբերող մասը տարբերվում էր դեկրետում նշվածից) ազդարարեց. «Այսօրվանից վերացված են հայտարարվում սահմանների մասին վեճերը Հայաստանի և Ադրբեջանի միջև: Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը համարվում են ՀՄԽՀ մասեր»: Որոշում-դիմումը տպագրվել է երևանի «Կոմունիստ» թերթի 1920 թ. դեկտեմբերի 7-ի համարում:

Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման սեփական քաղաքականություն էր իրականացնում տարածաշրջանում կուսակցական ղեկավար մարմին հանդիսացող ՌԿ(Բ)Կ կենտկոմի կուկասյան բյուրոն: Վերջինիս կողմից 1921 թ. հունիսի 3-ին ընդունված որոշման 5-րդ կետով խորհրդային Հայաստանի կառավարությանը հանձնարարվում է Հռչակագրով հայտարարել «Լեռնային Ղարաբաղի» Հայաստանին պատկանելու մասին»<sup>3</sup>: Բյուրոյի որոշումն ընդունվել էր միաձայն, կողմ արտահայտվողների թվում էր եղել նաև Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովը:

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 633.

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 574–575.

<sup>2</sup> Манасян А., Карабахский конфликт: Ключевые понятия и хронология. Ереван, 2005, с. 161.

Ի կատարումն Կովկասյան բյուրոյի որոշման՝ ՀԱԽՀ ժողկոմխորից, կառավարության նախագահ Ա. Մյասնիկյանի ստորագրությամբ, 1921 թ. հունիսի 12-ին ընդունեց համապատասխան հայտարարություն. «Ադրբեջանի ՍԽՀ հեղկոմի հռչակագրի (նկատի է առնվում 1920 թ. նոյեմբերի 30-ի հայտարարությունը – *հեղ.*) և Հայաստանի ու Ադրբեջանի ՍԽՀ-ների կառավարությունների միջև եղած համաձայնության հիման վրա հայտարարվում է, որ Լեռնային Ղարաբաղը այժմվանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության անբաժան մաս»<sup>1</sup>: Հայտարարությունը հայերեն, ռուսերեն ու թուրքերեն հրատարակվեց ժամանակի մամուլում՝ Երևանի «Խորհրդային Հայաստան» թերթում՝ հունիսի 19-ին, իսկ Բաքվի «Բակինսկի ռաբոչի» ռուսալեզու թերթում՝ հունիսի 22-ին:

Այսպիսով, կարծես իր արդարացի, հիմնավորված և վերջնական հանգուցալուծումն էր ստանում Լեռնային Ղարաբաղի խնդիրը՝ այն կազմելու էր Հայաստանի «անբաժան մասը»: Իրադարձությունները, սակայն, այլ ընթացք ստացան, թե-րք-արդրեջանական այլանսին հաջողվում է կասեցնել խնդրի արդարացի լուծումը:

1921 թ. հունիսի 25-ին Թիֆլիսում հրավիրված Անդրկովկասի հանրապետությունների ներքին սահմանները որոշող հատուկ հանձնաժողովի<sup>2</sup> անդամնիկ նիստում ադրբեջանական կողմը՝ ի դեմս հանձնաժողովում Ադրբեջանի ներկայացուցիչ Ա. Հուսեյնովի, Ղարաբաղի հարցում որդեգրում է անգիջում վար-

քագրո: Պատճառաբանելու, թե չի ստացել խնդրի վերաբերյալ Բաքվից հրահանգներ ու լիազորություններ՝ Հուսեյնովը խնդրում է հեռաձգել հարցի քննարկումը: Ատեղծված իրավիճակում, որը սպառնում էր ծախողել հանձնաժողովի աշխատանքները, նրա նախագահ Ա. Կիրովը և ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի անդամ Գ. Օրջոնիկիձեն հունիսի 26-ին շտապում են հեռագրել Բաքու՝ Ն. Նարիմանովին. «Խնդրում ենք շտապ հրավիրել քաղբյուր և ժողկոմխորի ու լուծել Ղարաբաղի հարցը»: Օրջոնիկիձեն և Կիրովը հայտնում են հարցի վերաբերյալ իրենց մտածցումը. «Անիրաժեշտ է ղեկավարվել այսպիսի սկզբունքով՝ ոչ մի հայկական գյուղ չպետք է միացվի Ադրբեջանին, ինչպես և ոչ մի մուսուլմանական գյուղ չի կարելի միացվել Հայաստանին»<sup>3</sup>: Նույն օրը հրավիրվում է Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի քաղբյուրոյի և կազմբյուրոյի համատեղ նիստ, որտեղ Գ. Օրջոնիկիձեի և Ա. Կիրովի առաջարկությունն արմատապես սխալ է համարվում: Ինչ վերաբերվում է Ղարաբաղի հարցին, ապա ընդունվում է հետևյալ որոշումը. «Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի տնտեսական բացարձակ կապն Ադրբեջանի հետ՝ հարցը պետք է լուծել հենց այդ իմաստով»<sup>3</sup>: Որոշման մասին հաջորդ օրը Բաքվից հաղորդելով Թիֆլիս՝ Հուսեյնովին, նշվում է, որ հակառակ դեպքում Նարիմանովը սպառնացել է Ադրբեջանի ժողկոմխորի իրաժարականով: Պատասխանում Հուսեյնովը Նարիմանովին նշում է, որ որոշումը սառնությամբ կընդունվի, որովհետև իր հետ գրույցում Օրջոնիկիձեն շիտակ հայտնել է, որ Ղարաբաղի հարցի լուծումը խորհրդային իշխանության պատվի

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 636:

<sup>2</sup> Հանձնաժողովը ստեղծվել էր ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. մայիսի 2-ի որոշումով և պետք է կարգավորեր Անդրկովկասի խորհրդային հանրապետությունների միջև առկա տարաձայնի-սահմանային վեճերը:

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 642.

<sup>2</sup> ՀԱԽ, ֆ. 1, ց. 1, գ. 103, թ. 7–10:

<sup>3</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 645.

Ձեզ երեկ հաղորդել եմ»<sup>1</sup>:

Սակայն անգամ բոլշևիկ բարձրաստիճան ղեկավարների «վճռական հրահանգը» չազդեց Նարիմանովի վրա, Ղարաբաղի հարցում Ադրբեջանը շարունակեց իր կոշտ քաղաքականությունը: Հանդիպելով ադրբեջանական կողմի Լեւան դիրքորոշմանը՝ հանձնաժողովում Հայաստանի միակ ներկայացուցիչ Ա. Բեկզադյանը հունիսի 27-ին հրաժարվում է մասնակցել սահմանների որոշման հետագա աշխատանքներին և պնդում, որ պետքի տարածքային հարցերը փոխանցվեն ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի քննարկմանը: Հավելենք, որ հանձնաժողովում Ա. Բեկզադյանն առաջ էր քաշել նաև Լոռին ու Ախալքալաքի գավառը Խորհրդային Հայաստանի մաս ճանաչելու հարցը, որը, սակայն, մերժվել էր հանձնաժողովի 3 ադրբեջանցի և 2 վրացի ներկայացուցիչների կողմից<sup>2</sup>:

Ղարաբաղի հարցը քննարկվում է 1921 թ. հուլիսի 2-7-ը Թիֆլիսում գումարված ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի նիստում, որին Գ. Օրջոնիկիձեի հրավերով մասնակցում էր Հյուսիսային Կովկասում (Նայչիկում) սրժակուրդում գտնվող ՌԿ(Բ)Կ կենտկոմի անդամ Ի. Ստալինը: Նիստում քվեարկության արդյունքում ընդունվում է հետևյալ որոշումը. «Լեւոնային Ղարաբաղը *կտրելու* (ընդգծումը մերն է - *հեռ.*) ՀՍԽՀ կազմ»: Որոշմանը, սակայն, դարձյալ դեմ է արտահայտվում Ն. Նարիմանովը: Նա պնդում է, որ պետքի հարցի վերջնական կարգավորումը փոխադրվի Մոսկվա՝ ՌԿ(Բ)Կ կենտկոմ:

Պլենումն ընդառաջում է Ն. Նարիմանովին և նրա առաջարկի ոգով ընդունում նոր որոշում. «Քանի որ Ղարաբաղի մասին հարցն առաջացրել է լուրջ տարածայնություններ, ՌԿԿ կենտկոմի կովկասյան բյուրոն անհրաժեշտ է համարում այն փոխադրել ՌԿԿ վերջնական որոշմանը»<sup>1</sup>: Սակայն հաջորդ օրը՝ հուլիսի 5-ին, անսպասելի հրավիրվում է Կովկասյան բյուրոյի պլենումի արտահերթ նիստ, ուր վերանայվում են Ղարաբաղի հարցի վերաբերյալ պլենումի հուլիսի 4-ի որոշումները: Պլենումը նոր որոշում է ընդունում. «Ելնելով մոսկովյանների ու հայերի միջև ազգային խաղաղության և վերին ու Ներքին Ղարաբաղների տնտեսական կապի անհրաժեշտությունից, Ադրբեջանի հետ նրա մշտական կապից՝ Լեւոնային Ղարաբաղը *թողնել* (ընդգծումը մերն է - *հեռ.*) ԱդրՍԽՀ սահմաններում՝ նրան տրամադրելով մարզային լայն ինքնավարություն, վարչական կենտրոնը՝ ինքնավար մարզի կազմում գտնվող Շուշի քաղաքն է»: Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին հանձնարարվում է որոշել ինքնավար մարզի սահմանները և ներկայացնել Կովկասյան բյուրոյի հաստատմանը<sup>2</sup>:

Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 4-ի և 5-ի նշված որոշումներում մեր կողմից ընդգծված բառերը՝ «մտցնել» և «թողնել», երբեմն մեծ իրարանցում են առաջացնում ադրբեջանցի հեղինակների շրջանում: Ադրբեջանական պատմագիտական գրականության, նաև ցրատվական միջոցներում հրապարակված ադրբեջանցի պատմաբանների և քաղաքագետների նյութերում փորձ է արվում համոզել հասարակայնությանը, թե «գտնվել է

<sup>1</sup> ՀԱԱ. ֆ. 1, ց. 1, գ. 105, թ. 11:

<sup>2</sup> Հայոց պատմություն, հատոր IV, գիրք առաջին, էջ 321-322:

<sup>1</sup> Нагорный Карабах в 1918-1923 гг., с. 64-65.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 650:

Ղարաբաղի՝ Ադրբեջանին «ի սկզբանե» պատկանելու «ամենա-  
հիմնական ապացույցը»։ «Թողնեք կարելի է միայն այն,- գրում  
են նրանք,- ինչը մինչ այդ այնտեղ գտնվել է ի սկզբանե։ Այս մեկ  
պարզ փաստաթուղթը վկայում է, որ Ղարաբաղը միշտ գտնվել է  
Ադրբեջանի կազմում»<sup>1</sup>։ Ադրբեջանցի հետազոտողների «մտքի  
թռիչքին», «խորը գիտելիքներին» և «երկաթյա տրամաբանությ-  
յանը» նախանձել կարելի է։ Թող մասնագետները պնդեն իրեն-  
ցը, սկզբնաղբյուրների, պատմական անժխտելի փաստաթղթե-  
րի վրա հիմնված հարյուրավոր հաստորներ հրատարակեն, միև-  
նույնն է՝ ադրբեջանցի «մասնագետները» ռուսերեն «**включить**»  
և «**оставить**» բառախաղի միջոցով «ապացուցել և որոշել են»  
Ղարաբաղի ճակատագիրը։ Իրոք որ, ինչպես նման դեպքերում  
են ասում՝ մեկնաբանություններն ավելորդ են։

Մեկ հարցում, թերևս, կարելի է համաձայնվել ադրբեջանցի-  
ների հետ։ Ռա այն է, որ նրանք «զարմանում և ծիծաղելի են հա-  
մարում», թե ինչու հայերը, ինչպես նաև «անկախ մեդիա-աղբ-  
յուրները և անգամ երրորդ երկրների քաղաքական գործիչները»,  
նշում են, թե «Ղարաբաղը Հայաստանից խլվեց և Ադրբեջանին  
փոխանցվեց Ստալինի թեթև ձեռքով»։ «Հիշեցնենք սակայն,-  
շարունակում է ադրբեջանցի հեղինակը,- որ գործը տեղի է ունե-  
լում 1921 թ. կեսերին, երբ իշխանությունն երկրում ամբողջությ-  
յամբ գտնվում էր գործունակ և ուժեղ Վ.Ի. Լենինի ձեռքերում,  
իսկ ՌԿ(Բ)Կ կենտկոմի շարքային անդամ Ի.Վ. Ստալինի մասին  
դեռ շատ քչերը գիտեին»<sup>2</sup>։

Այո, հուլիսի 5-ի որոշման ընդունման գործում ՌԿ(Բ)Կ կենտ-  
կոմի անդամ, բայց ոչ «շարքային» Ի. Ստալինի բացասական դե-  
րը մեծ էր, բայց, կարծում ենք, ոչ որոշիչ։ Այլապես ինչով բա-  
ցատրել, որ Ի. Ստալինի ներկայությունը հուլիսի 4-ի նիստին չէր  
խանգարել Ղարաբաղի հայության օգտին արդարացի որոշման  
ընդունմանը։ Չի բացառվում, որ հուլիսի 4-ի որոշումից հետո  
ադրբեջանական կողմին հաջողվել էր ստանալ ՌԿ(Բ)Կ կենտկո-  
մի առավել ազդեցիկ անդամների՝ Վ. Լենինի և Լև Տրոցկու  
աջակցությունը, համոզել նրանց՝ հրահանգել կավելյուրյին  
Ադրբեջանի օգտին վերանայել հուլիսի 4-ի որոշումը։ Կավելյուրո-  
յի հուլիսի 5-ի ոչ օրինական որոշման կայացման նշված վարեա-  
ծի օգտին է խոսում նաև այն փաստը, որ պլենումին Խորհրդա-  
յին Հայաստանի ներկայացուցիչ Ա. Մյասնիկյանը, Ն. Նարինա-  
նովի օրինակով, չպնդեց ղարաբաղյան հարցի վերջնական լու-  
ծումը ՌԿ(Բ)Կ կենտկոմ փոխարդելու հարցում, որի իրավունքը  
նա ուներ։ Հայկոմկոմի ստաջին համագումարում (26-29 հուն-  
վարի 1922 թ.) ելույթում փորձելով հերքել իր և ՀԿ(Բ)Կ կենտկոմի  
հասցեին ինչա՞ծ խիստ քննադատությունը և ծանր մեղադրանք-  
ները, որ վերջիններս Ղարաբաղի հարցում չբոսնորեցին վճա-  
կանություն և առավել հաստատական չպնդեցին երկրամասը  
Խորհրդային Հայաստանին միացնելու հարցում, Ա. Մյասնիկյա-  
նը, կարծես արդարանալով, որ Ն. Նարինանովի օրինակով չի  
պնդել ղարաբաղյան հարցի վերջնական լուծումը ՌԿ(Բ)Կ կենտ-  
կոմ փոխարդելու հարցում, նշում է միայն, որ Կովկասյան բյուրո-  
յի պլենումի նիստը էիշեցնում էր Անդրկովկասի հանրապետու-  
թյունների նախկին ղեկավարների պայքարը. «Այսպես՝ Ադրբե-

<sup>1</sup> [http://news.bakililar.az/news\\_razvenchanie](http://news.bakililar.az/news_razvenchanie)

<sup>2</sup> Նույն տեղում։

շատ անո՞ւ էր, որ Կոմկոմիտեի անդամները մենք նավթ չենք մատակարարի»<sup>1</sup>:

Պետք է ենթադրել, որ բուլղարական բարձրաստիճան գործիչների հետ անդրկուլիայան խարդավանքերում Նարիմանովի կողմից որպես որոշիչ կովան առաջ է քաշվել ոչ միայն ադրբեջանական նավթի, այլև «թուրքական գործունը»: Գաղտնիք չէ, որ պատմական տվյալ ժամանակաշրջանում բուլղարիկների համար որոշիչը ոչ թե ճշմարտությունն էր և Ղարաբաղի հայության արդար պահանջատիրությունը, այլ հենց Բաքվի նավթը և քեմալական Թուրքիայի բարեհաճ տրամադրվածությունը՝ համաշխարհային հեղափոխությունը դեպի մոսկովյանական Արևելք տարածելու հեռանկարի առումով: Հավելենք նաև, որ Խորհրդային Ռուսաստանի վրա թուրք-ադրբեջանական ճնշումը կրում էր հետևողական և շարունակական բնույթ:

Պատմության նմանատիպ «սպիտակ էջերի» բացահայտման խնդիրն է, որ պետք է մտահոգի իրական մասնագետին, այլ ոչ թե բառախարհի օգնությամբ անհերթեթև և ճշմարտությունից շատ հեռու հետևություններ կատարելը, ինչով տարված են ադրբեջանցի որոշ հեղինակներ:

ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի որոշումն օրինական չէր, այն ընդունվել էր առանց անդամների անհատական քվեարկության և պարտադրված էր «կոաակցական կարգով»: Այն հակասում էր միջազգային իրավունքի հիմնարար՝ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքին, ուստի հարվում էին Լեոնային Ղարաբաղի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայության (շուրջ 95%) իրավունքները:

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 2, թ. 13, 23:

անտեսվում էին նաև Խորհրդային Հայաստանի շահերը, միայն թե ինչու ՀԿ(Բ)Կ կենտկոմը 1921 թ. հուլիսի 16-ին որոշեց, որ Ղարաբաղի հարցի վերաբերյալ Կովկասյան բյուրոյի պլենումի բանաձևն «իրենց չի բավարարում»<sup>1</sup>:

Կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի որոշումից հետո Ադրբեջանի ղեկավարությունը ջանք ու եռանդ չէր խնայում ստանալու արցախահայության համաձայնությունը Ադրբեջանի գերիշխանությունը ճանաչելու հարցում: Այդ նպատակին հասնելու համար ադրբեջանական իշխանությունները Լեոնային Ղարաբաղի տարբեր շրջաններում լայն քարոզարշավ անցկացրեցին, սակայն ամենուրեք հանդիպեցին «սառը դիմադրության»: Բաքվի ջանքերով Ստեփանակերտում հրավիրված շրջանի գործադիր կոմիտեների ներկայացուցիչների 1921 թ. հուլիսի 28-ի համագումարի աշխատանքների մասին Ղարաբաղից երևան ուղարկված գաղտնի զեկուցագրերից մեկում նշվում է. «Դրությունն օրհասական է, խնդրում ենք միջոցներ ձեռնարկել Լեոնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միացնելու համար»<sup>2</sup>: Այդպիսին էր Արցախի ողջ հայ բնակչության միահամուռ ցանկությունը, սակայն դրա հետ ոչ-ոք հաշվի չէր նստում:

### 3.2. ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները

Ադրբեջանի իշխանությունները չէին շտապում կյանքի կոչել Լեոնային Ղարաբաղին ինքնավարություն տրամադրելու մասին ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի որո-

<sup>1</sup> ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 18:

<sup>2</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 653–654.

շումը: Նրանց հետահար նպատակն էր. առժամանակ մոռացության մատնել խնդիրը, իսկ հետագայում հասնել նրան, որպեսզի երկրամասը տարալուծվի ԱդրՍԽՀ վարչական շրջանների մեջ: Այդ մասին է վկայում հետևյալ ուշագրավ փաստը. ԱդրԿ(ք)<sup>4</sup> կենտկոմի կազմըյուրոյի և քաղքյուրոյի 1921 թ. սեպտեմբերի 26-ի նիստում, որը նախագահում էր կենտկոմի քարտուղար Ս. Կիրովը, ձայների մեծամասնությամբ որոշվում է. «խնդրել Կավքյուրոյին, որպեսզի վերանայի Լեռնային Ղարաբաղն առանձնացնելու մասին իր որոշումը, իսկ մինչ այդ ինքնավարություն չառանձնացնել»<sup>1</sup>:

Ադրբեջանական կողմի նենգամիտ այս ծրագիրը, սակայն, վերջնական հաջողություն չունեցավ: Չհանդուրժելով Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրամադրելու որոշման կատարման միտումնավոր ձգձգումը Ադրբեջանի կողմից, 1922 թ. հունիսի 5-ին ՀԿ(ք)<sup>4</sup> կենտկոմի պլենումը որոշում է դիմել ՌԿ(ք)<sup>4</sup> կենտկոմի անդրկովկասյան երկրային կոմիտեին (որը փոխարինել էր ՌԿ(ք)<sup>4</sup> կենտկոմի կովկասյան քյուրոյին)<sup>2</sup> որպեսզի կատարվի 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը<sup>3</sup>:

Ճակատագրի ինչպիսի հեգնանք, Խորհրդային Հայաստանի իշխանությունները, որոնք ընդամենը մեկ տարի առաջ բողոքում էին հուլիսի 5-ի որոշման դեմ, ստիպված էին պայքար ծավալել, որպեսզի Լեռնային Ղարաբաղին ինքնավարություն տրամադրելու մասով այն իրականացվի:

Օնդառացելով հայկական կողմին՝ ՌԿ(ք)<sup>4</sup> կենտկոմի անդրերկրկոմի նախագահությունը 1922 թ. հոկտեմբերի 27-ին

«Խորհրդային կենտկոմերի իրանախորհրդանք է «պայքար կրելու այն որոշումը»<sup>4</sup>:

«Լեռնային Ղարաբաղի ինքնավարության անցկացման» հարցը քննարկվում է 1922 թ. դեկտեմբերի 14-ին Բաքվում հրավիրված Անդրերկրկոմի պլենումի նիստում, որը նախագահում էր Անդրերկրկոմի քարտուղար Ա. Մյասնիկյանը: Նիստում ընդունվում են համապատասխան որոշումներ, տրվում դրանցից բխող կարգադրություններ: Որոշվում է ԱդրՍԽՀ ժողկոմխորհին կից կազմավորել Լեռնային Ղարաբաղի գործերով հատուկ կոմիտե<sup>5</sup>: Հաջորդ հսկ օրը՝ դեկտեմբերի 15-ին, Բաքվում հրավիրված ԱդրԿ(ք)<sup>4</sup> կենտկոմի քյուրոյի նախագահության նիստում Անդրերկրկոմի պլենումի որոշումներն ընդունվում են ի կատարում. հաստատվում են Լեռնային Ղարաբաղի գործերով կենտրոնական հանձնաժողովի (Կիրով, Միրզաբեկյան, Կարակոզով) և յոթ հոգանոց կոմիտեի կազմերը: Վերջինիս հանձնարարվում է կարգավորել բոլոր հողային վեճերը Շուշի, Ջաբրայիլի և Ջևախջիի գավառների շրջանում<sup>6</sup>: «Լեռնային Ղարաբաղի ինքնավարության անցկացման մասին» և դրանից բխող վերը նշված որոշումները հաստատվում են Անդրդաշնության Միությանական խորհրդի նախագահության 1922 թ. դեկտեմբերի 22-ի նիստում<sup>4</sup>:

Այսպիսով, հայկական կողմի համառ ջանքերի շնորհիվ Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավարություն առանձնացնելու 1921 թ. հուլիսի 5-ի որոշումը կարծես մոտ էր կյանքի կոչվելուն:

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 127.

<sup>2</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 662.

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 663:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 664:

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 96–97.

<sup>2</sup> Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 660.

Բազմում, սակայն, այլ գերազանցում էր սրբապատիվը, արհեստագործական կողմը շարունակում էր հարցի կարգավորումը ձգձգելու և վիճեցնելու հետևողական փորձերը: Ուստի՝ Անդրերկրկումին այլ ելք չէր մնում, քան 1923 թ. հունիսի 27-ին հերթական անգամ անդրադառնալ հիմնախնդրին և Ադրբեջանի կոմկուսի կենտկոմին հանձնարարել այլևս չձգձգել և մեկամսյա ժամկետում Լեռնային Ղարաբաղն առանձնացնել իբրև ինքնավար մարզ: Ընդամենը մի քանի օր անց՝ հուլիսի 1-ին, ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի նախագահությունը ստիպված է լինում Ադրբեջանի Կենտգործկոմին (ԿԿԿ) առաջարկել հոչակել Լեռնային Ղարաբաղի ինքնավարությունը և ստեղծել «Ղարաբաղի ինքնավար մարզ»՝ Խանքենի (հետագայում վերանվանվել է Ստեփանակերտ) կենտրոնով: Հոչակագրում հանձնարարվում է նշել, որ ինքնավարության «սահմանները և այլնը կորոշվեն հատուկ հանձնաժողովի կողմից»: Վերջինս որոշելու էր. «1) Ինքնավար Ղարաբաղի սահմանները, 2) Քրդստանի տեղադրությունը, 3) Դաշտային Ղարաբաղի վարչական փոփոխությունները»:

Վերջապես, 1923 թ. հուլիսի 4-ին Ադրբեջանի կենտգործկոմի նախագահությունն ընդունում է համապատասխան որոշում, որի արդյունքում էլ հուլիսի 7-ին լույս է տեսնում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզ» (ԼՂԻՄ, ռուսերեն՝ «Автономная область Нагорного Карабаха» (АОНК)<sup>2</sup>) կազմավորելու մասին Կենտգործկոմի դեկրետը: «Մարզի կանոնադրությունը մշակելու, Ղարաբաղի ինքնավար մարզին վարչական միավորները փաս-

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 149-150.

<sup>2</sup> 1936 թ. ընդունված ԽՍՀՄ նոր Մահմանադրությամբ մարզը «АОНК»-ից վերանվանվեց «НКАО»-ի՝ «Нагорно-Карабахская автономная область».

տացր ուսմանը, նաև ինքնավար մարզի սահմանները որոշելու համար ստեղծվելու էր խառը հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի, Քրդստանի և ԱդրՍԽԿ կենտրոնական իշխանության ներկայացուցիչներից»: Հանձնաժողովին հանձնարարվում է աշխատանքներն ավարտել մինչև 1923 թ. օգոստոսի 15-ը<sup>1</sup>:

Այսպիսով, Ղարաբաղի հայության, Խորհրդային Հայաստանի և Անդրդաշնության ղեկավարության, մասնավորապես՝ Ալեքսանդր Մյասնիկյանի հաստատակամ և հետևողական ջանքերի շնորհիվ Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ստիպված էին երկու տարվա համառ դիմադրությունից հետո նահանջել և Լեռնային Ղարաբաղին տրամադրել ինքնավարություն: Դրա շնորհիվ էր նաև, որ Խորհրդային տարիներին Ղարաբաղի հայությանը հաջողվեց դիմակայել Ադրբեջանի սադրանքներին և ազգային խտրականության քաղաքականությանը, Արցախը չհայաթափվեց:

Ադրբեջանական կողմը, սակայն, Ղարաբաղի հարցում նոր ծուղակ էր նախապատրաստել՝ խախտելով ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի հուլիսի 5-ի որոշումը, որով ինքնավարություն պետք է տրամադրվեր ամբողջ Լեռնային Ղարաբաղին. 1923 թ. հուլիսի 7-ի դեկրետով ինքնավարություն էր կազմավորվելու միայն «Լեռնային Ղարաբաղի հայկական մասում»: Ավելին, նույն օրը՝ հուլիսի 7-ին, հրավիրված «Ինքնավար Ղարաբաղի և Քրդստանի սահմանները որոշող հանձնաժողովի» նիստում որոշվում է «Լեռնային Ղարաբաղի առանձնացույցից (որպես ինքնավար մարզ – *հեղ.*) մնացած Ղարաբաղի դաշ-

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 151-153.

տայրն աստորից աստիճան սակրային վարչությունն և յրան գինե-  
րոնով»։ Հանձնաժողովը որոշում է նաև «Կազմավորել ինքնա-  
վար Քրդստան, որի կենտրոններն ու սահմանները որոշել ինք-  
նավար Լեռնային Ղարաբաղի սահմանների հաստատումից հե-  
տո»<sup>1</sup>։

1923 թ. հուլիսի 16-ին Ադր<sup>4</sup>(ք)<sup>4</sup> կենտրոնի նախագահությա-  
ն ընդունած որոշման մեջ նշվում է. «ա) Այն ազատ հողատա-  
րածքները, որոնք մնացել են Սկրելևկայի հասարակության ու-  
սական անայացած գյուղերից, մտցնել ինքնավար Ղարաբաղի  
սահմանների մեջ, բ) Շուշի քաղաքը մտցնել Լեռնային Ղարա-  
բաղի ինքնավար մարզի կազմի մեջ, գ) Ղարաբաղի դաշտային  
մասից կազմել երկու գավառ, դ) Քրդերով զբաղեցրած տարածք-  
ներում ստեղծել «Քրդական գավառ», ե) Հանձնարարել ժողկոմ-  
խորհին խորհրդային կարգով որոշել այդ գավառների ճշգրիտ  
սահմանները և վարչական կենտրոնները»<sup>2</sup>։ Որոշումը հաստատ-  
վում է Ադրբեջանի ԿԳԿ-ի նախագահության 1923 թ. հուլիսի 21-ի  
նիստում<sup>3</sup>։

Ջարգացնելով ընդունված որոշումները՝ Ադր<sup>4</sup>(ք)<sup>4</sup> կենտրո-  
նի նախագահությունը 1923 թ. հուլիսի 30-ին որոշում է. «ա) Քրդստանի,  
Ջաբրայիլի և Աղդամի գավառների սահմանները հաստատել ըստ ներկայացված քարտեզի, բ) Քրդստանի գավա-  
ռի գավառային կենտրոն համարել Փիրիջանը, գ) Ջաբրայիլի գա-  
վառի գավառային կենտրոնը՝ Կարյազինից տեղափոխել Ջաբ-  
րայիլ, դ) Աղդամ գավառի կենտրոն համարել Աղդամ քաղաքը,  
ե) Ադրբեջանի Կենտգործկոմին և ժողկոմխորհին՝ անմիջապես

կանքի կոչել Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի առանձ-  
նացման և նոր գավառների վարչական վերաբաժանման հետ  
կապված բոլոր խնդիրները»<sup>4</sup>։

Այսպիսով, տեղի տալով և առանձնացնելով «Լեռնային Ղա-  
րաբաղի հայկական մասը»՝ որպես ինքնավար մարզ, Ադրբեջա-  
նը տե՛նդագին կրճատում էր դեռևս թղթի վրա գոյություն ունե-  
ցող ԼՂԻՄ-ի տարածքներն ու սահմանները, դրանք այնպես  
«ճշգրտում», որպեսզի մարզը լինի առավել փոքր սահմաններով  
և անջատվի Խորհրդային Հայաստանից։

Ադրբեջանի ԿԳԿ-ի 1923 թ. օգոստոսի 6-ի հրամանագրով  
Ղարաբաղի այն հատվածները, որոնք Ադրբեջանի ղեկավարու-  
թյան նենգամիտ քաղաքականության արդյունքում չէին  
ընդգրկվելու ԼՂԻՄ-ի կազմում, ներառվեցին արհեստականորեն  
ստեղծված Աղդամի, Ջաբրայիլի և Քրդստանի գավառների կազ-  
մում, որոշվեցին նրանց տարածքն ու վարչական սահմանները։  
Ըստ այդմ՝ նոր վարչամիավորները այնուք է ունենային հետևյալ  
կառուցվածքը.

1. **Աղդամի գավառ**՝ Աղդամ կենտրոնով (ներառելու էր նախ-  
կին Շուշիի և Ջաանշիրի գավառների հարթավայրային մասերը)։

ա) տարածքային ընդգրկումը՝ Բոքսունյու գյուղից բեկված  
գծով Թարթառ (Тертер) քաղաքով մինչև Ղարա-Ղոյունյու,  
ապա՝ Նամերլի և Նափրավենդ (իմա՝ Փափրավենդ) գյուղերը,  
Չոլլուդաղը (Чоллах, 2972), Աղդամի բլրաշարը, Ղզըլ-Ղայայի  
կողքով՝ Ուջթափալար, որտեղից արևելք՝ մինչև այն վայրը, որը  
գտնվում էր Աղդամի, Ջաբրայիլի և Ղարաբաղի գավառների

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 153-154։

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 154-155։

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 157։

<sup>4</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербай-  
джанской ССР, с. 159-160.

ռատասա պատռա, ստտավորապես 5 վերստ Կուրոպատկրու գյուղից դեպի հյուսիս-արևելք, այստեղից՝ արևելք, մինչև Սալյանի գավառի սահմաններում գտնվող Փեյղամբար գերեզմանոցը:

2. **Ջաբրայիլի գավառ**<sup>1</sup> Ջաբրայիլ կենտրոնով (ներառելու էր նախկին Կարյագինոյի գավառի հարթավայրային հատվածը):

ա) տարածքային ընդգրկումը՝ Սալյանի գավառի սահմաններում գտնվող Փեյղամբար գերեզմանոցից դեպի արևմուտք մինչև այն վայրը, որը գտնվում էր Աղդամի, Ջաբրայիլի և Ղարաբաղի գավառների հատման կետում՝ Կուրոպատկինո գյուղից մոտավորապես 5 վերստ հեռավորության վրա: Այստեղից՝ Ղարաբաղի կողմից, բեկված գծով Վեյսալու ձմեռոցով [(зимовник, հետագայում՝ Ներքին Վեյսալու (թրք.՝ Aşağı Väysali)], Նոր Նիկոլանկա, Դիվանալուլար գյուղ, Ավշարի, Դուղուկչի (Քյուրաթաղ), Կարյագինո (հետագայում՝ Ֆիզուլի), Իշըխլու, Քոչ-Ահմեդլի, Սուլեյմանլու, Ղըշլաղ, Էֆենդիլար, Ջաբրայիլ, Աղջաքենդ (Аджи-кенд, իմա՝ Խանձաձոր), Թեթլար գյուղերով, Աղ-Բուլար աղբյուրով մինչև Թարքայան-Յալի սար և Բաղիր-Բեգլու գյուղ, այնուհետև՝ Հազարի (Азера) գետակի՝ հունով ներքև մինչև Էֆենդիլար գյուղը, այստեղից՝ հարավ-արևմուտք՝ մինչև Աղավուրտ (իմա՝ Եղվարդ) գյուղը, որտեղից՝ հին վարչական սահմանով մինչև Նյուվադի (Аювадинский) գյուղը:

3. **Քրդսրանի գավառ**<sup>2</sup> Փիրիջան (իմա՝ Փիրջահան) կենտրոնով (ներառելու էր նախկին Ջևանշիրի արևմտյան՝ Թարթար գետի վերին ավազանում ընկած հատվածները, ինչպես նաև ՀԱԽՀ-ից կտրված Ջանգեզուրի գավառի արևելյան՝ Լեռնային

<sup>1</sup> Սահմանն այդ հատվածում անցնելու էր նախ՝ Փոքր Հազարի գետակով (թրք.՝ Kicik Hakara, հայոցի է. նաև Չինգյանակալ անվամբ), նոր հետո՝ բուն Հազարիով:

Ղարաբաղըն հարող ռատվաստերը, ուր 1930 թ. կազմավորվեցին Քյալբաջարի (Քարվաճար), Լաչինի (Բերձոր) և մասամբ Ղուրաթլուի (Որոտան) գավառները:

ա) տարածքային ընդգրկումը՝ Մոավի լեռների (Myrov-dag) գագաթներով Ղարաբաղի կողմից թեկված գծով հետևյալ կետերով՝ Էղերյուրտ կամ Աղըրյուրտ (Эгерюрт) լեռ, Ալաղայա լեռ, այնուհետև՝ Լխագորսկ, Ջամինկյում լեռնագագաթով մինչև Բաղըր-Բեգլու գյուղ: Այստեղից Ջաբրայիլի գավառի կողմից Հազարի գետով ներքև մինչև Էֆենդիլար գյուղ, որտեղից հարավ-արևմուտք՝ մինչև Աղավուրտ գյուղ, ապա՝ ՀԱԽՀ կողմից Խնձորեսկ (Индирак<sup>1</sup>) գյուղի միջով մինչև Ղըլըթողազար (сигнал Александр Дали-Дар<sup>2</sup>), որտեղից լեռնաշղթայով՝ մինչև Դավա-Գյոզի (Ուղտիակունք) լեռ, այնուհետև՝ վարչական հին սահմանով մինչև սկզբնական կետ<sup>3</sup>:

Նշված փաստաթղթում աչքի է զարնում հետևյալ հանգամանքը. եթե նորակազմ ԼՂԽՄ-ի արևելյան, հարավային և արևմտյան սահմաններն արձանագրված են ըստ կողմնորոշիչ որոշակի կետերի, ապա հյուսիսային սահմանագիծն ուղղակի բացակայում է: Բանն այն է, որ նախկին ցարական վարչական բաժանումով Լեռնային Ղարաբաղի հյուսիսային բաղկացուցիչ հատվածը կազմող պատմական Գյուլիստանի մեկիջության զգալի մասը, որը գրավում էր Կուրի Բարակջուր (թրք.՝ İncä-çay)

<sup>1</sup> Ռուսալեզու փաստաթղթում նշվում է, բնակավայրի թյուրքական արտաստանության (Xanzirak) աղավաղված տարբերակը՝ վերցված ռուսական 5-վերատանոց քարտեզի համապատասխան պլանշետից:

<sup>2</sup> Սահմանագծի ուղղության քննությանը թույլ է տալիս փերոհիշյալ աղավաղված տեղանունը սրբագրել նշված ձևով (նշում մե ըստ 5-վերատանոց քարտեզի՝ Кызыл-Богасдары):

<sup>3</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 173-175.

վտակի միջին ավազանը, ինչպես նաև նույն գետի մեկ այլ վտակի՝ Կուրակի (թրք.՝ Küräk-çay) վերին հոսանքի շրջանում գտնվող Գետաշեն ավանն իր հարակից մի քանի բնակավայրերով, կցված էին ելիզավետպոլի գավառին: Այս՝ ավելի քան 1000 քառ. կմ ընդհանուր տարածք զբաղեցնող զուտ հայաբնակ շրջանների ներառումը ԼՂԽՄ-ի կազմում Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության տեսանկյունից կարող էր «վտանգավոր» նախադեպ ստեղծել Հյուսիսային Արցախի մյուս շրջանների (Ուկանապատ, Քարհատ, Բանանց և այլն) ու հարևան Գարդմանի տարածաշրջանի՝ գրեթե մինչև ՀՍԽՍՀ-ի հյուսիս-արևելյան սահմանագլուխը հոծ անընդմեջ շերտով բնակվող հայության համար, որն անպայման կփորձեր ժամանակի ընթացքում միավորվել այս նորաստեղծ հայկական պետական կազմավորման հետ: Անհրաժեշտ էր ամեն գնով բացառել որևէ հնարավորություն՝ Խորհրդային Հայաստանի անմիջական սահմանակցությամբ, միասնական հայկական ինքնավարության ձևավորման համար: Սրանով, կարծում ենք, կառելի է բացատրել այն փաստը, որ 1923-1924 թթ. Լեռնային Ղարաբաղի վերոհիշյալ մասերը մտցվեցին նորաստեղծ Գյանջայի (Գանձակ) գավառի մեջ՝ դրանով՝ իսկ ԼՂԽՄ-ի հյուսիսային սահմանները «հանընկեցներով» երբեմնի ցարական վարչամիավորի հարավային սահմանագծին, որն անցնում էր Մոավի լեռների արևելյան ջրբաժանով և Բարակչոի հունով: Բացի այդ՝ հայկական մարզից դուրս էր թողնվել Լեռնային Ղարաբաղի հյուսիս-արևմտյան հատվածը կազմող Վերին Խաչենը՝ Թարթառ գետի վերին ավազանում, որը զբաղեցնում էր շուրջ 2.000 քառ. կմ: Վերջինս դեռ 1922 թ.

<sup>1</sup> Հաշվարկները՝ Գ. Բաղդասի:

ուսաչքով էր «Խորհրդային» (Խորհրդային) գետը հանդիսանում: Կազմավորվելով որպես առանձին գավառամաս Ջևանշիրի գավառի կազմում՝ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարության 1923 թ. նոր որոշումով այս տարածքին կցվեց նաև Հազարու գետակի ողջ վերին ավազանը զբաղեցնող նախկին Ջանգեզուրի գավառի արևելքը, որը մինչ այդ, բուսակցվելով ՀՍԽՍՀ-ից, մտնում էր, այսպես կոչված, Ղուրաթլուի գավառի մեջ: Ինչպես հայտնի է, նորակազմ վարչամիավորը վերանվանվեց «Քրդստանի գավառ» (ոչ պաշտոնական անվանումը՝ «Կարսի Քրդստան»):

Այսպիսով, ադրբեջանական ղեկավարության նպատակաուղղված քաղաքականության հետևանքով Լեռնային Ղարաբաղի երկրամասի ընդհանուր տարածքից, որը կազմում էր շուրջ 8.000 քառ. կմ, 1923-1924 թթ. անջատվեց մոտ 3000 քառ. կմ-ը: Նորաստեղծ ԼՂԽՄ-ը, որի ամբողջական սահմանները դեռ որոշված չէին, այսուհետև կարող էր հավանել ընդամենը 5.000 քառ. կմ տարածքի:

Խորհրդային Ադրբեջանի նրկաստեղծ Աղղամի, Ջարրայիի և Քրդստանի գավառների տարածքները որոշելուց հետո անգամ ԼՂԽՄ-ի սահմանային խնդիրների վերջնական կարգավորման գործընթացը դժվարությամբ էր ընթանում: Ուստի ԱդրԿ(բ)Կ կենտկոմի նախագահությունը 1924 թ. ապրիլի 17-ին «ոչ հաջողված» է համարում այդ խնդիրները կարգավորող հատուկ հանձնաժողովի աշխատանքները և կազմում նոր հանձնաժողով՝ ԱդրՍԽՍՀ ժողկոմխորհի նախագահ Գ. Մուսաբեկովի նախագահությամբ: Վերջինիս պատասխանատվությամբ հանձնա-

<sup>1</sup> Азербайджанская сельско-хозяйственная перепись 1921 года. Таблицы: Деванширский уезд, Баку, 1922, с. 82.

տրոպիկական սաստարարություն և սրսջա 1924 թ. ապրիլի 1-ը ավարտել է ԼՂԻՄ-ի վարչական սահմանների վերջնական հաստատման և հողային հարցերի կարգավորման (ինչպես ԼՂԻՄ-ում, այնպես էլ ԼՂԻՄ-ի և հարևան գավառների միջև) աշխատանքները<sup>1</sup>:

Լեռնային Ղարաբաղը որպես ինքնավար մարզ առանձնացնելու և նրա տարածքն ու վարչական սահմանները որոշելու աշխատանքներին զուգահեռ ընթանում էին նաև ԼՂԻՄ-ի Սահմանադրության (Կանոնադրության) ստեղծման աշխատանքները: Հատուկ հանձնաժողովի կողմից պատրաստված Սահմանադրության նախագիծը հաստատվեց ԱդրԿ(Ք)Կ կենտկոմի նախագահության 1924 թ. հուլիսի 3-ի նիստում, Ադրբեջանի ԿԳԿ-ի նախագահությանն առաջարկվեց «Սահմանադրությունը հրապարակել թյուրքերեն, հայերեն և ռուսերեն»<sup>2</sup>: Այն հայերեն և թյուրքերեն տպագրվում է Բաքվի «Կոմունիստ» օրաթերթի 1924 թ. հուլիսի 6-ի թիվ 145 (924)-ում, իսկ ռուսերեն՝ ռուսալեզու «Բալկանսկի ռաբոչի» թերթի 1924 թ. նոյեմբերի 26-ի թիվ 269-ում:

«Ինքնավար Լեռնային Ղարաբաղի Շրջանի Սահմանադրությունը» հանդիսացավ առաջին պաշտոնական փաստաթուղթը, որում «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի տարածությունը (տերիտորիան)» վերնագրով առանձին բաժնում նշված են մարզի տարածքը և բնակավայրերը: Ըստ այդմ՝ «Ինքնավար Լեռնային Ղարաբաղի մեջ մտնում է այն տարածությունը, որը բռնված է հետևյալ գավառների քաղաքներով և գյուղերով:

**Շուշրի գավառից** Շուշի քաղաքը և Ստեփանակերտը, գյուղերը. Կարաբետուկ (Հիլիս<sup>1</sup>), Ուլուբաք, Կայաբաշի (Դահրավ), Սարի-Քեշիշ (Խանձը), Կիշլաղ-Քենդ (Ղշլաղ), Շալվա (Ռև), Սեյիտ-Քեզլի (Սեյդիշեն), Դաշբուլաղ, Մեհտիքենդ (Մեհդիշեն), Բադարա (Պտրեցիք), Սունժինսկոյի, Խնձորիստան, Իսմայիլ-Քեզլի, Մալի-Քեզլի, Խալիփալի, Խոջալի, Ղուշիլլար, Քերոփա-Աֆաթլի, Ջարուայի (Ջառիստ), Նախիջևանիկ, Փիրջամալ, Դահրազ, Քեաթուկ-Աղդարա, Աղբուլաղ (Միրիշկյալլու), Վարազաբուն, Լիսագորսկ, Կերկիժան (իմա՝ Կրկիժան), Ջամիլլի, Բալուջա, Ղայթալիքենդ, Փախլիզ (իմա՝ Փահլույ), Խնածախ, Սեհտի-Քենդ (իմա՝ Մադաթենդ, Ալամանց գոմեր), Վերին-Սզնիք, Դամուրջիլար (Ջադաջենդ), Ներքին Սզնիք, Սղնախ, Չանախչի (Ավետարանոց), Ղարաբուլաղ, Ղուշի-Բաբա (Մոշ-Խմիստ), Սարուշեն, Խաչմաչ, Տուքնակալ, Հարալի (Ղարալի), Պիրում-Քենդ (իմա՝ Փիրումաշեն), Մխիթարա-Քենդ (Արկաթալու), Դաղդաղան (Քուսանի), Հարուլ (Հարավ), Դաշուշենդ (Դաշուշեն), Շուշի-Քենդ (Շոշ), Դաշալթի-Հյունուտ (իմա՝ Հոնուտ), Քեշիշ-Քենդ (Դոնավարդ), Դաշալթի-Խոզաքիր (Քարինտակ), Քենդխուրդ (Հաղորտի), Քարահունջ, Մուշկապատ, Ղավախան, Մաշադի-Քենդ (իմա՝ Մաշադիշեն), Կուզում-Քենդ (Քերթ), Աղ-Քենդ (Սալիտակշեն), Աշան, Հացի, Ենգի-Քենդ (Նորշեն), Կաթա-Քենդ (Ղըզղալա), Էմիշճա, Ջամեաթ (Նեգի, Նինգի), Կղարծի, Միրի-Քենդ

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 236-237.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 248-249:

<sup>1</sup> Հարկ է նկատի ունենալ, որ ԼՂԻՄ-ի Սահմանադրությունում նշված տեղանունները վերցված են նախկին ցարական տեղեկագրերից, ուր նախապատվությունը տրված էր գրեթե առանց բացառության XVIII դ. երկրորդ կեսից շրջանառության մեջ մտած օստրաիտուկ թյուրքական տարբերակներին (տե՛ս մատակցարագին «Кавказский календарь на 1917 год». «Отдел статистический», с. 47-50, 59-61, 63-65): Ուստի նպատակահարմար ենց համարել վերոբերյալ բնակավայրերին կից նշել բուն հայկական կամ այն անվանումները, որոնց տարածված էին հայերի միջավայրում: Ճշտված են նաև բացահայտ աղավաղված տեղանունները:

(Սյուրիշա, Սիլիշա), Դարախալը, Իտեաշա, Բաբրանյի, Սոջայու (խոջավանդ), Մուզան (Մուղանյու), Արդուլար (իմա՝ Ամիրանյար, Ամիրալյար), Կուղեարովկա, Կուրոպատկինո, Նիկոլանկա, Սկորյևկա, Սոս, Սխտորաշեն, Խերխան, Շովանոն, Հերիեր, Մավաս, Ամարաս, Բիլբիլակ, Սղբուզալ (Մըսմնա), Ուզում-Քենո, Դրախտիկ, Թաղյար (Մեծ Թաղ), Ազոխ, Զարդանաշեն (Վերին Թաղավարդ), Շեխեր, Զաղաղուզ (Սարգսաշեն), Թաղավարդ, Ղուզե-Ճարտար, Գիշի, Գյունե-Ճարտար, Իսպահանջուղ (խնուշինակ), Յենգիջա (Սարդարաշեն), Դաշբաշի (Քարագլուխ), Խանաբաղ Նոր, Խանաբաղ Հին, Քեշիշքենդ (Սորագյուղ), Խրամորթ, Վերին-Յեյիբաղ (իմա՝ Ղիճբաղ), Ներքին-Յեյիբաղ (իմա՝ Ղիճբաղ), Տող, Մամեղաձոր, Սուլավարդին (իմա՝ Սալացյաթին), Շեխեր, Հակակու, Թաղուտ, Սոսալլիս (Մոխրենիս, Մոխրենեց), Կովչատլի, Տոմի, Հողեր, Ծակուտի, Զրակու:

**Ջիվանշիրի գավառից՝** գյուղեր. Հասանրիզ (Հաթերց), Ունուղլի (Ականա), Կիրանյու (իմա՝ Քյաղամյու), Իմարար-Կարավենդ (Գյարավանդ), Չախալ, Ղուզյու (Քաղղուս (աղավաղված Վաղուհասից)), Կրգլի-Կայա (Հարությունաձորեր), Յայջա (Տիգատ (աղավաղված Կճողուտից)), Զարդախաչ, Զարեքուար, Բաղլու-Կայա, Բալլու-Կայա, Աիմախի (Հայաթ), Բազարքենդ (Ծմակահող), Քոլատակ, Դաղմանյու (Թըլղու), Դովչանյու (Առաջաձոր), Չորմանյու (Գսոնաքար), Վանք, Տրոմբոն (իմա՝ Դրմբոն), Հոռաթաղ, Շահմասուր, Ներիշտար, Քիչիկ-Կարաբեզ (Մոխրաթաղ), Ուլու-Կարաբեզ (Մեծշեն), Կոսապատ, Աղարա-Մարդակերտ (իմա՝ Մարտակերտ), Դամիրլու, Հոռաթաղ, Բուրուց, Յարրմջա, Մարաղա, Մարգուշևան, Բրուց, Անոն-Արխ,

Անոն-Արխ (Սարոյ), Մենգրեյակ, Զարդախյու (Մաղավուզ), Լյուլասազ (Վարենկաթաղ), Օրլովո-Դենիսովկա, Ղազանչի, Զանյաթաղ (Ճանկաթաղ), Գյուլյաթաղ, Արխավանդ, Դամիրի, Թալիշ, Տուրուս (Թոռուտ, Եղակեր), Դաստագիր, Տոնաշեն, Մաղաղիս, Դամիրլար (Ղահրիլար), Վերին-Չայլու, Ներքին-Չայլու:

**Կարյագինի գավառից՝** գյուղեր. Հաջիքենդ (իմա՝ Աղջաքենդ, Խանձաձոր), Առաքե, Բանագուր, Բինյաթի, Դուանյար, Խժալան (աղավաղված Զիլանից), Դաշբաշի (Քարագլուխ), Ծամձոր, Կեյնա-աղ (աղավաղված Հին Թաղերից), Մյուքիդարա (Յրտախաս), Խձաբերդ, Վանք, Հաղուրթ, Կամրակյուն, Կոչքեկ, Ղուշիլար, Մեյիքջանյու, Սորաշեն, Տայք, Թաղասեր, Տոր, Շաղախ (Սարին շեն), Վորդնաշատ, Աղբուլաղ, Ախուլյու, Քյուքուշյու (աղավաղված Հախուլյու-Քյուիուլյուից, Ըխեցից), Թուլատան (աղավաղված Բուլութան-Բլեթանցից), Դուղուզի (Քյուլաթաղ), Կոզուլլու (աղավաղված Քյուիուլյուից, Կիզեցից), Խարմանջուղ, Խղիլեցիք (Խտեցիք, Էղիլյու):

**Ղուրաթի գավառից՝** Ղարաղշլաղն (իմա՝ Ղալադարասի-Բերդաձորը) իր գաղութներով՝:

Այսպիսով, ԼՂԻՄ-ը պարփակվելու էր նախկին Ռուսաստանյան կայսրության Ելիզավետպոլի (Գանձակ) նահանգի Զևանշիրի, Շուշիի և Կարյագրնոյի գավառների միայն նոնային հասվածներում: Դրանց էր միացվել նաև 1923 թ. լուծարված Ղուսաթուրի գավառի (ձևավորվել էր 1921 թ.) հյուսիս-արևելքն ընդգրկող Բերդաձորի գյուղախումբը՝ հարակից տարածքներով:

<sup>1</sup> «Ամուսխաս», Բաքու, 6 հուլիսի 1924, N 145 (924): Տե՛ս նաև՝ Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (խառնաթյուրի և կուլտերի ժողովածու), կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Արթուրյան, առաջարկող՝ Ն. Խաչատրյանի, Երևան, 2011, էջ 29-36:

Նորաստեղծ ԼՂԻՄ-ը՝ Աղզամի, Ջաբրայիլի և Քրդստանի գավառների հետ միասին, Ադրբեջանի իշխանությունները դիտում էին որպես ԱդրՄԻՀ միասնական տնտեսական «Ղարաբաղյան գոտի» և հողակարգման մեկ միավոր: Խորհուրդների համաադրբեջանական 4-րդ համագումարին Ադրբեջանի կառավարության 1924 թ. գործունեության հաշվետվության մեջ նշվում է, որ այդ շրջանի ընդհանուր տարածքը կարող է կազմել մինչև մեկ միլիոն դեյաատին<sup>1</sup> (կամ 14567.2 քառ. կմ, 1 դեյաատինը հավասար է 0.0145672 քառ. կմ-ի): Ինչպես նշել ենք, այդ տարածքից շուրջ 8.000 քառ. կմ-ը բաժին էր հասնում Լեռնային Ղարաբաղին (ԼՂԻՄ-ը, Գյուլիստան-Գետաշենի ենթաշրջանը և Քրդստանի գավառի հյուսիսային հատվածը), իսկ շուրջ 6700 քառ. կմ-ը՝ Դաշտային Ղարաբաղին (Աղզամի և Ջաբրայիլի գավառներ):

Նշված ժամանակահատվածում հրատարակված պաշտոնական (ադրբեջանական) որոշ տեղեկագրերում Նորաստեղծ ԼՂԻՄ-ի տարածքը ցույց է տրված ընդամենը 4160,5 քառ. կմ (3.656 քառ. վերստ)<sup>2</sup>: Սա պարզապես ոչ ճիշտ հաշվարկի արդյունք է և չի համապատասխանում իրականությանը: Ինչպես Ադրբեջանի կենտրոնական վերը նշված հրամանագրում հանդիպող, այնպես էլ ԼՂԻՄ-ի «Սահմանադրության» տարածքային սվայանների համադրումը, մեզ հասու այլ փաստաթղթերի տեղեկությունների համադրմամբ ցույց է տալիս, որ գոյության արա-

ջին տարիներին ԼՂԻՄ-ն ընդգրկել է շուրջ 5.000 քառ. կմ տարածք: Մեր այս պնդումը հաստատելու համար մի քանի փաստարկ ներկայացնենք.

ա) Նախապես ԼՂԻՄ-ի մեջ էր ներառված Մարտակերտի (այն ժամանակ՝ Ջրաբերդի) շրջանի հարավային մասով հոսող Կավրտու գետակի (թրք.՝ Gavirtu-çay կամ Gabartu-çay) հովիտը՝ թաթարաբնակ մեկ տասնյակից ավելի գյուղերով, որոնք միավորված էին Ղաբարթա Բոյ-Անմեդլիի (Կավարտ) գյուղական հասարակության մեջ<sup>3</sup>: Բացառությամբ Սրխավենդ և Մանիք-Սրխավենդ (Մանիքլու) գյուղերի՝ մնացած բնակավայրերը հետագայում դուրս բերվեցին մարզի կազմից:

բ) Հարավ-արևելքում մարզի մեջ էին մտնում Իշխանագետի մրջին հովտի հայաբնակ Ռդեր (Հողեր), ինչպես նաև թաթարաբնակ Ղզըրլըյաղ և Ղովշաթլու գյուղերը, որոնք ԼՂԻՄ-ից դուրս բերվեցին 1930-ական թթ. վերջերին:

գ) Որոշակիորեն ԼՂԻՄ-ի տարածքում են եղել Բերդաձորի (Ղարաղլար) ենթաշրջանին հարավ-արևելքից սահմանակից «Մուսուլմանլարի» (թարբառային՝ «Աջամնլար») գյուղախմբի բնակավայրերը<sup>4</sup>, որոնք հետագայում նույնպես դուրս են բերվել մարզի տարածքից:

դ) Չենք կարող չնշել մի կարևոր փաստ ևս. մինչև 1920-ականների կեսերը ԼՂԻՄ-ի սահմանները հարավ-արևմտյան հատվածում անցել են Հազարու գետով, որով մարզը փոքր՝

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 223–224.

<sup>2</sup> Ցեն, մամուլըրապիս, Азербайджанская сельскохозяйственная перепись 1921 года. Итоги по сельским обществам во вновь образованных уездах АССР, Нагорного Карабаха и по тем (основным) уездам, в которых произошли изменения границ, том III, выпуск XVII, Баку, АзЦСУ, 1924, էջ II (այսպիսեան՝ Итоги):

<sup>3</sup> Итоги, էջ 2:

<sup>4</sup> Այս գյուղախմբի հայ բնակչությունը բուն մահմեդականացվել էր XVI-ի դ. (Հովհաննիսյան Լ., Հայության անդամալիորեն կորսված բնկորներ, «Եզերք» հանդես, 2, Երևան, 2007, էջ 88):

շուրջ 6 կմ, բայց ընդհանուր սահման է ունեցել ՀՄԽՀ-ի հետ<sup>1</sup>։ Ընդ որում, այս իրողությունն արտացոլված է ժամանակի խորհրդային պաշտոնական քարտեզներում։

Թեև ԼՂԻՄ-ի «Սահմանադրությամբ» որոշվեցին մարզի տարածքները և նախանշվեցին նրա վարչական սահմանները, սակայն Ադրբեջանի իշխանությունների կողմից հետագա տարիներին պարբերաբար բարձրացված սահմանային հողատարածքային նոր խնդիրների կարգավորման քողի ներքո ԼՂԻՄ-ից ետրանոր տարածքներ էին «մկրատվելու»։ Դրանցից էր ԼՂԻՄ-ի և արհեստականորեն ստեղծված «Քրդստանի գավառի» (նաև վերջինիս ու ՀՄԽՀ-ի) միջև սահմանազատման հարցը։ Հարկ է նկատի ունենալ, որ սահմանամերձ այդ հատվածի հույ և մուսուլման բնակչության միջև պատմականորեն ձևավորվել էր փոխահարձ անվստահության մթնոլորտ, ազգային հողի վրա պարբերաբար տեղի էին ունենում ընդհարումներ։

Սահմանային վեճերը կարգավորելու միջնորդությամբ Ադրբեջանի ԿԳԿ-ն, ի վերջո, ստիպված էր դիմել Անդրկովկասի ԿԳԿ-ին՝ խնդրելով վերջինիս աջակցությունը։ Անդրկենտրոնականը 1923 թ. հոկտեմբերի 18-ին՝ Ի. Ստուրոսայի, ըսկ նոյեմբերի 12-ին՝ Ս. Թորդիայի նախագահությամբ ստեղծում է տարածքային վեճերը կարգավորելու հանձնաժողովներ<sup>2</sup>, որոնք, սակայն, խնդրի կարգավորման ուղղությամբ շոշափելի առաջընթաց չեն ապահովում։ 1924 թ. «Քրդստանի գավառի» վիճակի մասին ԱդրԿ(Բ)Կ կենտկոմին ներկայացրած համառոտ զեկուցման մեջ Ադրկենտրոնականի նախագահի տեղակալ Մ.Բ. Կասումովն այն

ռասարում է բոլոր առումներով ողբերգական և նշում, որ «բավականին տխուր է» նաև Զանգեզուրի հետ Քրդստանի սահմանների որոշման հարցը։ Սահմանային 13 գյուղերի մուսուլման գյուղացիները «Անդրկենտրոնականի վերջին հանձնաժողովի անցկացրած սահմանների հետ կապված բողոքներ ու դժգոհություններ են հայտնում»<sup>1</sup>։

ԼՂԻՄ-ի և «Քրդստանի գավառի» վարչական սահմանը հաստատելու նպատակով ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի նախագահության 1925 թ. հունիսի 24-ի որոշումով ստեղծվում է հերթական հանձնաժողովը, որի կազմում ընդգրկվում են ԼՂԻՄ-ի և «Քրդստանի գավառի» մեկական ներկայացուցիչներ։ Լսելով հանձնաժողովի զեկուցումը՝ ԱդրԿ(Բ)Կ կենտկոմի նախագահությունը 1925 թ. հուլիսի 13-ին դարձյալ որոշում է խնդրել ՌԿ(Բ)Կ անդրերկրկոմին, որպեսզի իրականացվի Անդրկենտրոնականի հողային վեճերի կարգավորման հանձնաժողովի որոշումները՝ հողակարգման աշխատանքները ԼՂԻՄ-ում և Քրդստանի գավառում արագացնելու համար։ Որոշման մեջ նշվում է նաև, որ ԱդրԽՆՀ հորժողկոմատը հողակարգման բոլոր խմբերը պետք է կենտրոնացնի «Քրդստանի գավառի» և ԼՂԻՄ-ի սահմանային գծում. հողակարգման աշխատանքները շտապ անցկացնելու և ավարտելու համար, քանի որ միայն դրանից հետո հնարավոր կլինի վերջնականապես հաստատել «Քրդստանի գավառի» և ԼՂԻՄ-ի միջև սահմանները<sup>2</sup>։ Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացված սահմանազատման արդյունքում ոչ միայն կրճատվեց ԼՂԻՄ-ի տարածքը, այլև մարզն արհեստակա-

<sup>1</sup> Итоги, т. 2 (1. <Мил. Букшан А., Азербайджанские курды: Лачин, Кельбаджар, Нахкрай. Заметки, Баку, 1932, с. 11.

<sup>2</sup> ՀԱԱ, ֆ. 112, ց. 1, գ. 95, թ. 173, 186։

<sup>1</sup> К истории образования Нагорно-Карабахской автономной области Азербайджанской ССР, с. 219–223.

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 292–294։

նորեն անջատվեց Խորհրդային Հայաստանից և, որպես «կղզյակ» (անկլավ), ամբողջությամբ հայտնվեց ԱդրՄԽՀ-ի ներքին տարածքում: Ինչ վերաբերում է «Քրդստանի գավառին», ապա վերջինս այդ կարգավիճակը պահպանեց մինչև 1929 թ. ապրիլի 8-ը, երբ լուծարվեց Խորհուրդների 6-րդ համաադրբեջանական համագումարի որոշմամբ<sup>1</sup>:

Այսպիսով, «Կարմիր Քրդստանի» «ճարտարապետների» մտահոգությունը բնավ էլ ցուրդ ժողովրդի համար «մշակութային ինքնավարություն» ապահովելը չէր, այլ ԼՂԻՄ-ից և ՀՄԽՀ-ից տարածքների պարզերաբար զավթման միջոցով վերջիններիս տարանջատումը: Այդ մասին են վկայում նաև ԽՍՀՄ-ում 1920-1940-ական թվականներին հրատարակված պաշտոնական քարտեզները: Եվ եթե 1920-ական թվականների կեսերի քարտեզներում<sup>2</sup>, ինչպես արդեն նշել ենք, ՀՄԽՀ-ն և ԼՂԻՄ-ն ունեն սահմանահատման ընդհանուր կետ Հազարու գետով (ՀՄԽՀ Գորիսի շրջանի Տեղ և Կոռնիձոր գյուղերի շրջանում), ապա արդեն 1930-1940-ական թվականների քարտեզներում<sup>3</sup> ՀՄԽՀ-ի և ԼՂԻՄ-ի սահմանները զգալի չափով փոխված են և հայկական պետական երկու կազմավորումները՝ հանրապետությունն ու ինքնավարությունը, տարանջատված են 6-8 կմ-անոց նեղ հողաշերտով՝ այսպես կոչված «Լաչինի միջանցքով»: Այս ամենը

<sup>1</sup> Քարայան Դ., նշվ. աշխ., էջ 84: 1930 թ. մայիսի 25-ին հրապարակված ԱդրՄԽՀ Կենտգործկոմի որոշումով կազմավորվեց «Քրդստանի օկրուգ», որը գոյատևեց ընդամենը երկուսուկես ամիս (տե՛ս նույն աղբյուր, էջ 85):

<sup>2</sup> «Азербайджанская ССР», Большая Советская Энциклопедия (БСЭ), Москва, 1926, т. 1, с. 640-641 (вставка), «ССР Армения», БСЭ, Москва, 1926, т. 3, с. 416-417 (вставка).

<sup>3</sup> «Административная карта Нагорно-Карабахской АО» (Главное управление Геодезии и картографии при СНК СССР, 1939-1940), «Азербайджанская ССР - политико-административная карта», БСЭ, 2-ое изд., Москва, 1949, т. 1, с. 434-435 (вставка).





«յրացրեց» ԱդրՄԽՀ-ին նախկին Չանգեզուրի գավառի արևելյան ընդարձակ հատվածի բռնակցումը, որի տարածքում՝ վարչական ձևախեղումների հետևանքով, 1929-1930 թթ. ստեղծվեցին Լաչինի, Ղուբաթլուի և Չանգեղանի շրջանները՝ ընդհանուր շուրջ 3.340 քառ. կմ տարածքով:

Ինչպես վերը նշվեց, ԼՂՄ-ի վարչական սահմաններից ապօրինաբար դուրս թողնվեցին և ԱդրՄԽՀ Գյանջայի գավառի կազմում ներառվեցին պատմական Հյուսիսային Արցախի շուրջ երկու տասնյակ հայկական գյուղեր: Վերջիններին բնակչությունն արդեն 1923 թ. աշնանից ԼՂՄ-ին միանալու համար պայքար ծավալեց: Աջակցություն չստանալով ադրբեջանական իշխանություններից՝ 1925 թ. գարնան սկզբին տեղի հայությունն իր բողոքի ձայնը ստիպված էր հասցնել միությանական բարձրագույն իշխանություններին: ԽՍՀՄ Կենտգործկոմ՝ Մ. Կալինինին, Անդրկենտգործկոմ՝ Ա. Ենուկիձեին, Ն. Նարիմանովին, Ս. Տեր-Գաբրիելյանին և Անդրկենտգործկոմի նախագահ Մ. Ցխակաչային, ուղղված դիմումում «Գյանջայի գավառի լեռնային տեղամասի 9-րդ մասի շրջխորհրդի անդամները (թվով 160)», նշում են, որ Ղարաչինար (1200 բնակիչ), Ենգիքենդ (իմա՝ Նորաշեն, 650), Խարխափույթ (540), Գյուլիստան (665), Գաղթույթ (իմա՝ Ղախդույթ, 240), Ներքին Աղջաքենդ (իմա՝ Ներքինշեն<sup>1</sup>, 1350), Վերին Աղջաքենդ (իմա՝ Վերինշեն, 1895), Բուզլուխ (540), Մանաշիդ (850), հայկական Բորխի (Բիրյուսի, Հայ Պարխ, 1533), Էրքեջ (1300) գյուղերի<sup>2</sup> հայ գյուղացիները հայտնվել էին այնպիսի ծանր վիճակում, որ անգամ ստիպված են դաշտային տարրեր

<sup>1</sup> Հետագայում բնակավայրը վերանվանվեց Շախումյան (ռուս.՝ Шаумяновск):  
<sup>2</sup> Նշված բնակավայրերը 1930-ական թվականներին մասն ԱդրՄԽՀ Շախումյանի շրջանի մեջ:

աշխատանքներ կատարել հարևան թուրքերի ուսմար: «Սեր ծանր դրության մասին հայտնելով կենտրոնական իշխանություններին,- նշվում է դիմումում,- խնդրում ենք մեր շրջանը, որը տնտեսական, աշխարհագրական և պատմական առումով հանդիսանում է Ղարաբաղի բաղկացուցիչ մասը, միացնել հնքնավար Ղարաբաղին, իսկ յայլաների և արոտավայրերի՝ խնդրոք լուծել՝ հիմնվելով խորհրդային սահմանադրության և ԽՍՀՄ բոլոր ժողովուրդների իրավահավասարության սկզբունքի վրա»<sup>1</sup>: Հայ գյուղացիների այս խնդրագիր-դիմումը փոխանցվում է ՌԿ(Բ)Կ կենտրոնի քաղբյուրո (պատճեն՝ ՌԿ(Բ)Կ Անդրերկրում): Նույնպիսի բովանդակությամբ դիմում ներկայացվել է նաև ԽՍՀՄ Կենտգործկոմ<sup>2</sup>:

Հայության կողմից բարձրացված խնդրի լուծման ընթացքի մասին 1925 թ. աշնանը հետաքրքրություն են ցուցաբերում ԽՍՀՄ Կենտգործկոմը և ԽՍՀՄ շրջանացման հանձնաժողովը: 1925 թ. հոկտեմբերի 23-ին Անդրդաշնության (պատճեն՝ ԱդրՍԽՀ) ԿԳԿ-ներին ուղղված նամակում ԽՍՀՄ Կենտգործկոմի նախագահության քարտուղարությունը, քարտուղար Ա. Ենուկիձեի հանձնարարականով, խնդրում է ուշադրություն դարձնել ԱդրՍԽՀ Գյանջայի գավառի վերոնշյալ 11 հայկական գյուղերի փազդիված անձանց կողմից ՌԿ(Բ)Կ կենտրոն ուղղված՝ գյուղերը Լեռնային Ղարաբաղին միացնելու մասին, միջնորդությանը, և «անհապաղ տեղեկացնել, թե ժամանակին ինչ է կատարվել Անդրդաշնության և ԱդրՍԽՀ ԿԳԿ-ների կողմից»<sup>3</sup>: ԽՍՀՄ շրջանացման հանձնաժողովի անդամ և պատասխանատու քարտու-

ղար Եզորովի կողմից արդեն 1925 թ. նոյեմբերի 12-ին Անդրդաշնության ԿԳԿ-ին ուղղված նամակում խնդրվում է տեղեկացնել, թե ինչ գործողություններ են ձեռնարկվել «ԱդրՍԽՀ Գյանջայի գավառի մի քանի գյուղերը ԼՂԻՄ-ին միացնելու միջնորդության հետ կապված»:

1925 թ. նոյեմբերի 23-ին ԱդրԿ(Բ)Կ կենտրոնի նախագահությունը քննարկում և մերժում է ԼՂԻՄ-ին միանալու մասին «14 գյուղերի հայության» խնդրանքը՝ հետևյալ շինծու պատճառաբանությամբ. «Շրջանի միացումը կամ առանձնացումը կհանգեցնի նման միտումների ողջ Անդրկովկասում, ինչը կարի ազգամիջյան հարաբերությունները»<sup>2</sup>:

ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները շարունակվեցին նաև 1930-ական թվականներին: Ադրբեջանական իշխանությունների կողմից պարբերաբար իրականացվող վարչատարածքային փոփոխությունների արդյունքում ԼՂԻՄ-ից յուրացված գյուղերն իրենց հողատարածքներով անջատվում և կցվում էին արևելատականորեն ստեղծված հարևան շրջաններին: Ինչպես նշել ենք, հայկական Ողեր գյուղը փոխանցվեց ԱդրՍԽՀ Կարյազինոյի (հետագայում՝ Ֆիզուլի) շրջանին, բացի այդ, Հազարու գետի ձախ ափին գտնվող Հարար հայկական գյուղը վերանվանվեց «Ջաֆաջաբար» և միացվեց Լաչինի շրջանին: Վերջինիս անցան նաև վերոնշյալ «Մուսուլմանլարի» շրջանը՝ Բյոհնաշեն, Ճամ-

<sup>1</sup> Նույն տեղում, թ. 19:

<sup>2</sup> **Исторический** II, նշվ. աշխ., էջ 140-141: Օւշագրավ է. որ ադրբեջանցի հեղինակի կողմից վկայակցված փաստաթղթում ԼՂԻՄ-ին միավորվելու ցանկություն հայտնած հայկական գյուղերի թիվը նշված է 14, մինչդեռ վերոնշյալ նախորդ վավերագրերում դրանց թիվը 11-ն է: Չենք բացառում, որ հետագա ամիսների ընթացքում 11 գյուղերի հարության պահանջին միացել է նաև հարևան Ղուշի-Արմավիր. Լարարուլաղ (հետագայում՝ Մարտունաշեն) և Գետաշեն բնակավայրերի նայությունը:

<sup>1</sup> Վ.Ա.Ա., ֆ. 607, ց. 1, գ. 46, թ. 20 և շրջ.:

<sup>2</sup> Նույն տեղում:

<sup>3</sup> Նույն տեղում, թ. 18:

բարախաչ, Իրչան, Այրապ (Ագարապ) և սր շարք այլ գյուղերով: Հայ ճարտարապետական մտքի գլուխգործոց Դաղիվանքի (խորթավանք) համալիրն իր հարակից տարածքներով անջատվեց ԼՂԻՄ-ից և տրվեց Քյարաջարի շրջանին, Մարտունու շրջանի Գյուլաբլու և Աբդալ գյուղերը միացվեցին Աղղամի շրջանին և այլն<sup>1</sup>: Պաշտոնական (ադրբեջանական) տվյալներով, արդեն 1933 թ. հունվարի 1-ի դրությամբ, ԼՂԻՄ-ի տարածքը կազմում էր 4431,7 քառ. կմ<sup>2</sup>: Փաստորեն, այն զգալի չափով փոքրացվել էր:

Այսպիսով, 1920-1930-ական թվականներին ադրբեջանական իշխանությունների կողմից Ղարաբաղում իրականացված վարչատարածքային արհեստական վերաձևման արդյունքում ԼՂԻՄ-ից դուրս թողնվեցին և հարևան շրջաններին կցվեցին ինչպես բուն Լեռնային Ղարաբաղի զգալի հատվածներ (Վերին Խաչեն-Քարվաճաղ, Գյուլիստանի հյուսիսային մասը՝ Շախումյանի շրջանը և Գետաշենի ենթաշրջանը, Դիզակի մի մասը՝ Ջաբրայիլը), այնպես էլ Հյուսիսային Արցախի և Գարդմանի հայաբնակ շրջանները<sup>2</sup>:

Ամփոփենք, ՌԿ(Բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 5-ի որոշման տրամաբանությամբ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության տարածքը պետք է կազմեր առնվազն 8.000 քառ. կմ: Սակայն, ի խախտումն այդ որոշման, ինքնավար մարզը 1923-1924 թթ. կազմավորվեց միայն Լեռնա-

յին Ղարաբաղի մի մասում՝ մոտ 5.000 քառ. կմ տարածքով: Հետագա տարիներին Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ից շարունակաբար անջատեցին շուրջ 600 քառ. կմ ևս՝ մարզին թողնելով ընդամենը 4.400 քառ. կմ տարածք: Ավելին, ինքնավար մարզը «Լաչինի միջանցքով» արհեստականորեն մեկուսացվեց Խորհրդային Հայաստանից:

<sup>1</sup> Մկրտչյան Յ.Լ., Լեռնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցշխապանության անատոմիան (1920-1988 թթ.), Ստեփանակերտ, 2003, էջ 74:

<sup>2</sup> Социалистическое строительство АССР. Статистический сборник, Баку, Аз. УНХУ, 1935, с. 9.

<sup>3</sup> Меликян А., Изв. шэһ., էջ 40, 113: Նաև՝ Нагорный Карабах в международном праве и мировой политике. Комментарии к документам, к. 2 (Ю.Г. Барсегов, отв. ред. А.О. Меликян), Москва, 2009, с. 225.

## ՎԵՐՋԱԲԱՆ

1920-1922 թվականներին Խորհրդային Հայաստանի տարածքը և քենայական Թուրքիայի, Խորհրդային Ադրբեջանի ու Խորհրդային Վրաստանի հետ նրա սահմանները ձևավորվեցին մի քանի փուլերով. 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի 3-րդ հոդվածով, 1921 թ. Մոսկվայի և Կարսի խորհրդաբարձական ոչ օրինական պայմանագրերով, Խորհրդային կենտրոնական և հանրապետության կուսակցական մարմինների առանձին որոշումներով: Արդյունքում, եթե դեկտեմբերի 2-ի համաձայնագրով ՀՍԽՀ տարածքը պետք է կազմեր ավելի քան 43.000 քառ. կմ, ապա արդեն 1921 թ. Կերջին - 1922 թ. սկզբին այն տատանվում էր 32.000-33.000 քառ. կմ-ի սահմաններում՝ կոճատվելով ավելի քան 1/4-ով:

ՀՍԽՀ տարածքի և սահմանների որոշման հարցում բոլորշնչյան Ռուսաստանը չպաշտպանեց Խորհրդային Հայաստանի և հայության շահերը: Հայկական տարածքների զգալի մասն ապօրինաբար հանձնվեցին քենայական Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին:

Խորհրդային Հայաստանին պարտադրված տարածքային կորուստները շարունակվեցին եւս Անդրդաշնության օրոք: Խորհրդային Հայաստանը տարածքային կորուստներ ունեցավ ինչպես ՀՍԽՀ-ԱՍԽՀ սահմանի հյուսիսարևելյան, արևելյան և հարավարևելյան հատվածներում, այնպես էլ, մասամբ, ՀՍԽՀ-

Խորհրդային Հայաստանի կորուստները ընդամենը 29742,59 քառ. կմ տարածության վրա:

ՌԿ(Բ)Կ կենտրոնի կովկասյան բյուրոյի պլենումի 1921 թ. հուլիսի 5-ի ոչ օրինական որոշման տրամաբանությամբ Լեռնային Ղարաբաղի ինքնավարության տարածքը պետք է կազմեր շուրջ 8.000 քառ. կմ: Սակայն, ի խախտումն այդ որոշման, ԼՂԻՄ-ը 1923-1924 թթ. կազմավորվեց միայն Լեռնային Ղարաբաղի մի մասում՝ մոտ 5.000 քառ. կմ տարածքով: Հետագա տարիներին Խորհրդային Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ից շարունակաբար անջատեցին շուրջ 600 քառ. կմ ևս՝ մարզին թողնելով ընդամենը 4.400 քառ. կմ տարածք: Ավելին, ինքնավար մարզը «Լաչինի միջանցքով» արհեստականորեն մեկուսացվեց Խորհրդային Հայաստանից:

Այսպիսով, 1920-1930-ական թվականներին կրած տարածքային-սահմանային կորուստների արդյունքում ԼՂԻՄ-ը, Խորհրդային Հայաստանը և այսօր նրա իրավահաջորդը հանդիսացող Հայաստանի Հանրապետությունը հայտնվեցին ռազմավարական տեսակետից աննպաստ պայմաններում: Եվ միայն Արցախյան ազատագրական պայքարում հայ ժողովրդի հերոսական հաղթանակների շնորհիվ է, որ ազատագրվեցին Խորհրդային տարիներին Ադրբեջանին թնակցված հայկական տարածքների զգալի մասը: Դրանք այսօր կազմում են Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետության անբաժան և սահմանադրորեն ամրագրված մասերը:

## РЕЗЮМЕ

В исследовании на основе многогранного изучения архивных документов и материалов, научно-исторической литературы представлены территориальные потери Советской Армении и НКАО. Впервые в армянской историографии системно представлена политика коммунистической партии и советских государственных органов в деле формирования границ в 1920–1930-ых годах, включая процесс насильственной аннексии исконно армянских территорий к кемалистской Турции и Советскому Азербайджану.

В результате исследования выяснилось, что по российско-армянскому Ереванскому соглашению от 2-го декабря 1920 г. Советская Россия признала за Советской Арменией территории общей площадью свыше 43.000 кв. км. Однако в дальнейшем позиция Советской России в вопросе формирования границ Советской Армении изменилась. Несмотря на некоторые дипломатические усилия властей Советской Армении добиться справедливого решения вопроса ее границ, по Московскому и Карсскому советско-турецким договорам 1921 г. большевиками были незаконно уступлены Турции армянские территории Карса и Ардагана, Сурмалинский (Сурб Мари) уезд (со священной для армян горой Арарат-Масис); под протекторат Советского Азербайджана был передан Нахичеванский уезд, а 5 июля 1921 г. большевика-

ми к Советскому Азербайджану был незаконно передан Нагорный Карабах.

В результате, в конце 1921 – начале 1922 гг. территория Советской Армении колебалась в пределах 32.000–33.000 кв. км. По сравнению с соглашением от 2-го декабря 1920 г., территориальные потери республики составили свыше 10.000–11.000 кв. км.

После образования в марте 1922 г. Закавказской Федерации в числе существующих между Советской Арменией, Советским Азербайджаном и Советской Грузией проблемных вопросов приоритетными стали территориально-приграничные вопросы. В связи с принципиальными разногласиями сторон, споры продолжились вплоть до ликвидации Закавказской Федерации в 1936 г.

Особенно трудным был процесс территориального разграничения между Советской Арменией и Советским Азербайджаном. Споры в основном были связаны с приграничными районами Шиних-Айрумского участка границы, территорий Алагеларских озерков, 21 деревень Капанского и 3 деревень Мегрийского районов Армянской ССР. Изучение архивных документов и материалов ясно свидетельствует, что вопрос оспариваемых участков был решен в ущерб интересов армянской стороны. В итоге армянская государственность оказалась в уязвимых границах, а её территория составила всего лишь 29742,59 кв. км.

До середины 1921 г. Нагорный Карабах являлся самостоятельной армянской административно-территориальной единицей, по сути – суверенным государственным образованием, и

никогда не находился в составе искусственно созданного государства «Азербайджан».

В начале июля 1921 г. по решению Кавказского бюро ЦК РКП(б) весь Нагорный Карабах в качестве автономной области был незаконно передан Советскому Азербайджану. Власти последнего, однако, не спешили с выделением Нагорного Карабаха в областную автономию. Лишь под жестким политическим давлением руководства Советской Армении и Советской Закавказской Федерации (в частности А. Мясникяна) Азербайджан в 7 июля 1923 г. наконец то декларировал об образовании Автономной области Нагорного Карабаха (АОНК), переименованной по новой Советской Конституции 1937 г. – Нагорно-Карабахская Автономная Область (НКАО). Однако, в нарушение вышеуказанного решения Кавбюро, автономная область была выделена только из части Нагорного Карабаха, на остальной же ее территории были искусственно образованы новые «азербайджанские» уезды и районы – Курдистанский, Гянджинский (арм. Гандзак), Кельбаджарский (арм. Карвачар), Джебраильский (арм. Джранк), Пачинский (арм. Бердзор) и др. Таким образом, от всей территории Нагорного Карабаха, которая составляла около 8.000 кв. км., азербайджанскими властями только в 1923–1924 гг. было отрезано около 3.000 кв. км. На этом, однако, территориальные потери не закончились. По Конституции (Положению) АОНК 1924 г., в которой были обозначены и входящие в ее территорию города и селения, общая площадь области составляла до 5.000 кв. км. Однако в последующие годы азербайджанскими властями от автономной области перисдикически были отрезаны в

пользу соседних районов еще около 600 кв. км территории с преобладающим армянским населением. В результате этого – в конце 1930-ых годов территория НКАО составила всего 4.400 кв. км. Более того – автономная область была искусственно отрезана от Советской Армении, с которой имела хоть и маленькую (ок. 6–8 км.), но общую границу.

Результатом территориальных потерь стало то, что НКАО, Советская Армения и ее правопреемница – Третья Республика Армения, оказались в стратегически неблагоприятных условиях. И только благодаря героическим победам армян в Арцахской освободительной войне стало возможным освобождение незаконно отошедших к Советскому Азербайджану некоторой части армянских территорий, которые ныне составляют неотъемлимую часть Республики Арцах (Нагорный Карабах).

## SUMMARY

In the book, on the basis of the many-sided research of archival documents and materials, scientific and historical literature are presented the territorial losses of both Soviet Armenia and NKAR. For the first time in the Armenian historiography it is system presented the policy of the Communist Party and Soviet governmental bodies in formation of the borders in 1920-1930's, including the process of forcible annexation of native Armenian lands to Turkey and Soviet Azerbaijan.

As a result of the research, it has been revealed that according to the Russian-Armenian Erevan Treaty of December 2, 1920 Soviet Russia recognized Soviet Armenia within the territory constituting more than 43.000 km<sup>2</sup>. But afterwards, the position of Soviet Russia in the question of the formation of the borders of Soviet Armenia changed. In spite of some diplomatic efforts of the authorities of Soviet Armenia to achieve a just decision relating to the question of its border, the Bolsheviks illegally (by the Moscow and Kars Soviet-Turkish treaties of 1921) ceded to Turkey Armenian territories of Kars and Ardahan, the district of Surmalu (Surb Mari) (with Holy for Armenians Mountain Ararat-Masis); the district of Nakhijevan was unlawfully put under the protectorate of Soviet Azerbaijan and on July 5, 1921 Nagorno-Karabakh was illegally annexed to the latter. As a result, at the end of 1921 - the beginning 1922 the territory of

Soviet Armenia varied in the range of 32.000-33.000 km<sup>2</sup>. Territorial losses of Soviet Armenia, compared with the agreement of December 2, 1920 constituted more than 10.000-11.000 km<sup>2</sup>.

On March 1922, after the formation of the Transcaucasian Federation among the questions between Soviet Armenia, Soviet Azerbaijan and Soviet Georgia the territorial-border issues were the most problematic. Due to the principal disagreements these disputes continued to the dissolution of the Federation in 1936.

The most difficult was the process of the territorial demarcation between Soviet Armenia and Soviet Azerbaijan. The key disputes were concerning the frontier regions the Shinigh-Ayrum section of the border, the area of Alagyoiar lakes, 21 villages of Kapan and 3 villages of Meghri. The study of the archival documents obviously show that the question of the disputed territories was decided to the detriment of the interests of the Armenian side. As a result, the Armenian statehood appeared to be limited within vulnerable borders on the territory of only 29742.59 km<sup>2</sup>.

Until the mid of 1921 Nagorno-Karabakh was an Armenian separate administrative territorial unit, in fact a sovereign state formation; it had never been a member of the newly formed artificial "Azerbaijan" state. On July 5, 1921, by the decision of the Caucasian Bureau of the CC RCP (B) all the Nagorno-Karabakh (as an autonomous region) was illegally handed over to Soviet Azerbaijan. The authorities of the latter, however, did not hurry with the release of Nagorno-Karabakh as a regional autonomy. Only under severe political pressure of the Soviet leadership of Armenia and the Soviet Transcaucasian Federation (in particular A.

Myasnikyan) Soviet Azerbaijan in the beginning of July 1923 finally declared the formation of the Autonomous Oblast of Nagorno Karabakh (AONK) which, according to the new Soviet Constitution of 1937, was renamed Nagorno-Karabakh Autonomous Region (NKAR). However, in violation of the above-mentioned decision of the Caucasian Bureau, the autonomous region has been allocated only from the part of Nagorno Karabakh the rest of its territory artificially formed «Azerbaijani» districts - Kurdistan, Gyandja (Arm. Gandzak), Kelbajar (Arm. Karvachar), Jabrayil (Arm. Jirakn), Lachin (Arm. Berdzor) and others. Thus, from the entire territory of Mountainous Artsakh (Nagorno Karabakh), which was about 8.000 square km., in 1923-1924 Azerbaijani authorities cut about 3.000 square km. In this case, however, the territorial losses were not over. According to the Constitution (the Regulations) of AONK of 1924, where were mentioned also towns and villages included in its territory, the total area was up to 5.000 square km. However, in subsequent years, the Azerbaijani authorities periodically cut off from it about 600 square km territory with a predominantly Armenian population which was incorporated to neighboring areas. As a result - at the end of the 1930s the territory of Nagorno-Karabakh was only 4.400 square km. Moreover, the NKAR was artificially cut off from Soviet Armenia with which it had had though small (about 6-8 km.) but a common border.

Thus, as a result of the territorial losses in the 1920-1930s NKAR, Soviet Armenia and later its legal successor the Third Republic of Armenia appeared from the strategic perspective in unfavorable conditions. Due to the heroic victory of the Armenians

in the Artsakh Liberation War has been liberated a considerable part of the Armenian territories annexed to Azerbaijan during the Soviet period. They constitute inseparable part of the Artsakh Republic (Nagorno Karabakh).

## ԱՂՅՑՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### Արխիվային սկզբնաղբյուրներ

#### ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1. Միկրոժապավենների հավաքածու (ՄժՀ), № 1, գգ. 2, 7:
2. Ֆ. 1, ց. 1, գգ. 39, 105, 169, ց. 2, գ. 2, գ. 6, գ. 7, գ. 28:
3. Ֆ. 112, ց. 1, գգ. 35, 62, 95, 143, 168, 267, 280, 551, 1412, ց. 2, գգ. 3, 11, 19, 31, 62, 98, 199, 240, 687, 1407, 1412, ց. 3, գգ. 123, 328:
4. Ֆ. 113, ց. 3, գգ. 1, 7, 15, 46, 55, 150, 289, 326, 329, 703, ց. 29, գգ. 1, 3, ց. 39, գ. 50:
5. Ֆ. 114, ց. 1, գգ. 66, 221, 222, ց. 2, գգ. 21, 45, 55, 68, 98, 140, 156:
6. Ֆ. 132, ց. 1, գգ. 299, 437, 444:
7. Ֆ. 146, ց. 1, գ. 48:
8. Ֆ. 1021, ց. 2, գգ. 1154, 1185, 1187:
9. Ֆ. 1022, ց. 3, գ. 272, ց. 5, գ. 367, ց. 8, գ. 330:
10. Ֆ. 1445, ց. 1, գ. 6:

#### բ) Վրաստանի ազգային արխիվ (ՎԱԱ)

11. Ֆ. 607, ց. 1, գգ. 23, 46, 84, 555, 577, 866, 1136, 1149, 1763, 1765, 2270, 2279, 2534:

### Տպագիր աղբյուրներ

1. Բակունց Ա., Երկեր, հտ. 4, Երևան, 1984:
2. Լեզրանի միսիան, փաստաթղթեր, «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1967, N 3, էջ 21-104:
3. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), կազմողներ՝ Զ.Ս. Կիրակոսյան, Ռ.Գ. Սահակյան, Երևան, 1972:
4. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Երևան, 2009:
5. Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման տեղեկատու, Երևան, 2012:
6. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ՝ Գ.Ա. Գալոյանի և Վ.Ն. Ղազարեցյանի, Երևան, 2000:
7. Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմողներ և խմբագիրներ՝ Կ. Խաչատրյան, Հ. Աբրահամյան, Երևան, 2011:
8. Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր - 1922 թ. հունվար), Երևան, 1974:
9. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի ժողովածու), խմբ. Ա. Մնացականյան, Երևան, 1960:
10. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն, թիվ 8, Երևան, 1922:

11. ՀՍԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-11, էջնիաձին, 1921:

12. ՀՍԽՍՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Երևան, 1921, N 5, 1922, N 8:

13. Ղազարխանյան Վ., Այսել Բակունցի գործունեությունը ՀՍԽՍՀ հողժողովուրդատի կոլեզիայում (1925-1928 թթ.), «Բաներե Հայաստանի արխիվների», 1979, N 2, էջ 90-100:

14. Յուզակ Խորհրդային Հայաստանի բնակավայրերի, հրատ. ՀՍԽՍՀ վիճակնավարչության, Երևան, 1923:

15. Арутюнян А., Из истории редемаркации советско-турецкой границы (1973 г.), «Вестник архивов Армении», 2008, N 1, с. 175-196.

16. Азербайджанская сельско-хозяйственная перепись 1921 года. Таблицы: Джеванширский уезд, Баку, 1922.

17. Азербайджанская сельскохозяйственная перепись 1921 года. Итоги по сельским обществам во вновь образованных уездах АССР, Нагорного Карабаха и по тем (основным) уездам, в которых произошли изменения границ, т. III, выпуск XVII, Баку, АзЦСУ, 1924.

18. Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, Составитель Ю. Барсегов, т. 1, Москва, 2002; т. 2, ч. 1, Москва, 2003; т. 2, ч. 2, Москва, 2005.

19. Документы внешней политики СССР, т. III, Москва, 1959.

20. К истории образования Нагорно-Карабахской Автономной области Азербайджанской ССР: 1918-1925: Документы и материалы, Баку, 1989.

21. Казанджян Р.В., К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г., «Вестник общественных наук», Ереван, 1999, N 1, с. 183-187.

22. Казанджян Р.В., К предыстории самоопределения Нагорного Карабаха (с приложением новых документов), Москва, 1997.

23. Кавказский календарь на 1909 г., Тифлис, 1908.

24. Кавказский календарь на 1915 г., Тифлис, 1914.

25. Кавказский календарь на 1917 г., Тифлис, 1916.

26. Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть 3, Москва, 1928.

27. Ленин В.И., Известные документы. 1891-1922 гг., Москва, 1999.

28. Нагорный Карабах в 1918-1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ереван, 1992.

29. Нагорный Карабах в международном праве и мировой политике, документы и комментарий, составитель Ю. Барсегов, т. 1, Москва, 2008; т. 2, Москва, 2009.

30. Сборник действующих договоров, соглашений и конвенций, заключенных РСФСР с иностранными государствами. Выпуск 3, Москва, 1922, № 79.

31. «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране, том 5, 1927 г., Москва, 2003.

32. Социалистическое строительство АССР: Статистический сборник, Баку, 1935.

## Ուսումնասիրություններ

1. Ավդալբեգյան Խ., Հողաշինարարությունը Խորհրդային Հայաստանում 1921-1927 թթ., «Գյուղատնտեսական կյանք», 1927, N 10-11:

2. Ավետիսյան Հ.Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997:

3. Բաբայան Դ., Կարմիր Քրդստան. կազմավորման և լուծարման աշխարհաքաղաքական ասպեկտները, «21-րդ դար», 2005, N 4, էջ 83-106:

4. Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

5. Գեորգեան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Պուրել, 1923:

6. Զոհրաբյան Է.Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:

7. Զոհրաբյան Է.Ա., Նախիջևանյան հիմնահարցը. 1920 թ. մայիս - 1921 թ. հոկտեմբեր, Երևան, 2010:

8. Զոհրաբյան Է.Ա., Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920-1922 թթ.), Երևան, 1979:

9. Թորիկյան Շ., Հայկական հարցը և միջազգային իրավունքը, Բեյրութ, 1976:

10. Խաչատրյան Կ.Հ., Հայ-ոսմական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007:

11. Խաչատրյան Կ.Հ., ՀՍԽՀ սահմանների հարցը 1921 թ. խորհրդաթուրքական հարաբերությունների ոլորտում (Մոսկվայի և Կարսի կոնֆերանսները), «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2010, թիվ 1-2, էջ 36-58:

12. Խաչատրյան Կ., Քաղայան Գ., ՀՍԽՀ տարածքի և սահմանների ձևավորումը (1920 թ. դեկտեմբեր - 1922 թ. սկիզբ), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», թիվ 14, Երևան, 2013, էջ 173-197:

13. Խաչատրյան Կ., ԼՂԻՄ-ի կազմավորումը և նրա տարածքային կորուստները (1920-1930-ական թվականներ), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», թիվ 15, Երևան, 2014, էջ 184-217:

14. Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Հայ-ադրբեջանական տարածքային-սահմանային հնդիքները Անդրկովկասյան Դաշնության օրոք (1922-1936 թթ.), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 16, Երևան, 2015, էջ 222-266:

15. Խուրշուդյան Լ.Ա., Հայաստանի քաժանումը 1920 թվականին, Երևան, 2002:

16. Հակոբյան Ա.Մ., Խորհրդային Հայաստանը Մոսկվայի և Կարսի պայմանագրերում, Երևան, 2010:

17. Հայաստանի ազգային ատլաս, հատոր Բ, Երևան, 2008:

18. Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918-1945 թթ.), Երևան, 2010:

19. Հարությունյան Բ., Հայաստանի պատմության ատլաս, հատոր Գ, Երևան, 2012:

20. Հարությունյան Հ.Մ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996:

21. Հովհաննիսյան Ա., Համազգային կրիզիսը, Երևան, 1926:

22. Ղազախեցյան Վ.Ն., Հայաստանը 1920-1940 թվականներին, Երևան, 2006:

23. **Ղազարյան Վ.Ն.**, Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը 1920-1929 թթ., Երևան, 1975:

24. **Ղազարյան Գ.**, Ակսել Բակունցի մասնակցությունը Ջանգեզուրի գավառի տարածքում հայ-ադրբեջանական սահմանը որոշող հանձնաժողովի աշխատանքներին (1920-ական թվականներ), «Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու)», N 15, Երևան, 2014, էջ 218-226:

25. **Մկրտչյան Շ.Մ.**, Լեոնային Ղարաբաղ. Ադրբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան (1920-1988 թթ.), Ստեփանակերտ, 2003:

26. **Նժդեհ Գ.**, Ազատ Սյունիք, Երկեր: Երկու հատորով, հ. 2, Երևան, 2002:

27. **Ռուբեն**, Ջանգեզուրի պայքարը, «Դրօշակ», 1925, թիւ 5 (դեկտեմբեր), էջ 168-175:

28. **Սահակյան Ա.Լ.**, Հայաստանը Անդրկովկասյան Դաշնության կազմում, Վանաձոր, 2013:

29. **Սարգսյան Ե.**, Ղավաղի գործարք. Հայաստան-Իտալիա-Սովետական-Թուրքիա, Երևան, 1994:

30. **Սիմոնյան Ա.Լ.**, Ջանգեզուրի գոյամարտը (1920-1921 թթ.), Երևան, 2000:

31. **Սուրիասյան Հ.Կ.**, Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը 1921 թ. Մոսկվայի կոնֆերանսին պատրաստվելու շրջանում, «Էջմիածին», 2011, ապրիլ (Դ), էջ 94-105:

32. **Սուրիասյան Հ.Կ.**, Ջանգեզուրի գավառի բաժանումը 1921 թվականին. Ջանգեզուրում Խորհրդային Հայաստանի և Խորհրդային Ադրբեջանի միջպետական սահմանի ձևավորման պատմությունից, «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2014, N 4, էջ 152-159:

33. **Սուրիասյան Հ.Կ.**, Սյունիքը Հայաստանի կազմում պահպանելու խնդիրը Գարեգին Նժդեհի աշխատություններում, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2012, N 2-3, էջ 141-148:

34. **Քաջազունի Հ., Հ.Յ.** Դաշնակցությունը անեյիք չունի այլևս, Երևան, 1994:

35. Армянский вопрос. Энциклопедия, под ред. К.С. Худаяердяна, Ереван, 1991.

36. **Արտյոնյան Ա.**, Из истории редемаркации советско-турецкой границы (1973 г.), «Вестник архивов Армении», 2006, N 1, с. 185-195.

37. Большая Советская Энциклопедия (БСЭ), т. 1, 3, Москва, 1926.

38. Большая Советская Энциклопедия (БСЭ), 2-ое изд., т. 1, Москва, 1949.

39. **Եօրյան Բ.**, Армения, международная дипломатия и СССР, часть I-II, Москва-Ленинград, 1928-1929.

40. **Բужилтан Ա.**, Азербайджанские курды: Гачин, Кельбаджар, Нахкрай. Заметки, Баку, 1932.

41. **Կազանджյակ Բ.Յ.**, К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г., «Страны и народы: Ближнего и Среднего Востока», том XX, Ереван, 2001,

42. **Կազանджյան Բ.**, Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, «Страны и народы Ближнего и Среднего Востока», Ереван, 2002, вып. 21, էջ 105:

43. **Մանասյան Ա.**, Карабахский конфликт: Ключевые понятия и хроника, Ереван, 2005.

44. **Нифталиев И.**, Азербайджанская ССР в экспансионистских планах армян (20-е годы XX века), Баку, 2010.

45. **О'Коннор Т.Э., Г.В. Чичерин** и советская внешняя политика (1918–1930), Москва, 1991.

46. **Орджоникидзе Г.К.**, Избранные статьи, Москва, 1957.

47. **Поляков Ю.А.**, Советская страна после окончания гражданской войны: территория и население, Москва, 1986.

48. **Рубинштейн Н.Л.**, Внешняя политика Советского государства в 1921–1925 гг., Москва, 1953.

49. **Хармандарян С.В.**, Ленин и становление Закавказской федерации 1921–1923 гг., Ереван, 1969.

50. **Цуциев А.**, Атлас этнополитической истории Кавказа (1774–2004), Москва, 2006.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>ԱՌԱՋԱԲԱՆ</b> .....	3
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ</b>	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՅԸ (1920–1922 ԹԹ.) .....	9
1.1. Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը .....	9
1.2. ՀՍԽՀ տարածքն ըստ 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի հայ-ռուսական համաձայնագրի .....	30
1.3. 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերով քեմալական Թուրքիային ու խորհրդային Ադրբեջանին անցած հայկական տարածքները .....	43
1.4. խորհրդային Ադրբեջանի ոտնձգությունները հայկական տարածքների նկատմամբ .....	56
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ</b>	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԴԱՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՈՔ .....	75
2.1. Անդրկովկասյան դաշնության ստեղծումը .....	75
2.2. Հայ-ադրբեջանական տարածքային-տահմանային խնդիրները .....	85
<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ</b>	
ԼՂԻՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ .....	131

3.1. Լեոնային Ղարաբաղի բռնակցումը հայրերդային Ադրբեջանին .....	131
3.2. ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները .....	149
ՎԵՐՋԱԲԱՆ .....	166
РЕЗЮМЕ .....	168
SUMMARY .....	172
ԱՂՔՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....	176

*Կարեն Հաչատրյանի հաշտարդյան, Համո Կարենի Սուքիասյանի,  
Գեղամ Միհրանի Բադալյանի*

**ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲՈՆԱԿՑՈՒՄԸ  
ԹՈՒՐԿԻԱՅԻՆ ԵՎ ԽՍՐՀՐԴԱՅԻՆ ԱՂՐԵՅՁԱՆԵՐՆ  
1920-1930-ՍԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

*Карен Гамлетович Хачотрян, Амо Каренович Сукиасян,  
Гегам Мигранович Бадалян*

**АННЕКСИЯ АРМЯНСКИХ ТЕРРИТОРИЙ ТУРЦИИ И  
СОВЕТСКОМУ АЗЕРБАЙДЖАНУ В 1920-1930-ЫХ ГОДАХ**

*Karen H. Khachatryan, Hamo K. Sukiasyan,  
Gegham M. Badalyan*

**ANNEXATION OF ARMENIAN TERRITORIES TO TURKEY AND  
SOVIET AZERBAIJAN IN THE 1920-1930S**

Համակարգչային ձևավորումը՝ Ե. Աղամյանի  
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպարանակը՝ 160 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՏԻՏՈՒՑ  
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА  
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան փող. 24/4  
RA, 0019, Yerevan, pr. Marshal Baghramyan 24/4  
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan  
<http://www.academ.history.am>